ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՍԻ ՎԵՐՋՆԱԽԱՂԸ

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընթերցողին ներկայացվող սույն գրքում՝ փաստագրական նյութի հիման վրա հեղինակը վերլուծել է այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության Կարսի նահանգում 1919թ. ապրիլ-1920 թ. հոկտեմբեր ժամանակահատվածում և որոնք հանգեցրել են ի վերջո Կարսի կորստյանը և Առաջին հանրապետության անկմանը:

Նշված վերլուծության համար որպես փաստագրական բազա օգտագործվել են դեպքերի ականատեսների ու անմիջական մասնակիցների հուշերն ու գրառումները, հարցի վերաբերյալ մի շարք հեղինակների մինչ օրս հրապարակած հետազոտությունները, ինչպես նաև այն բազմաթիվ արխիվային փաստաթղթերը, որոնք հեղինակի կողմից ուսումնասիրվել են վերջին հինգ – վեց տարիների ընթացքում և ամփոփված են արխիվային փաստաթղթերի հետևյալ հրապարակված ժողովածուներում. ***Վլադիմիր Հարությունյան****, Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920 թթ., փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2014;* ***Վլադիմիր Հարությունյան,*** *1918 թ. Հայ-վրացական պատերազմը (նյութեր և փաստաթղթեր),Երևան, 2014;* ***Վլադիմիր Հարությունյան,*** *Կարսի մարզը Հայաստանի առաջին հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.- հոկտեմբեր 1920թ.), Նյութեր և փաստաթղթեր, Երևան, 2016; Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում (1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, աշխատասիրութեամբ* ***Վլադիմիր Յարութիւնեանի****, Երևան 2018:*

Հղումները ներկայացնելիս մենք անհրաժեշտաբար նշել ենք նախ հիշատակվող փաստաթղթի արխիվային բնագիրը, իսկ այս կամ այն փաստաթղթի վերաբերյալ ընթերցողի հնարավոր որոնումները հեշտացնելու համար բերվում են նաև վերը նշված ժողովածուներում այդ փաստաթղթին առընչվող սպառիչ տվյալները:

Մեկ հանգամանքի մասին ևս. ընթերցողներից ոմանց կարող է թվալ, թե հեղինակը չափից շատ է տեղ տալիս Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյանի հուշերին: Հղումներն այդ աղբյուրի վրա իրոք որ շատ են, բայց դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. նախ այդ հուշագրությունը ընդամենը վերջերս է հանրայնացվել և պարունակում է իրոք մեծաքանակ նոր նյութեր, մյուսը այն է, որ հուշագրությունից մենք վերցրել ենք հիմնականում կոնկրետ փաստեր, որոնք մինչ այս հայտնի չեն եղել և վերջապես, և ամենահիմնականը, հաշվի է առնվել այն իրողությունը, որ այդ հուշերի հեղինակը եղել է Կարսի նահանգում ծավալված բոլոր դեպքերի և իրադարձությունների կիզակետում և դրանց անմիջական մասնակիցը՝ Կարսը Հայաստանի Հանրապետության կազմի մեջ ընդգրկելու առաջին օրվանից, բառացիորեն մինչև վերջին րոպեները:

*  *  *

Իմ պարտք եմ համարում երախտագիտությունս հայտնել պատմական գիտությունների դոկտոր Գևորգ Խուդինյանին, ում համառ հորդորներին անսալով հեղինակը ձեռնամուխ եղավ և իրականացրեց սույն գործը և իրավագետ Մայքլ Բաբայանին՝ մի շարք կարևոր նյութեր և հրապարակումներ տրամադրելու համար: Իմ առանձնակի շնորհակալությունն եմ հայտնում դոցենտ Լևոն Խաչատրյանին՝ արդյունավետ քննարկումների և նյութի շարադրանքի ամբողջ ընթացքում արված քննական ու խմբագրական բնույթի կարևոր դիտողությունների և առաջարկությունների համար:

*ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*Հունիս-սեպտեմբեր, 2018 թ., Երևան*

*Ներածական*

Հարյուր տարի առաջ, 1918-ի մայիս-հունիսին մի խումբ հայ մարդիկ, գնահատելով պատմական իրադարձությունների բերումով ստեղծված նպաստավոր պայմանները, փորձեցին վերականգնել հայկական անկախ պետականությունը: Այդ վեհ գաղափարը, ինչպես հայտնի է, հնարավոր չեղավ կյանքի կոչել և իրագործել մինչև վերջ: Երկուս ու կես տարին դեռ չբոլորած Հայաստանի Հանրապետությունն ընկավ:

Թեև Հայաստանի առաջին հանրապետության կործանումը ֆորմալ առումով թվագրվում է 1920 թ. դեկտեմբերի մեկով-երկուսով, սակայն այդ պետության իրական՝ փաստացի սպանություն-ոչնչացումը իրականացվել էր դրանից դեռևս մեկ ամիս առաջ՝ Կարսի պատերի տակ՝ 1920 թվականի հոկտեմբերի 30-ին՝ բառացիորեն նրա քունքին անարգելք արձակած կրակոցով:

1920 թ. հոկտեմբերի 30-ից հետո **<<Կարս>>** բառը հայերի համար դադարեց կրել նախկին թագավորանիստ վայրի, նույնիսկ զուտ բնակավայրի, կամ էլ ինչ-որ աշխարհագրական վայրի անվանման իմաստ ու նշանակություն: Այդ օրվանից հատուկ անուն **<<Կարս>>** -ը վերածվեց անվանական **<<ԿԱՐՍ>>-** ի: **<<ԿԱՐՍ>>-** ը, անցած հարյուր տարվա ընթացքում, Մեծ Եղեռնից հետո մեզ պատած հաջորդ ամենասոսկալի ազգային աղետի խորհրդանիշն ու մշտական ահեղ հիշեցումն է կատարվածի մասին: Այն՝ Չարենցի ասած *<<ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն>>* է 1920 թ. հոկտեմբերի 30-ից հետո եկած մեր բոլոր սերունդների համար: Եվ դաժան դասը առ այն, թե ինչ է գալիս այն ազգի գլխին, որն ամենայն խորությամբ չի արժեվորում սեփական պետականությունը՝ որպես գերագույն արժեք ունենալու և պահպանելու գաղափարը, իսկ նրանում տարբեր զանգվածներ և հոսանքներ էլ ուղղակի պայքար են տանում այդ անկախ պետականության դեմ, հանուն անձնական ու խմբակային շահերի քանդում են այն և որպես իրենց փրկության ու ապահովության միակ երաշխիք իրենց երկիրը հանձնում են օտարին:

**<<ԿԱՐՍ>>-** ը՝ իր մարդկային ու տարածքային կորուստներով, հայրենազրկումով ու ազգային հոգեբանության ավերումով ու խեղումներով ուղղակի շարունակությունն ու հետևանքն էր Մեծ Եղեռնի: Հենց **<<ԿԱՐՍ>>** ամբողջական երևույթն է իր մեջ ներառել Հայաստանի առաջին հանրապետության բոլոր առումներով ողբերգական ու դղրդալից ավերումն ու փլուզումը: Այն փլուզումը, որը արտաքին ագրեսիայի ծավալման հետ մեկտեղ, ուղղակի հետևանքն էր նաև երկրում ու հատկապես Կարսի նահանգում ամիսներ ընընդհատ ընթացող, սողացող ամենակուլ սոսկալի մի գործընթացի, որի բնութագրման համար բացի դավաճանությունից այլ բառ գտնելը պրակտիկորեն հնարավոր էլ չէ: Դավաճանություն՝ նախ ինքդ քո հանդեպ, դավաճանություն, որով ինքդ, ինքնակամ ստորագրում ես հայրենիքդ քեզանից խլելու, օտարի ձեռքով քեզ ոչնչացնելու համաձայնություն-վճիռը: Հայկական այդ օրերի <<սոդոմ-գոմորի>>, կատարված այդ ողբերգության վերաբերյալ մեզ հասել են

ականատեսների և մասնակիցների տարբեր ու բազմաթիվ վկայություններ և պատումներ: Բայց այդ ողբերգության մասշաբայնությունը, նրա կատաստրոֆիկ հետևանքների ու այդ ամենի իրական ու խորքային պատճառների լուսաբանումը, կատարվածի բացահայտումն ու վերլուծությունը տարիներ շարունակ՝ հիմնականում քաղաքական պատճառներով, հետազոտողների համար հայտնվել էին <<արգելված գոտում>>:

Խորհրդային տարիներին թեմայի փակ լինելը միանգամայն հասկանալի է: Բայց կյանքը ցույց տվեց, որ հետխորհրդային Հայաստանում էլ՝ և ոչ միայն, հայկական միջավայրում դեռևս կան տարբեր անձինք և ուժեր, որոնք ամեն գնով դիմադրում և խոչընդոտում են **<<ԿԱՐՍ>>**-ի վերաբերյալ պատմական ճշմարտությունը վեր հանելուն:

Այն հանգամանքը, որ ընդամենը երկուս ու կես տարվա ընթացքում Կարսը երկու անգամ (1918 թ. ապրիլի 25-ին և 1920 թ. հոկտեմբերի 30-ին) առանց դիմադրության մեր կողմից հանձնվեց թուրքերին[1] և հետագա տասնամյակների ընթացքում գործող այդ յուրատեսակ <<տաբու>>-ի առկայությունը Կարս բերդաքաղաքը ասես պարուրեցին մի յուրատեսակ միստիկ խորհրդավորության թանձր մշուշով՝ նա դարձավ, ասես, յուրատեսակ էզոթերիկ-սակրալ մի վայր, որը, բացի ամենից, դեպի իրեն սկսեց ձգել,- և մինչ օրս էլ շարունակում է ձգել,- նաև արվեստի մարդկանց ուշադրությունը:

Կարսը՝ բերդն ու քաղաքը, գլխավոր գործող հերոսն է մեր գրողներ Եղիշե Չարենցի[2] և Էլլեն Բյուզանդի (Եղիսաբեթ Ստամբոլցյան)[3], ռուս հեղինակ Ալեքսանդր Տոնկոնոժենկոյի[4] , ինչպես նաև թուրք գրող Օրհան Փամուկի[5] վեպերում: Ի դեպ, Կարսի <<մասնակցությամբ>> վերջինիս այդ գործը՝<<Ձյունը>>, արժանացել է գրականության բնագավառում 2006 թ.Նոբելյան մրցանակի:

Շատ հավանական է, որ մի շարք, ինչպես շեշտեցինք՝ զուտ քաղաքական բնույթի պատճառների հետ մեկտեղ, այդ իրադարձություններին վերաբերող հետազոտական

---

[1] Հարկ է նշել, որ ի տարբերություն 1920 թ. հոկտեմբերի 30-ի աղետի, որը զուտ <<հայկական ֆենոմեն>> էր, 1918 թ. ապրիլի 25-ին Կարսն առանց դիմադրության թուրքերին թողնելը Անդրկովկասյան Սեյմի քաղաքական որոշման հետևանք էր: Կարսը պաշտպանող հայկական զինուժը՝ ընդհուպ մինչև շարքային զինվորը, կողմնակից չէին այդ որոշմանը և տրամադրված էին դիմադրել թշնամուն: Օրինակ 3-րդ հրաձգային գնդի զինվորները հրաժարվում էին լքել դիրքերը և հեռանալ ամրոցից, և միայն հրամանատարության ու ազգային կոմիտեի ներկայացուցիչների հորդորներից հետո նրանք թողեցին դիրքերը՝ սպառնալիքներ թափելով այդ դավաճանության հեղինակների հասցեին: Տե՛ս Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. (Документы и материалы), сост. **Х.А.Бадалян,** Ереван, 1970 г. сс. 54-68 (այսուհետ՝ **Х.А.Бадалян,** Из истории иностранной интервенции…):

[2] Տե՛ս **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու 4 հատորով, հ.4, Երևան, 1987:

[3] Տե՛ս **Էլլեն Բիւզանդ**, Կարսը և ախպեր Աշօն, Թեհրան, 1962:

[4] Տե՛ս **А.Тонконоженко**, Карсъ:проклятая память, Москва, 2010.

[5] Տե՛ս **Օրհան Փամուկ**, Ձյունը, Երևան, 2009:

պասիվությունը պայմանավորված է նաև որոշակի հոգեբանական բնույթի արգելակող գործոններով, քանի որ <<**ԿԱՐՍ**>>-ի պարագայում չափազանց դժվար է հստակ առանձնացնել ու մատնանշել, կատարվածի համար թիրախավորել միայն կոնկրետ ինչ-որ մի անձ, կամ միայն անձանց որոշակի մի խումբ: Ի վերջո, <<**ԿԱՐՍ**>>-ի մեղքը, պատկերավոր ասած, մեր բոլորի, ամբողջ հայ ժողովրդի վզին է. ինչ-ինչ պատճառներով թերանում է իշխանությունը և չի կարողանում իրականացնել երկրի էֆեկտիվ կառավարումը, բարոյալքվում է, չի ցանկանում իր պետությունը պաշտպանել բանակը, բացահայտ հակապետական քայլերի են դիմում հայ բոլշևիկները, իսկ այդ ամենի առկայության պարագայում, ժողովուրդն էլ իր կողմից այդ ամենը ասես <<լրացնում ու ամբողջացնում է>>՝ դրսևորելով բացահայտ հայրենաժխտում ու հայրենամերժում և միայն դրանց մեջ է սկսում տեսնել փրկության և հետագա գոյատևման գրավականն ու երաշխիքը: Իսկ նման դեպքում արդեն վերջն է գալիս ոչ թե զուտ օրվա իշխանության, այլ առհասարակ, ամենքի և ամեն ինչի: Եվ ստանում ենք այն, ինչի անունն է <<**ԿԱՐՍ**>>: Հիշենք Նժդեհի խոսքերը Կարսը հանձնելու կապակցությամբ. *«Կարսի ամոթը ՀՀ կառավարությանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդի: Չափվում են, բախվում են բանակները, բայց հաղթում կամ պարտվում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլ բովանդակ հայությունը, հայ ժողովրդի իր ամբողջության մեջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին:»*[6]:

Ճիշտ է, ոչ մեկը չի պատրաստվում հայտարարել, թե ինչ-ինչ պայմաններում այդօրվա Հայաստանը կարող էր հանկարծ ի վիճակի լինել կասեցնել բոլշևիկյան Ռուսաստանի ռազմա-քաղաքական էքսպանսիան տարածաշրջանում և թույլ չտալ երկրի խորհրդայնացումը: Կամ էլ հանկարծ թերագնահատել, առավելևս, անտեսել այն օրերին մեզ համար չափազանց անբարենպաստ և մահացու վտանգներ պարունակող առկա արտաքին մարտահրավերները: Առաջին հերթին՝ անկախ հայկական պետականության ոչնչացմանը միտված քեմալա-բոլշևիկյան դաշինքը: Ի հարկե, ոչ: Բայց… Պարտվել էլ կա, պարտվել էլ… Ադրբեջանն ու Վրաստանն էլ խորհրդայնացան, կորցրին իրենց անկախությունը: Սակայն ոչ այնչափ մարդկային ու տարածքային կորուստների գնով, ինչպես որ հայությունը: Հակառակը՝ տարածքային առումով մեր այդ հարևանները խորհրդայնացումից հետո իրականում ունեցան զգալի ձեռքբերումներ: Ընդորում՝ հենց հայերի հաշվին:

Մեր այդօրվա կորուստների պատասխանատվության շրջանակում կա <<հատուկ>> մի հատված, որի համար պատասխանատու ենք զուտ մենք ու միայն մենք՝ հայերս: Եվ միայն այդ՝ սեփական մեղավորության փաստն ընդունելու, հասկանալու և գիտակցելու միջոցով է, որ հնարավոր կլինի բացառել նոր <<**ԿԱՐՍ**>> -երի ի հայտ գալն ու կրկնվելը այսօր և ապագայում:

---

[6] **Գարեգին Նժդեհ**, Որդիների պայքարը հայրերի դեմ, Երևան, 2015, էջ 21:

Այդ առումով կարելի է ասել, որ 1920 թ. հոկտեմբերի 30-ին **ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ** մի հայելի դրեց հայ ժողովրդի առջև և ասաց. <<Հա՛յ ժողովուրդ, նայի՛ր այս հայելու մեջ, տե՛ս քո պատկերը և ճանաչի՛ր ինքդ քեզ>>: Իսկ հայ ժողովուրդն արդեն հարյուր տարի է՝ համառորեն խուսափում է նայել այդ հայելուն, առերեսվել ինքն իր հետ, բացահայտել ու խոստովանել Կարսի պատերի տակ կատարվածի էությունն ու ճշմարտությունը: Ահա մեկ այլ ժամանակակցի և դեպքերի անմիջական մասնակցի կարծիքը կատարվածի վերաբերյալ. *<<Իզուր են շատերը ձգտում տեսնելու մեղադրեալների նստարանի վերայ անհատներ, առանձին մարդիկ և հայկական կառավարութիւնը: Այդ տեղը պատմութիւնը վերապահած կը լինի հայ հասարակութեան համար, ի դէմս նորա ինտելեգենցիայի… >>*[7]:

Մեր հանճարեղ ողբերգակ Վահրամ Փափազյանը, ներկայացնելով Շեքսպիրի <<Համլետ>>-ի իր ընկալումը, բացատրում է ընթերցողին. <<… *տեսնելիս կամ կարդալիս այս գործը ընթերցողը կամ հանդիսատեսը ոչ թե տեսնում է մեկին, որ ինքը չէ, այլ ինքն իրեն, ուզի այդ, թե չուզի, միևնույնն է>>*[8]: Իսկ Հովհաննես Թումանյանը 1921 թ. դեկտեմբերի 9-ին Ավետիք Իսահակյանին ուղղած իր նամակում գրում է. *<<…Ես չեմ ուզում եւ չեմ կարող երկար ու բարակ գրել մեր երկրից, թեեւ դու հարցնում ես: Կարճ ասեմ. մենք թե՛ դրսից եւ թե՛ ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես մենք: Մենք եմ ասում, եւ սրա մեջն է ճշմարտությունը: Մի մասը՝ խաչագող սրիկաներ, մի մասը՝ գողեր ու ավազակներ, մի մասը՝ ապիկար թշվառականներ, եւ չերեւաց մի բազմություն, գոնե մի խմբակ, որ վերածնվող երկրի շունչը ու բարոյական կարողությունը հայտնաբերեր: Էսքան աղետների ու պարտությունների մեջ ո՛չ մի մեղավոր չերեւաց, ո՛չ ոք ոչ պատասխանի կանչվեց, ոչ պատասխան տվեց: Եվ շարունակվում է. այժմ էլ նույն մարդիկը, նույն ճանապարհներով…Եվ ոչ մեկը գոնե անձնասպան չեղավ, որ ապացուցաներ, թե գոնե ամոթ ու խղճմտանք կա էս մարդկանց մեջ կամ էս ժողովրդի մեջ: Բայց ես ինչ եմ ասում-չկարողացան գոնե վշտանալ կամ վշտացած երեւալ: Բայց ավելի լավ է թողնենք: Կտեսնվենք, կխոսենք…>>*[9]:

---

[7] Կարսի մարզը Հայաստանի Հանրապետութեան կազմում (1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, աշխատասիրութեամբ **Վլադիմիր Յարութիւնեանի**, Երևան, 2018 (այսուհետ՝ Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը …), էջ 540:

[8] **Վահրամ Փափազյան** , Երկեր հինգ հատորով, հ. 4, Երևան, 1983, էջ 5:

[9] **Հովհաննես Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու, հ.10, Երևան, 1999, էջ 408: Ինչ վերաբերում է նրան, որ <<… *ոչ մեկը գոնե անձնասպան չեղավ…*>>, ապա հայտնի է, որ կոնկրետ Կարսի անկման ժամանակ ինքնասպան են եղել հայկական բանակի հետևյալ սպաները. 1-ին գնդի հրամանատար, գնդապետ Մազմանյանը, Սեպուհի (4-րդ) բրիգադի շտաբի պետ, հազարապետ Չիլինգարյանը և մարտկոցի հրամանատար, գլխապետ (կապիտան) Բագրատունին. տե՛ս **Գէորգ Եազըճեան,** Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Երևան, Բ. հր., 2009, էջ 11: Հավելենք, որ **Խաչիկ Դաշտենցն** իր <<Ռանչպարների կանչ>>-ում խոսում է նաև բերդապետ, գնդապետ Մելիք-Հովսեփյանի ինքնասպանության մասին: Նույն սպայի ինքնասպանության վերաբերյալ տե՛ս նաև **Հրայր Իկիլիկյան**, Վերելքի մեջ է իմաստը կյանքի, Երևան, 2011, էջ 192:

Այնպես որ, մարդկային էությունը իր բոլոր նրբերանգներով՝ վեհ ու բարձրադիր առաքինությունից մինչև անպատկերացնելի ցածրության նենգություն, ամեն մի կոնկրետ դեպքում էլ, լինի դա սիրային դրամա, թե քաղաքական, կամ ռազմական ասպարեզ, ըստ էության, դրսևորվում է նույն ձևով: Եվ պատմությունն, ավաղ, այնպես կամեցավ, որ մեր մեջ եղած պահի ամբողջ նեգատիվը գերխտացված ձևով դրսևորվեց ու պայթեց Կարսի պատերի տակ:

Որպես երևույթ **<<ԿԱՐՍ>>**-ը չափազանց խորքային՝ ազգի էթնոհոգեբանության արմատներն ու հիմքերը շոշափող, ընդմիշտ աղաղակող, անողոք ու չներող խորհրդանիշն է հարյուր տարի առաջ մեր ներսում ծավալված այն դեպքերի և իրադարձությունների, երբ, ինչպես վերը նշվեց, պետական իշխանությունը արդեն անկարող է դառնում կառավարել ու վերահսկել իրեն ենթակա կառույցները, երբ պետությանն ու ժողովրդին պաշտպանելու ուղղակիորեն պարտավորված բանակ կոչվող կառույցը այդպիսինից վերածվում է ձեռքին զենք ունեցող կամազուրկ ու բարոյալքված, խուճապահար փախչող, միայն թալանի ընդունակ ու թշնամուն գերի հանձնվելու պատրաստ տղամարդկանցից բաղկացած մի խառը զանգվածի, երբ կիսաբուրժուա-կիսադախլչիները ամեն քայլափոխում ընդգծում են, որ իրենց խավի համար գոյություն չունեն ոչ ազգ, ոչ հայրենիք, ոչ պետություն, իսկ ժողովուրդն էլ իր հերթին սկսում է բացահայտորեն արտահայտել ու դրսևորել իր մեջ բույն դրած հայրենաժխտումն ու հայրենամերժումը, համոզելով ինքն իրեն, որ այդ պահին հենց նման կեցվածքն է միայն, որ կարող է ապահովել և երաշխավորել իր փրկությունն ու անվտանգությունը: Այդ չափազանց <<բարենպաստ>> ներքին ֆոնի առկայության պարագայում էլ՝ <<ճիշտ ժամանակին ու ճիշտ վայրում>> խաղի մեջ է մտնում արդեն արտաքին ավերիչ ուժը և այդ ամբողջը միասին հանգեցնում է հերթական աղետի՝ իր հերթական կոտորածով ու կորուստներով, հերթական հայրենազրկումով:

Ի վերջո, ինչ է կատարվել Կարսում: Ըստ մեզ հասած մի շարք ականատեսների, ժամանակակիցների և մասնակիցների հուշերի[10] և հետազոտող հեղինակների գործերի[11], մակերեսային ու տեսանելի հատվածներով պատասխանը միանգամայն պարզ է ու միարժեք. Կարսի ուղղությամբ տեղակայված հայկական բանակը հրաժարվել է կռվել քեմալական զորքի դեմ և գերի է հանձնվել իր բարձրագույն հրամանատարության գլխավորությամբ՝ <<ձեռքի հետ>> գերի գցելով նաև մի քանի

---

Այդ նույն օրերին ռազմաճակատի Շարուրի հատվածում, տեսնելով, որ իր զորամասի զինվորները առանց դիմադրության անձնատուր են լինում իրենց ուղղությամբ արշավող թուրքերից և բոլշևիկներից կազմված ջոկատին, ինքնասպան է լինում հայկական բանակի փոխ-գլխապետ (շտաբս-կապիտան) Մարգար Սարգսյանը, տե՛ս **<<Ռազմիկ>>** շաբաթաթերթ, 29 նոյեմբերի, 1920 թ., թիվ 29:

[10] Կարսի անկման վերաբերյալ հուշերի համեմատաբար ամբողջական ցանքը տե՛ս, **Գէորգ Եազըճեան**, նշվ. աշխ. էջ 15-22; տե՛ս, նաև Հայկական ճարտարապետության ուսումնասիրման հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, Հուշագրական ժառանգություն, Կարսի անկումը, Երևան 2011, էջ 95-161; **Հրայր Իկիլիկյան**, նշվ.աշխ., էջ 180-208:

[11] Բացի նշվածներից տե՛ս, օրինակ, **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, Հատոր IV, Երևան, 2016, էջ 277-342:

երևելի պետական, ազգային ու եկեղեցական գործիչների: Դրանք կատարվածին առընչվող փաստերն են, իսկ հարցերի հարցը մնում է այն, թե ինչն է եղել պատճառը, որ հայկական բանակը այդ օրերին ռազմաճակատի հենց Կարսի հատվածում <<այդ օրի էր հասել>>[12]: Ի վերջո, նման բաները <<հենց այնպես, իրեն-իրեն>> չեն լինում: <<**Ռազմիկ**>> շաբաթաթերթը այդ օրերին իր խմբագրականում շատ հստակ հարցադրում էր անում.<<*Ի՞նչ է պատահել Ղարսի զորախմբին*>>[13]:

Երբ անդրադարձ է կատարվում 1920 թ. հոկտեմբերի 30-ին Կարսը թուրքերին հանձնելու փաստին, սովորաբար թվարկվում են դրա մի շարք պատճառներ: Ընդորում, անխտիր բոլոր հեղինակների մոտ պարտադիր մատնանշվող պատճառներից մեկը դա Կարսի մարզի քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև եղած խիստ լարված փոխհարաբերություններն են, ինչը, այլ պատճառների հետ համատեղ հանգեցրել է այդ աղետին: Ամենևին մտադրություն չունենալով կասկածի տակ դնել, կամ էլ անգամ չնչին չափով թերագնահատել այլ հեղինակների հետազոտությունների արժեքը, մենք այն կարծիքին ենք, որ այդ անզիջում, անհանդուրժող և հաշտության որևիցե եզրեր ոչ միայն չենթադրող, այլ դրանք միարժեքորեն բացառող այդ դիմակայությունն ու բացահայտ հակամարտությունն էր այն հիմնական առանցքը, որի շուրջ պտտվում էին մյուս բոլոր մեծ ու փոքր պատճառները, որոնք, ըստ էության ծնունդն ու հետևանքն էին այդ հիմնական պատճառի: Պատճառի, որը, մեր ընկալմամբ, ոչ թե մի անախորժություն էր, որ ծագել էր քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաների բնավորությունների անհամատեղելիությունից, կամ էլ դրսևորվում էր որպես պարզունակ մի պաշտոնակոիվ, կամ վերադասի աչքում ավելի լավը երևալու ձգտում: Ամենևին. փաստերն ու դրանց ուսումնասիրությունը մեզ բերել են այն համոզման, որ Կարսի մարզում հակամարտությունը քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև շատ ավելի խորքային էր և ուներ, եթե կարելի է այդպես արտահայտվել, պատմական այդ պահին բնորոշ՝ հայեցակարգային և իրավիճակի՝ տարբեր քաղաքակրթական ընկալմամբ պայմանավորված արմատներ, պատճառներ և բնույթ: Այն է՝ թե կողմերից որ մեկը ինչպիսին էր տեսնում Կարսի նահանգը հայկական պետության կազմում, որպես ինչ էր ընկալում այդ տարածաշրջանը և հայկական պետություն ասածը ինքն իրենով, առհասարակ և, ըստ դրան էլ, ինչպես էր կառուցում իր գործելակերպն այնտեղ:

Մենք այստեղ զերծ կմնանք Կարսի բուն անկման տեսարանները հերթական անգամ նկարագրելուց, քանզի դրանք ամենայն մանրամասներով նկարագրված են վերը նշված մի շարք հեղինակների հուշերում: Պարզապես, մեկնելով մեր՝ վերը բերված

---

[12] Մենք շեշտում ենք <<*հենց Կարսի հատվածում*>>, քանի որ այդ նույն օրերին, օրինակ, նույն հայ-թուրքական ռազմաճակատի Սուրմալուի հատվածում Դրոյի գլխավորած զորաջոկատը հետ մղեց քեմալական զորքի հարձակումը և լիովին վերականգնեց հայկական վերահսկողությունը Սուրմալուի գավառում:

[13]Տե՛ս **<<Ռազմիկ>>** շաբաթաթերթ, 8 նոյեմբերի 1920 թ., թիվ 26:

տեսակետից, մենք կփորձենք տվյալ աշխատանքի շրջանակներում ընթերցողին ներկայացնել և ամփոփել այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք ծավալվել են Կարսի մարզում 1919թ. ապրիլից մինչև 1920 թ. հոկտեմբերի վերջը, երբ մարզը գտնվել է Հայաստանի Հանրապետության կազմում, և որոնք, ի վերջո, հանգեցրել են <<ԿԱՐՍ>> կոչվող համազգային աղետի: Այն է՝ թշնամուն առանց դիմադրության հզոր ամրություններով բերդաքաղաքի հանձնմանը և, որպես դրա հետևանք՝ Հայաստանի առաջին հանրապետության կործամնանը:

## *1. Հայաստանի Հանրապետության Կարսի նահանգը*

Մուդրոսի զինադադարից հետո Հայաստանի ձեռնարկած քայլերը՝ միտված իր պետական սահմաններն ընդլայնելու և մարդկային և այլ ռեսուրսներով համեմատաբար հարուստ հայկական Ջավախքը, Լոռին և Ղարաբաղը իր կազմի մեջ ներգրավելու ուղղությամբ, կտրականապես մերժվեցին ու ճնշվեցին անգլիացիների կողմից: Փոխարենը 1919-ի գարնանը Հայաստանին հնարավորություն տրվեց տիրանալ սակավահայ Նախիջևանին և հայաթափված Կարսի մարզին: Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմի մեջ փաստացի ընդգրկվեց 1919-ի ապրիլին և իր նշանակությամբ բոլոր առումներով հանդիսանում էր այդօրվա հայկական պետության համար հատուկ շրջան:

Կարսը՝ իր ռազմավարական դիրքի շնորհիվ միշտ էլ հանդիսացել է այն տարածքը, որը ձեռք գցելու համար պատերազմներ են մղել և պարբերաբար այն տիրակալել են տարածաշրջանի հզորները. Իրանը, Օսմանյան ու Ռուսական կայսրությունները: Կարսին տիրացողը միշտ էլ հզորացել է այս տարածաշրջանում, կորցնողը՝ էապես թուլացել: Եվ ահա Կարսի մարզը, որին տիրանալու համար օտարներն այդքան զոհեր են տվել ու այդքան արյուն թափել, իր կարևոր ռազմավարական նշանակությամբ, իր հզոր ամրոցային պաշտպանական համալիրներով, կուտակած ու պահեստավորված հսկա միջոցներով և բնական զանազան պաշարներով, մեծածավալ ու բազմապիսի հնարավորություններով ու ռեսուրսներով [14] հարյուրամյակներ հետո վերադարձվում էր հայությանը: Եվ ոչ թե պարզապես վերադարձվում, այլ միացվում էր նորաստեղծ ու նորանկախ հայկական պետությանը:

Ինչպես էին օգտագործելու հայերը այդ ձեռքբերումը, հայերի <<հազովն էր>> արդյո՞ք կայսրությունների երազանք հանդիսացող այդ բերդաքաղաքը, կարողանալու էին արդյոք հայերը պահել այն իրենց ձեռքում, իրենց նորանկախ պետության հզորացմանը ծառայեցնել նրա հնարավորությունները և չզիջել այն հերթական անգամ օտարին:

Ռազմա-քաղաքական տեսանկյունից Կարսը հայկական պետության համար պետք է ապահովեր հետևյալ երկու կարևորագույն խնդիրների իրականացումը. մի կողմից նա պետք է հանդես գար որպես պատվար և հուժկու պաշտպանական գոտի թուրքական կողմից հնարավոր հարձակումը կասեցնելու, թշնամուն կանգնեցնելու, հետ մղելու և հակահարձակման անցնելու համար, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության համար Կարսը պետք է հանդիսանար այն ռազմական հզոր ու ապահով պլացդարմ-հենադաշտը, որի միջոցով պետք է իրականացվեր հայկական

[14] Նշենք թեկուզ զուտ այն հանգամանքը, որ անկախության հռչակմանը հաջորդաց վեց ամիսների ընթացքում Հայաստանում սովից ու համաճարակներից մահացել էր մոտ 180000 մարդ և բերրի վարելահողերով ու առատ արոտներով հայտնի այդ մարզում՝ գյողատնտեսությունը նույնիսկ պարզունակ բնատնտեսության կացութաձևով վարելու պայմաններում որոշ չափով հնարավոր կլիներ մեղմել սովի սարսափները:

բանակի զորաշարժը դեպի արևմուտք, ինչի շնորհիվ էլ պետք է ապահովվեր հայկական պետության տարածումն ու ընդլայնումը դեպի Արևմտյան Հայաստան՝ դեպի Հայաստանի Հանրապետությանը այդ օրերին միջազգայնորեն երաշխավորված միացվելիք արևմտահայ գավառները:

Դեպքերը Կարսի մարզում այնպիսի ընթացք էին ստացել, որ նախորդ չորս տասնամյակում Կարսին տիրապետողները՝ ռուսները, իրենց կայսերական նպատակներին համահունչ, ժամանակին շատ լավ հոգացել էին Կարսի մասին և քաղաքն ու ամրոցը հասցրել էին, ինչպես ասում են, պատշաճ վիճակի: Նախ, իրականացված անհրաժեշտ աշխատանքների շնորհիվ, իր պաշտպանական հզորությամբ Կարսը այդ օրերին համեմատվում էր Եվրոպայում ֆրանսիական Վերդեն և լեհական (հետո՝ավստրոհունգարական) Պերեմիշլ ամրոցների հետ, իսկ Ռուսական կայսրության տարածքում նա համարվում էր երկրորդը Կրոնշտադտից հետո[15]: Չմոռանանք, որ Կրոնշտադտը դա կայսրության մայրաքաղաք Պետերբուրգը պաշտպանող ամրոցն էր: Ահա թե ինչպես է բնութագրում Կարսի ամրոցը Ստեփան Ղորղանյանը, որը Առաջին աշխարհամարտի օրերին եղել է Կարսի զինվորական շրջանի կառավարիչը, իսկ Առաջին Հանրապետության օրոք՝ Կարսի քաղաքացիական նահանգապետը. *<<…Կարսի շուրջը սփռված մի քանի տասնեակ ամրութիւնները, առաջաւոր դիրքերը, խրամատները գիտութեան վերջի խօսքն էր: Այդ ամրութիւնները լուսաւորված էին էլեկտրականութեամբ, նոցանից ամէն մէկը ունէր իր ավտոմոբիլը, հեռագրագիծը, հեռախօսը, պրոժեկտորը, երկաթուղու սուղ գիծը ձիաքաշով ռազմամթերք մատակարարելու համար, ջրանցք և բոլոր կենսական և ռազմական յարմարութիւնները>>*[16]:

Առաջին աշխարհամարտի առաջին իսկ օրերից Ռուսաստանը սկսեց կյանքի կոչել Արևմտյան Հայաստանը այս անգամ արդեն անվերադարձ նվաճելու և գաղութացնելու ծրագիրը, որը շատ մանրամասն ու կատարյալ ձևով մշակել էր այդ շրջանում Կովկասյան ռազմաճակատի փաստացի հրամանատար գեներալ Ն.Ն. Յուդենիչը[17]: Այդ ծրագրի իրականացման համար, որի հիմնական բաղադրիչը Արևմտյան Հայաստանում Եփրատյան կազակություն հիմնելն էր, ռուսական իշխանության օրոք, մինչև 1917 թ. վերջը, Կարսում կուտակվել էին ռազմական գործողություններ վարելու, տնտեսական գործունեություն ծավալելու, շնարարություն իրականացնելու, ինֆրակառուցվածքներն ընդլայնելու և նորերը գործարկելու, մարդկային հոծ զանգվածներ ընդունելու, տեղավորելու, սպասարկելու

---

[15] Տե՛ս Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 202:

[16] **Նույն տեղում** , էջ 457:

[17] Տե՛ս **А.М.Погосян**, Карсская область в составе России, Ереван, 1983, (այսուհետ՝ **А.М.Погосян**, Карсская область… ), էջ 123-129; **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը Հայաստանի առաջին հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.- հոկտեմբեր 1920 թ.),Նյութեր և փաստաթղթեր, Երևան, 2016, (այսուհետ՝ **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը… ) էջ 48-49:

և նրանց տեղաշաժն ապահովելու համար նախատեսված միջոցների անասելի քանակի պաշարներ: Դրանց ծավալն այնքան ահռելի էր՝ եթե չասենք ֆանտաստիկ, որ ռուսաստանյան հեղափոխական խառնաշփոթը և թուրքերի մեկամյա անխնա թալանը (1918, ապրիլ - 1919, ապրիլ) էապես չէին ազդել այդ պաշարների քանակի վրա. *<<Ակամայ ապշում, զարմանում ես յեղափոխական ծափերի տակ երկու տարի աւեր, երկու տարի անխնայ թալան, պատերազմի արհարուիրք, բայց երկրի հարստութիւնը դարձեալ ծով, դարձեալ անչափ ու անհամար… Կարսի և Սարիղամիշի զինվորական պահեստները մեքենաների, տեխնիկ գործիքների և շինութեան բազմատեսակ նիւթերի այն մեծ շտեմարաններն էին, որ ամբարում էին Թիւրքաց Հայեաստանի ապագայ ռուս գաղութների համար պէտք պարագաները: Գալով բուն ռազմամթերքին, չափազանցութիւն չի լինի եթէ ասելու լինեմ, որ այդ մասում ոչ ծայր կար, ոչ հաշիւ…>>*[18]:

Ռուսական տիրապետության օրոք բարեկարգվել և էապես ընդլայնվել էր նաև մարզի ճանապարհային ցանցը: Ճանապարհային ցանցի խտությամբ Ռուսական կայսրության տարածքում Կարսի մարզը զիջում էր միայն Լեհաստանին: Միաժամանակ Կարսի մարզը բավականին հարուստ տարածք էր, և է, իր բնական ռեսուրսներով, ինչը՝ վերը նշված ձեռակերտ նվաճումների ու կուտակած նյութական պաշարների հետ համատեղ, մարզը դարձնում էր իրոք որ բոլոր առումներով երկրի կարևորագույն մի շրջան՝ոչ միայն ռազմա-քաղաքական նշանակության, այլ նաև տնտեսական ներուժի տեսակետից. *<<Այսպէս թէ այնպէս, Կարսի նահանգի գրաւումով մենք ժառանգում էինք ոչ միայն մի գեղեցիկ, ալպիկ տնտեսութիւն, ոչ միայն հարուստ անտառներ, աղահանք, քարածուխ և այլ հանքեր, մեզ վիճակվում էր ստանալ և այն մեծ հարստութիւնը, որ ռուս պետութիւնը, ընթացք տալով իր ձգտումներին դէպի արևելք, յիսուն տարի շարունակ տենդօտ և առատալից ամբարել և կուտակել է Կարսի նահանգում: Այդ այն մեծաքանակ և անգին նիւթերն էին, որոնցով մենք կարող էինք սկսել երկրի վերաշինութիւնը>>*[19]:

Կարսի կարևորության գիտակցումն այնքան մեծ էր, որ, ըստ որոշ ժամանակակիցների *<<Երևանը, կարծես, մնում էր ստվերում և այստեղ ու այնտեղ սկսում են խօսել Կարսը մայրաքաղաք դարձնելու մասին>>*[20], իսկ այդ օրերի մի հոդվածագիր էլ շեշտում էր, թե *<<… Կարսի նահանգը ամենամեծ անհրաժեշտությունն է մեր պետական-ազգային գոյության համար…>>*[21]:

Այս ամենի հետ մեկտեղ հայկական իշխանությունը ի դեմս Կարսի մարզի ստացավ նաև մեկ այլ ժառանգություն՝թեև նույնպես մեծածավալ, բայց բավականին անհարմար և բավականին վտանգավոր. 1919-ի գարնանը Կարսի մարզում ըստ էության, իսպառ բացակայում էր հայ տարրը[22], իսկ մարզում այդ պահին բնակվող

---

[18] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…,էջ 68:
[19] **Նույն տեղում** էջ 69, 74,75:
[20] **Նույն տեղում** էջ 23:
[21] **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…էջ 101:
[22] Տե՛ս **Նույն տեղում** էջ 56,86:

ռուսները, հույները և տարբեր էթնոսներից բաղկացած մահմեդականությունը ընդգծված թշնամաբար էին տրամադրված հայկական պետական իշխանության և, առհասարակ, հայկական անկախ պետականության նկատմամբ:
Մահմեդականության շրջանում շատ ուժեղ էր թուրքական և ադրբեջանական գործակալական ցանցերի ազդեցությունը[23]: Տեղի բնակչությունը՝ տեղական չափանիշներով, բավականին ունեվոր էր և հարուստ, ուստիև հայկական իշխանությունը բավականին հմտություն ու ճկունություն պետք է ցուցաբերեր այդ զանգվածի հետ <<լեզու գտնելու>> համար: Հայկական իշխանության ազդեցությունը թուլացնելու և առհասարակ, նրա վարքը նսեմացնելու նպատակով թուրքական և ադրբեջանական գործակալները մշտապես հրահրում էին տեղի այլազգիներին կազմակերպել զանազան <<ինքնավարության մարմիններ>>, <<ազգային խորհուրդներ>> և պետական իշխանությանը չենթարկվելու և նրա աշխատանքը կաթվածահար անելու այլ ձևեր՝ ընդհուպ մինչև զինված ապստամբություն[24]:

Միանգամայն հասկանալի է, որ բոլոր առումներով մեծ ներուժ պարունակող, իրոք կարևորագույն, բայց միաժամանակ բազմաթիվ հակասություններով և ռիսկերով հագեցված, պետությանը նոր միացված այդ տարածաշրջանը հնազանդեցնելու-հպատակեցնելու և, ինչպես այսօր կասեն, օրինական դաշտ բերելու և պետության մնացած հատվածի հետ ինտեգրելու համար անհրաժեշտ էր նախևառաջ տեղում կազմակերպել և ունենալ իշխանության ուժեղ մարմին, արդյունավետ աշխատող իշխանական կառույցներ, որոնց միջոցով պետք է իրականացվեր պետության նախատեսած ծրագիրը մարզում:
Հաշվի առնելով մարզի յուրահատկությունն ու կարևորությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը Կարսի մարզին առանձնակի վերագրեց նահանգի կարգավիճակ[25] և նահանգում ստեղծեց իշխանության երկու թևեր. քաղաքացիական և զինվորական:
Էքստրեմալ պայմաններում, որոնցում գտվում էր այն օրերին Կարսի մարզը և, առհասարակ, ամբողջ Հայաստանի Հանրապետությունը, չափազանց կարևոր նշանակություն էին ստանում անձի գործոնը, անհատի դերակատարումը: Այնպես որ, քննարկվող հարցի շրջանակներում ակնհայտ անհրաժեշտություն է անդրադառնալ նախ նահանգում  իշխանական բուրգի գագաթում կանգնած անձերին և, համապատասխանաբար, նրանց գլխավորած ու ղեկավարած իշխանական կառույցների գործունեությանը:

---

[23] Տե՛ս **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…էջ.50-56,89-98; **Ռուբէն**, Հայ հեղափոխականի մը յիշատակները, հ.7, Թեհրան, 1982, էջ 210-212:
[24] Տե՛ս **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…էջ 89-102; Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ (ֆ) 200, ցուցակ (ց)1,գործ (գ) 353, թերթ (թ) 109 (տե՛ս նաև **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…էջ 320,321):
[25] Հայաստանի Հանրապետությունում ամբողջ երկրով նահանգային սկզբունքով վարչա-տարածքային բաժանումն իրականացվել է ՀՀ կառավարության 1920 թ. մայիսի 5-ի որոշմամբ:

## *2. Կարսի նահանգի քաղաքացիական իշխանությունը*

Եկեք չխուսափենք կրկնությունից և մեկ անգամ ևս՝ հստակ և ավելի ընդարձակ ներկայացնենք Հայաստանի բարձրագույն իշխանության ծրագրերն ու անելիքները երկրին նոր միացված այդ տարածաշրջանում: Այդօրվա վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը հետևյալ բովանդակությամբ է ձևակերպել ու շարադրել ՀՀ կառավարության խնդիրներն ու անելիքները Կարսի նահանգում. <<*Չորս գլխաւոր նպատակներ կը հետապնդէր մեր իշխանութիւնը Կարսի նահանգին մեջ: Առաջին՝ օգտագործել ցարական կառավարութենէն մնացած հարստութիւնները՝ մեքենաները,երկաթէ ձողերը, հագուստեղէնը, ռազմամթերքը, երկաթուղային արհեստանոցները, փայտը եւ բազմաթիւ ուրիշ առարկաներ: Պէտք էր հոգ տանիլ ոչ միայն անոնց օգտագործման, այլ պէտք էր միջոցներ ձեռք առնել անոնց պահպանման համար, որ բաւական դժուար գործ էր այն ժամանակուայ պայմաններուն մեջ: Մեր երկրորդ նպատակն էր խաղաղեցնել բնակչութեան իսլամ տարրը ու հաշտեցնել զայն քրիստոնեայ զանգուածին հետ: Երրորդ՝ շահագործել բնական հարստութիւնները՝անտառը, արօտատեղիները, ածխահանքերը եւ աղահանքերը: Եւ, վերջապէս չորրորդ՝ աստիճանաբար մոտենալ թրքական սահմանին՝ գրաւելով 1914 թ. սահմանին վերաբերեալ բոլոր վայրերը, եւ ապա պատրաստուիլ անցնելու Թրքահայաստան, երբ Փարիզի վեհաժողովը իր վերջնական որոշումը տայ մեր պետութեան սահմաններու մասին…*>>[26]:

Քաղաքացիական հատվածում այս նպատակներն իրականացնելու համար Հայաստանի կառավարությունը Կարսի քաղաքացիական նահանգապետ էր նշանակել ցարական Ռուսաստանում պետական ծառայության ընթացքում գեներալ-մայորի (պետական խորհրդական-статский советник)[27] աստիճանի հասած, տոհմիկ ազնվական Ստեփան Ալեքսանդրի Ղորղանյանին (1.08.1865թ.- 30.03.1925թ.), որն ուներ կայսրության կովկասյան տարածաշրջանի, այդ թվում և Կարսի մարզի տեղական մարմինների կառավարման մոտ երեք տասնամյակի հարուստ փորձ, մշտապես ունեցել էր ծառայողական առաջխաղացում և, դատելով նրա ծառայողական նամակագրությունից և հուշերից՝ գրագետ և հմուտ պետական ծառայող էր, բանիմաց ու ճկուն կառավարիչ[28]:

Ստ.Ղորղանյանը թեև անկուսակցական էր, սակայն ամենատարբեր առիթներով բավականին սերտորեն համագործակցել էր Դաշնակցության հետ դեռևս ցարական

---

[26] **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…, էջ 101:

[27] Ռուսական կայսրությունում պետական ծառայողների համար հաստատված աստիճանակարգերի ցուցակում (табель о рангах) պետական խորհրդականը (статский советник) վերևից հինգերորդ աստիճանն էր և զինվորական համակարգում համապատասխանում էր գեներալ-մայորի կոչմանը:

[28] Ստ. Ղորղանյանին և նրա ընտանիքին վերաբերող կենսագրական որոշ մանրամասները տե՛ս, Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, *ՅԱՒԵԼՈՒԱԾ 2*:

իշխանության օրերից[29], ուստիև վայելում էր երկրի բարձրագույն իշխանության վստահությունը:
Հենց քաղաքացիական նահանգապետը պետք է իրականացներ նահանգը Հայաստան պետության հետ մերվելու-միաձուլվելու և պետության հետագա ընդլայնման համար մարզում անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու հայկական կառավարության քաղաքական ու տնտեսական ծրագրերը իրականացնելու ուղղությամբ:
Ներկայացնելով ու գնահատելով իր ղեկավարմանն հանձնած այդ տարածաշրջանի դերն ու ֆունկցիան այդօրվա հայկական պետականության հետագա զարգացման համատեքստում, քաղաքացիական նահանգապետը փաստորեն երկրորդում էր երկրի կառավարությանը. <<… *Կարսի նահանգը Հայեաստանի Հանրապետութեան տարածութեան ոչ միայն կէսից աւելին էր, նա կազմում էր նրա և մեծագոյն ինտերեսը, այդ հասկացողութեան պետական լայն իմաստով… Կարսի նահանգը դառնում էր այսուհետև այն կենտրօնը, որտեղից պէտք է ծաւալվէր մեր պետականութիւնը>>*[30]:
Նահանգում Հայաստանի կառավարության վերը նշված ծրագրերի իրականացման համար նահանգապետն իրեն ենթակա կառույցների միջոցով պրակտիկ տեսակետից պետք է կարողանար հաղթահարել հետևյալ հիմնական խնդիրները.
- ապահովել մարզի այլազգի՝ առաջին հերթին մահմեդական զանգվածի լոյալ դիրքորոշումը հայաստանյան իշխանության նկատմամբ,
- կազմակերպել և իրականացնել մարզ վերադարձող հայ գաղթականության վերաբնակեցումը՝ հաստատելով նրա և տեղի մահմեդականության միջև ոչ թշնամական հարաբերություններ և,
- օգտագործելով նահանգում առկա բնական ու նյութական ռեսուրսներն ու ինֆրակառուցվածքը, բնակչության այդ կոնտինգենտով կազմակերպել, ոտքի հանել և հունի մեջ գցել նահանգի սոցիալ-տնտեսական կյանքը:
Եվ դա պետք է իրականացվեր մի երկրամասում, <<…*որի 450 հազար ազգաբնակութիւնից հայերը կազմում էին մի քառորդը, եւ [որը] մեր օրերում մօտ 300 հազար խայտաճամուկ ազգագրական մի խառնուրդ էր, իր առանձնակի տնտեսական շահերով, իրաւակարգով, սովորութիւններով, տարազով ու հաւատալիքներով>>*[31]:
Ասվածից ինքնին հասկանալի է դառնում, որ Կարսի նահանգը որպես հայկական պետության հետագա ընդլայնմանը հուսալի պլացդարմ-հենադաշտ դարձնելու և ծառայեցնելու համար լուծելիք խնդիրներից ամենադժվարինը, կարևորն ու առանցքայինը դա մահմեդական զանգվածի հետ փոխհարաբերությունների կարգավորման խնդիրն էր: Որպեսզի Կարսը դառնար նշված առումով իրոք հուսալի և ապահով պլացդարմ, անհրաժեշտ էր չեզոքացնել, կամ՝ գոնե հասանելի չափով

---

[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 1, թ. 157; Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 138,139:
[30] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 23,43:
[31] **Նույն տեղում** էջ 43; նահանգի ազգաբնակչությանը վերաբերող այս թվերը բերված են 1919թ. կեսերի դրությամբ, երբ Կարս էին ներգաղթել արդեն 100 հազարի կարգի հայ գաղթականներ:

նվազագույնի հասցնել տեղի մահմեդականությունից եկող բոլոր հնարավոր վտանգներն ու սպառնալիքները: Տրամաբանությունը հուշում է, որ եղած իրավիճակում դրան հնարավոր էր հասնել հետևյալ ճանապարհներով ու միջոցներով.

ա) կտրուկ ավելացնել նահանգում հայ տարրի քանակը և հասնել այնտեղ նրա քանակական գերակշռությանը: Ինչպես ասում են՝ <<առանց երկարացնելու>>, միանգամայն ակնհայտ է, որ այդօրվա պայմաններում և իրավիճակում դա նույնիսկ երազանքների մակարդակով բացարձակապես անիրականանալի էր;

բ) ուժով քշել մահմեդականներին նահանգի սահմաններից դուրս և այդպիսով ազատվել այդ կարևոր տարածաշրջանում նրանց խիստ վտանգավոր ներկայությունից: Եթե այդօրվա Հայաստանի այլ տարածքներում նման արմատական մոտեցումը, ինչ-ինչ վերապահումներով, հնարավոր էլ էր ընդունելի համարել և ինչ-որ տեղ իրագործելի, ապա Կարսի նահանգի պարագայում դա, ինչպես այսօր կասեն՝ <<աշխատող տարբերակ չէր>>: Եթե անտեսենք անգամ տարբեր շրջանակների կողմից դրա շուրջ անխուսափելիորեն բարձրացվելիք աղմուկը, ապա զուտ պրագմատիկ տեսակետից նման գործընթացը հայկական կողմին բացի վնասից որևիցե օգուտ չէր բերելու: Թալանված, ունեզրկված ու ծեծված այդ զանգվածը հայերի կողմից բոլոր առումներով մի հրաշալի նվեր էր լինելու սահմանից այն կողմում հենց 1919-ի ապրիլ-մայիսից աշխուժացող քեմալական ուժերի համար: Թուրքական կողմը այդ քշվածներին տարբեր եղանակներով՝ քարոզչությունից մինչև զորակոչելը, բավականին արագ և շատ արդյունավետ կերպով կարող էր օգտագործել Հայաստանի դեմ: Եվ ի վերջո, դեպի արևմուտք շարժվելու դեպքում հայկական զինուժին հենց այդ ջոկատներն էին առաջինը դիմավորելու;

գ) մնում էր վերջին և միակ տարբերակը. խաղաղ ճանապարհով, մի կողմից հենվելով պետության և նրա օրենքների պատժող և միաժամանակ պաշտպանող հնարավորությունների վրա, մյուս կողմից՝ օգտագործելով տեղական ավանդույթներն ու սովորությունները, հասնել նահանգի մահմեդական զանգվածի մոտ այն տրամադրության արմատավորմանն ու հիմնավորմանը, որ հենց մահմեդականին և հենց այս նահանգում բոլոր առումներով ավելի ձեռնատու է լինել հայկական պետության օրինապաշտ քաղաքացի, քան հանդես գալ նրա դեմ որպես թշնամի:

Հենց այս՝ միակ հնարավոր արդյունավետ գործելաոճն ընտրեց Կարսի նահանգի քաղաքացիական իշխանությունը՝ նահանգապետի գլխավորությամբ:

Լավ իմանալով և տիրապետելով Արևելքի նրբություններին և բոլոր գործառույթների հիմքում դնելով պետական օրենքի գերակայության սկզբունքը, քաղաքացիական իշխանությունը կարողացավ խաղաղ միջոցներով հասնել մարզի այլազգի բնակչության եթե ոչ լիարժեք լոյալ դիրքորոշմանը հայաստանյան իշխանությունների նկատմամբ, ապա գոնե նրանց բացահայտ ըմբոստացման զգալի նվազեցմանը: Առաջին հերթին՝ չեզոքացնելով և բացառելով նահանգում՝ որպես պետական

իշխանությանը այլընտրանք ներկայանալու զանազան <<ազգային խորհուրդների>> նկրտումներն ու ձգտումները, հասցնելով դրանց ազդեցության աստիճանը միանգամայն հեղհեղուկ հասարակական միավորումների բուտաֆոր ցուցանակով կառույցների կարգավիճակի[32]: Առավել մեծ վտանգ ներկայացնող մահմեդական զանգվածին նոր իշխանության կողմից երաշխավորվում էր ունեցվածքի և կյանքի պաշտպանություն պետական օրենքի հովանու ներքո, բայց և միաժամանակ նրանց ցուցադրվում էր նահանգի հայկական իշխանության թիկունքում կանգնած պետության ուժը, որը կարող է շատ խիստ պատժել՝ օրենքին չենթարկվելու և պետության դեմ ըմբոստանալու պարագայում: Այդ քաղաքականությունը, ամեն ինչից զատ, բերում էր մի շատ կարևոր արդյունքի. մարզի մահմեդական զանգվածի հիմնական մասը, ակնկալելով որոշակի պաշտպանվածություն և ապահովություն հայկական իշխանության հովանու տակ, գերադասեց ընդունել նրա գերիշխանությունը, հարկեր մուծել հայկական իշխանությանը, քան փոխարենը տեղի տալ մարզում վխտացող թուրքական և ադրբեջանական գործակալների սադրանքներին և ապստամբել գործող իշխանության դեմ՝ աչքի առաջ ունենալով դրա տհաճ հետևանքները: Ինչպես դա եղավ, օրինակ Զարուշատի և Շահնազարի շրջաններում բռնկված մահմեդականների խռովության դեպքում[33]: Պատկերավոր ասած, մահմեդական մի շարք ցեղապետեր և առաջնորդներ գերադասեցին լինել հայկական նահանգապետի շքախմբում, քան հայկական պետությանը հակառակվող զորախմբում: Քաղաքացիական նահանգապետի վարած քաղաքականության շնորհիվ Կարսի մահմեդականության <<ինքնագիտակցությունը>> շատ արագ հասավ այն բարձունքների, որ արդեն 1919-ի մայիսի վերջին-հունիսի սկզբին տեղի մահմեդական հոգևորականությունն ու այլ մեծամեծերը այցելեցին նահանգապետին և նրան հայտնեցին իրենց որոշումը՝ ինքնակամ հրաժարվել Կարսի սուրբ Առաքելոց եկեղեցին այսուհետ որպես մզկիթ օգտագործելուց և այն հանդիսավոր կերպով վերադարձնել հայերին[34]:

Մահմեդականներից մի քանիսին հետագայում հանձնվեցին հայկական բանակի սպայական ուսադիրներ և պետական շքանշաններ[35],իսկ նրանցից մի քանիսն էլ նահանգից դուրս՝ դեպի Էրզրում ու Ալաշկերտ, նաև Բաթումի ուղղությամբ իրականացնում էին նույնիսկ հետախուզական-գործակալական գործառույթներ՝ անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելով Կարսի նահանգապետին[36]:

---

[32] Տե՛ս Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 37-42, 63-66, 615,616:

[33] Տե՛ս **Յ.Ա.Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ <<Ալիք>>, ազգային, քաղաքական, հասարակական և գրական օրաթերթ, 30 ապրիլ, 1961թ., թիվ 90:

[34] Տե՛ս ՀԱԱ, ֆ 201,ց.2, գ.611,թ. 1 (տե՛ս նաև **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…, էջ 176-177); Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին Աշխարհամարտի և Հայաստանի Առաջին Հանրապետության Տարիներին (1914-1920), Հատոր Բ (1917-1920), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին-2018, էջ. 575-576:

[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ 201,ց.1, գ.48,թ. 127 (տե՛ս նաև **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…, էջ 211):

[36] Տե՛ս **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…, էջ 183-186, 225-228, 318-320, 349; Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը …, էջ 268:

Քաղաքացիական նահանգապետը բավականին նրբորեն՝ ի նպաստ իր պետության, օգտագործում էր նաև դեռևս հնուց եկող հակասությունները թուրքական և քրդական ցեղերի միջև, ինչի շնորհիվ կողմերից ամեն մեկը թուլանում էր և միաժամանակ ավելանում էր նրանց ամեն մեկի կախվածությունը հայկական իշխանությունից: Հասկանալի է, որ այդ ամենը իր հերթին ինչ-որ չափով նպաստում էր նաև երկրի ընդհանուր անվտանգության աստիճանի որոշակի բարձրացմանը: Այսինքն քաղաքացիական նահանգապետի որդեգրած նման հայեցակարգային մոտեցման միջոցով լուծվում էր կառավարության կողմից Կարսը որպես հուսալի պլացդարմ դարձնելու ծրագրի կարևորագույն խնդիրներից մեկը՝ խաղաղ եղանակով հարաբերությունների կարգավորումը նահանգի մահմեդական զանգվածի հետ և հայկական պետական իշխանության նկատմամբ վերջինիս լոյալության ապահովումը: Նույն հայեցակարգի փիլիսոփայության կիրառմամբ ու նրա շրջանակներում լուծվեց նաև կարևոր հաջորդ խնդիրը. Կարս ներգաղթող հայության տեղաբաշխումն ու բնակեցումը և այդ զանգվածի ու մահմեդականության միջև փոխհարաբերությունների կարգավորումը: Թեև դանդաղ, բայց կայուն քայլերով կրկին սկսել էին վերահաստատվել հայ-թուրքական, հայ քրդական փոխվստահելի, գործնական փոխշահավետ հարաբերությունները[37]: Թշնամության բացակայությունն ընդգծելու համար նույնիսկ շեշտվում ու մատնանշվում էր այն կայացած ավանդույթը, որ <<…*[Կարսի] մահմեդականները, հայերի պէս, հացի խմորն անելիս, հացի գունդերի վերայ խաչի դրօշմ են դնում…>>*[38]:

Որպես այդ հարցում նահանգի քաղաքացիական իշխանության հաջողությունը հաստատող վկայություն, բերենք ընդամենը մի քանի կոնկրետ փաստեր: Օրինակ, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը թողարկեց պետական առաջին փոխառության պարտատոմսերը, ապա պրակտիկորեն միայն մահմեդականներով բնակեցված Արդահանի գավառը պետական գանձարան փոխանցեց այնքան գումար (56 միլիոն ռուբլի), որն ավելի շատ էր, քան այդօրվա Հայաստանի մյուս բոլոր գավառներից գանձարան փոխանցած գումարները միասին վերցրած[39]: Իսկ Օլթիի գավառակի հայ-թուրքական՝ այդ օրերին բավականին պայմանական սահմանից <<այն կողմ>> գտնվող երեք մահմեդական բնակավայրերի բնակիչները, տեսնելով սահմանի <<այս կողմում>> իրենց արյունակիցների համեմատաբար բնականոն հունով ընթացող կյանքը, դիմել էին Կարսի նահանգապետին խնդրագրով՝ որպեսզի վերջինս հասցնի իր կառավարությանը, որ նշված բնակավայրերը ցանկանում են ներգրավվել Հայաստանի Հանրապետության կազմի մեջ և իրենց կյանքը շարունակել այդ պետության հովանու տակ[40]: Ճիշտ է, այդ ամենն ամրագրելու համար այդ գյուղերն ուղարկվեցին հայկական զինուժի

---

[37] Տե՛ս Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը …, էջ 60-62, **Յ.Ա.Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ <<Ալիք>>, 30 ապրիլ, 1961թ., թիվ 90:

[38] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը …, էջ 23:

[39] Տե՛ս **Նույն տեղում,** էջ 372:

[40] Տե՛ս **Նույն տեղում,** էջ 343-345, 631,632:

ջոկատներ՝ կայազորներ հիմնելու առաջադրանքով, որոնք այդ փոքրիկ <<անշլյուսը>> վերածեցին ավարառության ու թալանի[41], բայց…այստեղ, ինչպես ասում են, առայժմ կարևորենք գործողության հենց առաջին արարը, որն առընչվում է նահանգի բացառապես քաղաքացիական իշխանության գործունեությանը: Եվ, չմոռանանք չափազանց <<հայեցի>> և չափազանց <<տընվեցի>> մի դրվագ. նահանգի քաղաքացիական իշխանության գործունեության շնորհիվ հայկական պետության կառավարական ու խորհրդարանական պաշտոնյաները նահանգն արդեն այնքան հարազատ էին ընկալում, որ 1920 թ. ամռանը, ճիշտ է, ի տհաճություն նահանգապետի, երևանյան պաշտոնյաների բավականին ընդարձակ մի ցուցակ էր <<իջեցվել>> նահանգապետարան՝ խնդրանքով՝ այնտեղ նշված անձանց մատչելի գներով տրամադրել << *Կարսի յուղ ու պանիր*>>[42]: Ինչը, բնականաբար, գալու էր հենց մահմեդական յայլաներից:

Առաջ անցնելով նշենք, որ այդ ուղղությամբ ակնհայտ ձեռքբերումների մասին վկայում է թեկուզ այն հանրահայտ իրողությունը, որ երբ 1920-ի սեպտեմբեր-հոկտեմբերին քեմալական զորքերը ներխուժեցին Կարսի նահանգ, ապա տեղի մահմեդական բնակչության հիմնական զանգվածը պահպանեց չեզոքություն և չցուցաբերեց զավթիչներին միանալու որևիցե հակում[43]:

Եթե կառավարական ծրագրի երկու առաջնային խնդիրները՝ նահանգի մահմեդական զանգվածի խաղաղեցումն ու հնազանդեցումը և բնակչության շրջանում հայերի ու մահմեդականների միջև թշնամանքի դրսևորման մեղմացումն ու նվազեցումը հնարավոր եղավ իրականացնել նահանգի քաղաքացիական իշխանության ընտրած այդ խաղաղ հայեցակարգի կիրառմամբ, ապա նույնը հնարավոր չէ ասել քաղաքացիական իշխանության մասով կառավարական ծրագրի՝նահանգում լուծվելիք մյուս երկու խնդիրների՝ նահանգի սոցիալ-տնտեսական ոլորտի աշխուժացման և այնտեղ նախորդ տարիներին կուտակված հարստության պահպանման և օգտագործման վերաբերյալ:
Չմոռանանք, որ դեռևս 1918-19-ի ձմռանը ամբողջ Հայաստանի վիճակը բնութագրվում էր որպես կատաստրոֆիկ: Պատմությունն ու կյանքը ցույց են տվել, որ երբ պետությունն հայտնվում է այն վիճակում, ինչպիսինում հայտնվել էր Հայաստանի առաջին հանրապետությունը, նրանում, սովորաբար, սկսում է զարգանալ երկու տրամագծորեն հակառակ գործընթացներից մեկն ու մեկը. կամ ազգը միավորվում ու կենտրոնանում է հայրենիքի և պետականության վերականգման գաղափարի շուրջը, կամ, հակառակ՝օգտվելով <<հարմար>> առիթից, մարդիկ սկսում են գանձագողության, թալանի ու այլ անօրինականությունների միջոցով տարուբերել նոր-նոր հիմնադրվող պետականության վեմը, խարխլել ու

---

[41] Տե՛ս **Նույն տեղում** , էջ174, 346-349, 353, 356,359,366,381:
[42] **Նույն տեղում**, էջ 301:
[43] Տե՛ս **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, Հատոր IV, Երևան, 2016, էջ 278:

քանդել պետականության դեռևս չափազանց թույլ հիմքերը: Նման գործընթացները՝ ինչպես ասում են <<միայն ձեռքի տակ եղած միջոցներով>> այլևս հնարավոր չի լինում կասեցնել ու դրանց վերջը տալ և ոչ մի եղանակով, կամ մոտեցումով: Այդօրվա Հայաստանում և հատկապես Կարսի նահանգում, ինչպես վկայում են փաստերը, նշված տարբերակներից, ցավոք սրտի, գործում էր հենց երկրորդը: Թե երկրով մեկ, թե այդ նահանգում, բացառությամբ որոշ նվիրյալների, պետական ծառայության համակարգում ներգրավվածների և տնտեսվարողների հիմնական զանգվածը իր գործողություններով կամ խարխլում էր պետականությունը, կամ գրավել էր կողքից դիտողի և սպասող-սպառողի կեցվածք՝ տեսնենք ինչ է անելու կառավարությունը և ինչ է այն տալու անձամբ մեզ[44]: Բերենք հատվածներ այդօրվա մամուլի էջերից. *<<...Ոչ մի բան չի կասեցնում մեր երկրի ինքնապաշտպանության գործը այնպիսի ահավոր չափերով, որքան որ պաշտոնյաների սաբոտաժը: Այդպիսիները պիտի կրեն դաժանագույն պատիժներ , որպես հայրենիքի դավաճաններ>>*[45], *<<...Ինչ տեղի է ունենում մեր երկրում, չունի չափ ու սահման և հասել է այլևս հրեշավոր համեմատությունների...Ապահով անկյունում նստած մարդիկ, որոնց համար հայրենիք և ժողովուրդ կոպեկի արժեք չէն ներկայացնում, ամեն օր չարաշահության նորանոր ուղիներ են հարթում իրենց համար...>>*[46] : Ճիշտ է, ՀՀ կառավարությունը 1920 թ. հոկտեմբերի սկզբին ի վերջո ընդունեց *<<Ժամանակավոր օրենք պաշտոնեաների հանցագործությունների մասին>>*[47], որով, օրինակ, կաշառակերության համար նախատեսվում էր պատժաչափ ընդհուպ մինչև մահապատիժ, բայց արդեն շատ ուշ էր և անօգուտ...

Իսկ Կարսում՝ նահանգային կյանքի տնտեսական, սոցիալական և այլ ոլորտների վերականգման և աշխուժացման համար անհրաժեշտ էին ոչ միայն բանող ձեռքեր՝ հողագործներ ու անասնապահներ, այլ նաև՝ և առաջին հերթին, մասնագետներ և իշխանության տարբեր օղակների բանիմաց ծառայողներ: Մասնագետները՝ ցանկացած բնագավառում, Կարսում այդ օրերին բացակայում էին իսպառ: Դրանք պետք է <<ներմուծվեին>> այդօրվա Հայաստանի մյուս գավառներից, կամ, առհասարակ, դրսից: Ըստ այդմ էլ, Կարսի քաղաքացիական նահանգապետի ամենացավոտ և գործնականում՝ մինչև վերջ չլուծվող խնդիրը եղավ ու մնաց իշխանության օղակներում և տարբեր հաստատություններում ու ձեռնարկություններում կադրերի ոչ թե ընտրության հնարավորության բացակայությունը, այլ առհասարակ, ինքնին հենց կադրեր ասածի բացակայությունը: Օրվա հայ հասարակությունը ոչ մի կերպ չի արձագանքել Կարսի նահանգում մասնագետների չափազանց սուր պակասի և անհրաժեշտության ահազանգերին. *<<Կարսից ես հայ լրագիրներին մի նամակ ուղղեցի, ուր գաւառ էի հրաւիրում մեր*

---

[44] Տե՛ս **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը..., էջ 234-235:
[45] **<<Յառաջ>>,** օրաթերթ, 1920 թ., No 242:
[46] **<<Յառաջ>>**, օրաթերթ, 1920 թ., No 257:
[47] **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը..., էջ 240:

*ինտելեգենցիային>>*[48]: Սակայն . *<<Հայ ինտելեգենցիան խորշեց իր հայրենիքից և թողնելով անհատներին և պատահական մարդկանց դարբնելու իր պետականութիւնը, նա գերադասեց օտար հորիզոնների տակ քննադատելու և ծաղրելու մեզ... Գալիս էին միայն գողերը, միայն հարստանալու և իրանց ապահովելու համար… >>*[49]:

Օրինակ 18 ամիսների ընթացքում նահանգապետը այդպես էլ չունեցավ տեղակալ, այդպես էլ հնարավոր չեղավ գտնել մեկ հայ բժիշկ, որը համաձայնվեր աշխատել Արդահանում: Ի վերջո, Արդահան գալու համաձայնություն էր տվել Թիֆլիսից մի հրեա բժիշկ: Հետագայում պարզվեց, որ նա պարզապես բոլշևիկյան գործակալ էր և բժշկելու փոխարեն հիմնականում զբաղված էր տեղի բնակչության մեջ հակապետական քարոզչություն իրականացնելով: Փաստերը վկայում են, որ մարզի բժշկական ծառայությունը կայուն կերպով ըստ էության, ներկայացված է եղել հիմնականում մեկ անձով. *<< Նահանգի 12 վայրերի բժիշկների պաշտօնները մինչև վերջն էլ մնացին թափուր և նահանգական բժիշկը նման էր հրամանատարի, որ ոչ զօրք ուներ և ոչ ռազմամթերք, դեղորայք...>>*[50]:

Բերված օրինակը ամենևին եզակի չէ: Նման պատկերը Կարսի նահանգում առկա էր բոլոր ոլորտներում: Բայց չմոռանանք կրկին շեշտել, որ խոշոր հաշվով, ինչպես հայտնի է, այդ օրերի Հայաստանը ինքն էլ ամբողջությամբ՝ իր խնդիրներով մի <<Կարսի մարզ>> էր:

Ճիշտ է, կառավարությունը որոշ քայլեր ձեռնարկում էր կադրային այդ <<սովը>> ինչ-որ չափով մեղմելու համար: Բայց, մի կողմից երկրում ռեալ կադրային ռեսուրսների սղության պատճառով, իսկ մյուս կողմից՝ առկա քաղաքական պայմաններում առաջնությունը կուսակցական ընկերներին տալու հետևանքով, Կարս աշխատելու ուղարկված անձանց թիվը նախ քանակապես եղել է չափազանց քիչ, իսկ մասնագիտական առումով՝ դրանք եղել են, հիմնականում, պատահական մարդիկ: Կուսակցական պատկանելիությամբ կադրերի ընտրությունը՝ տխրահռչակ <<*թող պոլի չոտկ լինի, բայց մեզանից լինի*>> սկզբունքով, տվյալ դեպքում երևի թե պետք է ընդունել ավելի շատ որպես ճարահատյալ, այլ ոչ թե որպես միտումնավոր քայլ: Ի վերջո հույսը, հավանաբար, եղել է այն, որ կուսակցական ընկերներին գոնե կուսակցական կոշտ կարգապահության միջոցով հնարավոր կլինի ստիպել աշխատել: Բայց, ինչպես նման դեպքերում սովորաբար լինում է, <<տեղեր>> ուղարկված բանից անտեղյակ , բայց <<վստահելի կուսակցական ընկերները>>, իրենց վերապահում էին զուտ բարձրագույն վերստուգիչի իրավունքներ և իրենց անհարկի միջամտությամբ միայն կազմալուծում ու կաթվածահար էին անում նահանգային իշխանական <<թերբեռնված>> կառույցների առանց այն էլ ոչ սահուն ընթացող

---

[48] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 53:

[49] **Նույն տեղում,** էջ 58, 561

[50] **Նույն տեղում**, էջ 200; ՀԱԱ, ֆ 199,ց.1, գ.126,թ. 5 (տե՛ս նաև **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…, էջ 201,202):

աշխատանքները: Եվ շատ դեպքերում ստեղծվում էր մի իրավիճակ,*<<… ուր կուսակցական լինելը ինքը օրէնքն էր և ինքը օրինականութիւնը>>*[51], մինչդեռ, *<<… եթէ դաշնակցութեան վիճակ էր ընկել կառավարելու երկիրը, այդ դեռ չէր նշանակում, որ ամէն մի դաշնակցական իրաւունք ունէր միջամտելու պետական գործերին և խանգարելու նորա ընթացքը… Պէտք է ասել այստեղ, որ նահանգը գաստրոլների և թամաշի եկող <ընկերների> այդ բազմաթիվ միտումները ձգում էին միայն իշխող կառավարութեան համարումը և պատիւը երկրի առաջ և երերում նահանգում իրաւակարգի մատաղ ծիլերը… Եւ այստեղ խախտվում է երկրի հաւատը դէպի պետական իմաստը, այստեղ առաջ է գալիս իշխանութեան գաղափարի քայքայումը… >>*[52]:

Արդյունքում Կարսի մարզի իշխանության ու ծառայությունների քաղաքացիական հատվածում համալրված չի եղել և ոչ մի ոլորտ, իսկ եկած ծառայողների մեծ մասն էլ ցուցաբերել է բացահայտ <<խոփանչու>> մոտեցումներ, կամ էլ եղել են սովորական բախտախնդիրներ. *<< Կարսի նահանգը լցվեց բախտախնդիրներով միայն, պատահական մարդկանցով որոնք շտապում էին միայն կեղեքել և փախչել… գալիս էին այն անամօթները, որ վարկաբեկելով կառավարութիւնը, մեր դարաւոր իղձերը սրբապղծելով, իրաւունք էին տալիս օտարներին ատել մեզ և զրզվել մեզանից...>>*[53]: Որպես հետևանք, Կարսում անխտիր բոլոր ոլորտներում ահռելի չափերի էին հասնում կաշառակերությունը, գանձագողությունը, թալանը, բացահայտ սաբոտաժը և պետականությունը քանդող այլ երևույթներ[54]. *<<Աւելի պատեհ և աւելի անպատասխանատու պայմաններ գողերի համար դժվար էր երևակայել և ճարպիկ մարդիկ անվրեպ հնձում էին, ակնթարթը ձեռքից չը թողնելու համար...>>*[55]: Փաստերը վկայում են, որ այն ամեն նեգատիվը՝ իր դրսևորումներով ըստ էության պետականության քանդողն ու ավերողը, որն առկա էր այդ օրվա Հայաստանում, Կարսում ստացել էին առավել ցցուն, առավել խտացված, զանգվածային ու այլանդակ ձևեր ու դրսևորումներ. *<< Կարսի նահանգը թալանչիների համար այն աւետեաց երկիրն էր, ուր հայ աւազակը շտապում էր անզուգական լինելու>>*[56]: Ի հայտ էին գալիս այնպիսի չարաշահումներ ու այլ հանցանքներ, որոնք չէին տեղավորվում ոչ միայն հայրենասիրության, պետականամետության, օրինապաշտության կամ էլ ինչ-ինչ իրավական և բարոյական նորմերի շրջանակներում, այլ դուրս էին նույնիսկ սովորական մարդկային բանականության ու խղճի սահմաններից: Օրինակ,Կարսի որբանոցի տնօրինությունը ոչ միայն յուրացրել էր որբերի սննդի համար նախատեսված միջոցները, ինչի հետևանքով սովից մահացել էին որբանոցի չորս

---

[51] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 23:
[52] **Նույն տեղում**, էջ 128, 490,491:
[53] **Նույն տեղում,** էջ 201:
[54] Տե՛ս **Նույն տեղում,** էջ 90,92,119,129
[55] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը …, էջ. 151-313; Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 163:
[56] **Նույն տեղում**, էջ 58:

տասնյակից ավել երեխաներ, այլ հափշտակել էին նույնիսկ մահացած երեխաների հուղարկավորության համար նախատեսված գումարները: Օգտվելով ձնառատ եղանակներից, երեխաների դիերը պարզապես շպրտվել էին մոտակա ձորակը և գարնան ձնհալի օրերին մարդիկ ականատեսը եղան մի զարհուրելի տեսարանի[57]: Աղի արդյունահանումը, որն այն օրերին հանդիսանում էր երկրի թերևս միակ ստրատեգիական հումքը, Կողբի հանքերից մինչև սպառողի սեղան հասնելը զուգակցվում էր գողությամբ ու չարաշահումներով[58]: Գողացվում էին նույնիսկ պատմական արժեք ներկայացնող Անիի պեղածոները: Ընդ որում՝ ոչ միայն տեղի բնակչության, այլ նաև այդ պեղածո արժեքների պահպանման համար այդտեղ ուղարկված միլիցիայի ջոկատի անդամների կողմից[59]: Այնպես որ, հաշվի առնելով այդօրվա Հայաստանում տիրող ընդհանուր իրավիճակը, հասկանալի է դառնում, որ Կարսի քաղաքացիական նահանգապետը՝ իր փորձով, բնատուր խելքով ու ճկունությամբ հանդերձ, չէր կարող առկա պայմաններում իրականացնել ու ապահովել քաղաքացիական իշխանության կուռ կառույցի ստեղծումն ու անխափան գործունեությունը մի առանձին վերցրած նահանգում. *<<Մեր իշխանությունը Կարսի նահանգում տևեց տարի ու կէս և այդ ժամանակամիջոցի ընթացքում ես պաշտօնից արձակեցի, դատի տվեցի և նոյնիսկ բանտարկութեան ենթարկեցի, մինչ դատաստանական քննութիւնը, 150 պաշտօնեաներ, շրջանապետից (գաւառապետից) սկսած մինչ շրջանային կառավարութեան գործաւարը…>>*[60]:

Ինչ վերաբերում է Կարսում ռուսական տիրապետության օրոք կուտակված ու ամբարված հարստությունը նպատակային օգտագործելուն, ապա դրա հաշվառման ու գույքագրման համար ստեղծված պետական հանձնաժողովը ուներ խիստ զինվորական թեքում և նահանգի քաղաքացիական իշխանությունը, ըստ էության զրկված էր այդ միջոցների բաշխմանն ու օգտագործմանը իրական մասնակցություն ունենալու հնարավորությունից: Մանրամասները թողնելով հաջորդիվ, այստեղ շեշտենք միայն, որ այդ ամբողջ հարստությունից հայկական պետությունը չունեցավ և ոչ մի իրական օգուտ. այդ ամենը թալանվեց ու գրպանվեց զինվորականության կողմից[61]:

Ինչպես տեսնում ենք, Կարսի նահանգի քաղաքացիական իշխանությունը՝ իր որդեգրած մոտեցումների շնորհիվ զգալի արդյունքներ արձանագրելով, պայմանականորեն ասած, <<ազգամիջյան>> հարաբերությունների ոլորտում, անկարող եղավ հաջողություններ արձանագրել՝ նույնպես պայմանականորեն

---

[57] Տե՛ս ՀԱԱ, ֆ 201,ց.1, գ.48,թ. 35,39 (տե՛ս նաև, **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…, էջ 198,199); Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 216,217:

[58] Տե՛ս ՀԱԱ, ֆ 201,ց.1, գ.281,թ. 6 (տե՛ս նաև, **Վ.Հարությունյան,** Կարսի մարզը…, էջ 224)**;** Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը …, էջ 218-220:

[59] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.201, ց.1, գ.48, թթ.117 և շրջ., 118 (տե՛ս նաև, **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը …, էջ. 207,208,232,233):

[60] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը …, էջ 58:

[61] Տե՛ս **նույն տեղում,** էջ 66-71:

ասած՝ զուտ <<ներազգային>> ոլորտում: Այս հատվածում հաջողություն չարձանագրելու պատճառը զուտ ներքին էր ու օբյեկտիվորեն պայմանավորված էր արդեն զուտ մեր ազգային հատկություններով, դրանց համապատասխանող օրվա իշխանության էությամբ և օրվա իրադարձությունների մեր գնահատմամբ ու ընկալումներով: Ահա թե ինչպես է արտահայտվում այդ իրավիճակում աշխատող Կարսի քաղաքացիական նահանգապետի և նրա գործունեության մասին այդ ամենի ականատեսը.<<…*Տիրապետելով վարժված խելքի և զուրկ չլինելով խորամանկությունից, նա [Ստեփան Ղորղանյանը-Վ.Հ.] կլիներ մի փայլուն կառավարիչ կանոնակարգված ադմինիստրատիվ համակարգ ունեցող պետության մեջ: Սակայն դաշնակցական Հայաստանում՝ անդեկ ու անառագաստ կառավարության օրոք, նույնիսկ նրա ահռելի ծառայողական փորձը չօգնեց նրան, որպեսզի նահանգում ստեղծվեր համերաշխ գործող վարչական համակարգ…*>>[62]: Հասկանալի է, որ Կարսի նահանգում կառավարության կողմից նախատեսված ծրագրի մի հատվածի՝ <<ներազգային>> կոչվածի չիրագործումը ստվերում ու ետ էր <<քաշում>> նաև ծրագրի համեմատաբար հաջողված հատվածները: Եվ արդյունքում՝ այդ ամենին գումարած նաև նահանգի զինվորական մարմինների, այստեղ դեռևս չասենք հակապետական, սակայն վստահաբար՝ ոչ պետականամետ գործունեությունը, Կարսի նահանգը հայկական պետության դեպի արևմուտք երազած տարածման պլացդարմից իրականում վերածվեց թուրքական պետության՝ դեպի արևելք իրական տարածումն ապահովող երկրամասի:

### *3. Կարսի նահանգի զինվորական իշխանությունը և տեղի հայկական զորախումբը*

[62] **Ваан Тер-Аракелян**, Начальник штаба крепости Карса, Карс перед падением https://www.aniarc.am/2017/10/30/vahan-ter-arakelyan-kars-1919/, 30 .10. 2017:

Իսկ Կարսի նահանգի զինվորական իշխանության բուրգի գագաթին հայկական կառավարությունը հարմար գտավ տեսնել այդօրվա հայկական բանակի երկու գեներալների: Մեկը՝ ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ) Դանիել-բեկ Աբիսողոմի Փիրումյանին (22.11.1861թ., Նախիջևանիկ, Լեռնային Ղարաբաղ -15.08.1922թ., Երևան): Գնդապետի պաշտոնում Դանիել-բեկ Փիրումյանը մասնակցել էր Սարդարապատի ճակատամարտին և այդ պահին ուներ այդ հերոսամարտում մեզ համար հաղթանակ կորզող ամենահայտնի և քաջ զորապետերից մեկի համբավ: Մյուսը՝ նույնպես ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր Արտեմի (Հարություն) Գրիգորի Հովսեփյանին (02.01.1872թ., Դաղեթ-Խաչեն, Թիֆլիսի գուբերնիա - 28.07.1921թ., Ալավերդի, Հայկ.ԽՍՀ): Արտեմի (Հարություն) Հովսեփյանը Առաջին աշխարհամարտի ընթացքում կապիտանից հասել էր գնդապետի աստիճանի, բայց իր ծառայության ընթացքում որևիցե բացառիկ բաներով աչքի չէր ընկել:

Նախ հատուկ նշենք, որ ի սկզբանե նահանգի զինվորական իշխանության առաջին դեմքերի նշանակման հարցում դրսևորվեց, մեղմ ասած, ինչ-որ ոչ միարժեք մոտեցում: Երբ Կարսի մարզը փաստացի միացվեց Հայաստանի Հանրապետությանը և հայկական զորքերը մուտք գործեցին Կարսի տարածք, ապա որպես հայկական կառավարությունը մարզում ներկայացնող առաջին դեմք բնակչությանը դիմեց գեներալ–մայոր Հ.Հովսեփյանը, որը հանդես էր գալիս որպես Կարսի նահանգի ամբողջ հայկական զինուժի զորահրամանատար[63]: Մինչև 1919թ. մայիսի կեսերը նա ուներ նաև գեներալ-նահանգապետի պաշտոնական լիազորություններ: Ով էր այդ անձնավորությունը և որոնք էին նրա տեղն ու դերը հայկական բանակում: Մեր ուսումնասիրած մեծաթիվ արխիվային փաստաթղթերից միայն մեկում մենք հանդիպեցինք Հ. Հովսեփյանի անձը ինչ-որ առումով դրականորեն բնութագրող տողերի. << *Հովսեփյանի հետ ծանոթացել եմ Էրիվանում՝ 1915 թվին… Այդ ժամանակ նա ինձ վրա թողեց ուշիմ և պարտաճանաչ սպայի, հոգատար հրամանատարի տպավորություն, ով հոգով ցավում էր այդ օրերին մեծ արհավիրք վերապրող իր ազգի համար: Այդ կարծիքն ես մնացի մինչև Կարսում մեր համատեղ ծառայության վերջը, որտեղ ես նրան ճանաչեցի նաև մյուս կողմերով. Հովսեփյանը տառապում էր <<մեծն զորավարի>> ինքնագնահատականով, թեև մարտական իրավիճակում ցուցաբերում էր չափից դուրս նյարդայնություն, կորցնում էր հոգու արիությունը, հեշտությամբ հայտնվում էր խուճապային իրավիճակում՝ դրանով վարակելով նաև իրեն շրջապատող ենթականերին: Բացի դրանից, նա զուրկ չէր խորամանքությունից ու բանսարքություններից*>>[64] : Առաջ անցնելով նշենք, որ փաստերը վկայում են, որ

---

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ 280,ց.թ, գ.8, թ. 1 (տե՛ս նաև, **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը …, էջ 174-176):

[64]**Ваан Тер-Аракелян**, Начальник штаба крепости Карса, Карс перед падением, https://www.aniarc.am/2017/10/30/vahan-ter-arakelyan-kars-1919/, 30 .10. 2017:

Կարսում ծառայած 18 ամիսների ընթացքում գեներալ Հովսեփյանը դրսևորեց սույն բնութագրման հատկապես վերջին մասում շեշտված իր հատկությունները:
Իսկ ահա մեկ այլ կարծիք, որը բավականին համահունչ է նախորդի վերջնամասին.*<<Գեներալ-նահանգապետ Յովսէփեան մի ռուսախօս սպայ էր. պատերազմի քմահաճոյքը մի երկու տարում գլխապետից նրան գեներալ էր դարձրել, իսկ դաշնակցութեան գերիշխանութիւնը տեսնելով, նա օր առաջ սկսել էր մերձենալ դաշնակցականներին, իրան կուսակից, <<համակրող>> անվանել այդ մեծ քաղաքական զանգվածի և այսօր, այդպիսով, նա ոչ միայն Կարսի զօրաբանակի հրամանատարն էր, այլև գեներալ-նահանգապետ այդ կարևոր և պատասխանատու նահանգում… Յովսէփեան ռուսերէն խօսող և ռուսերէն մտածող կայսերական իդեալների երկրպագու էր և մի զաւէշտ թիւրիմացութիւն հայ ազգային բանակում >>*[65]:
Պաշտոնավարման առաջին իսկ օրերից սկսած գեներալ-նահանգապետի պաշտոնում այդ գեներալի ձեռնարկած որոշ վարչական <<էքսպերիմենտներ>> խիստ մտահոգեցին երկրի կառավարությանը և 1920թ. մայիսի 20-ին Կարսի նահանգում գեներալ-նահանգապետի պաշտոնը լուծարվեց [66]:

Բայց միաժամանակ նահանգ <<իջեցվեց>> մի նոր հատուկ հաստիք-պաշտոն. Կարսի ամրոցի զինվորական պարետի պաշտոնը՝ իր առանձին շտաբով: Պարզվում է, պաշտոնը խիստ անվանական էր և նախատեսված էր հատուկ և անձնապես գեներալ Դանիել-բեկ Փիրումյանի համար: Բերենք մի հատված այդ ժամանակվա Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ գեներալ Հովհաննես Հախվերդյանի հուշերից, որտեղ չափազանց պարզ ու հստակ ներկայացված է Դանիել–բեկ Փիրումյանին նշված պաշտոնում նշանակելու պատմությունը՝ իր բոլոր <<ծալքերով>> ու մանրամասներով *<<…Կարսը մեր կողմից զբաղեցնելուց հետո բրիգադի[67] հրամանատար գեներալ Հովսեփյանցը դրա հետ մեկտեղ կատարում էր նաև բերդի պարետի պարտականությունները: Սակայն հետագայում Կառավարությունը (կուսակցության[68] նախաձեռնությամբ) բարձրացրեց հատուկ բերդի պարետի նշանակմամ հարցը: Այդ պաշտոնը նախատեսվում էր գեներալ Դանիել-բեկ Փիրումովի համար: Գեներալ Փիրումովը Կարս ժամանեց մայիս ամսի առաջին կեսերին և այդ պահից էլ սկսվեց բերդի հատուկ շտաբի ձևավորումը: Շտաբի պետ էր նշանակվել փոխգնդապետ Առաքելյանը[69]: Նա շարային սպա էր, գեորգևյան*

---

[65] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 44,45,439; տե՛ս նաև ՀԱԱ, ֆ.201, ց.1, գ.5. թթ. 27,28:

[66] Տե՛ս **Նույն տեղում**, էջ 52:
[67] Խոսքը Կարսի մարզում տեղակայված հայկական 2- րդ հետևակային բրիգադի մասին է:
[68] Խոսքը այդօրվա իշխող՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության մասին է:
[69] Խոսքը փոխգնդապետ Վահան Տեր-Առաքելյանի մասին է, որի նշանակման վերաբերյալ ժամանակակիցները կատակում էին, թե <<… *կուսակցությունը Վահանին Փիրումյանի մոտ դայակ է նշանակել* >>:

*ասպետ, սակայն բացարձակապես անպատրաստ էր այդ պաշտոնի համար: Ռազմական գերատեսչության առաջադրած Գլխավոր Շտաբի փոխգնդապետ Շնեուրի թեկնածությունը Կառավարության հավանությանը չէր արժանացել: Առհասարակ պետք է ասել, որ բանակում փոքրիշատե երևացող պաշտոններում նշանակումներ կատարելու հարցում Ռազմական նախարարությունը կապանքված էր ոչ միայն Կառավարության, այլ նաև , և առավել շատ՝ կուսակցության կողմից: Ուստիև առանձին անձեր, որոնք ցանկանում էին բանակում զբաղեցնել այս կամ այն պաշտոնը, կուսակցության անդամների հետ ծանոթության շնորհիվ միշտ էլ կարողանում էին ստանալ ցանկալի նշանակումը: Այդպես էր եղել, հավանաբար նաև գեներալ Փիրումովի նշանակման պարագայում:*

*Այդպիսի յուրատեսակ <<քավորությունը>>, բացի Զինվորական իշխանությունների վարքն ու համարումը նսեմացնելուց, վնասում էր նաև գործին, քանի որ նշված եղանակով այս կամ այն պաշտոնին էին նշանակվում անձինք, որոնք դրա համար բացարձակ պիտանի չէին, կամ, լավագույն դեպքում չէին համապատասխանում այդ պաշտոնին: Գեներալ Փիրումովը բերդի պարետի պաշտոնին չէր համապատասխանում ոչ ռազմական գիտելիքներով, ոչ իր ընդհանուր զարգացածությամբ և ոչ էլ իր խելքով… >>*[70]:

Ինչպես տեսնում ենք, իրականում ամեն ինչ հայերիս համար չափազանց պարզ է ու քաջածանոթ. այդօրվա Հայաստանում ինչ-որ ազդեցիկ մարդկանց ընդամենը պետք էր <<իրենց մարդուն>> մի <<հարմար՝ լավ գործի>> դնել: Անկախ նրանից, թե տվյալ անձը իր հնարավորություններով կարող է առանց պետությանը վնաս տալու վարել այդ պաշտոնը թե ոչ: Ըստ գեներալներ Նազարբեկյանի և Սիլիկյանի. <<…*Փիրումով Կարսի բերդի կոմենդանտ նշանակվեց անձնական շահերի և կրքերի առանցքում… Կարս ուղարկեցին մի մարդու, որ ոչ մի կերպ համապատասխան չէր Կարսի կոմենդանտի բարձր կոչմանը…*>>[71]: Ռուբեն Տեր-Մինասյանն էլ այն կարծիքին է եղել, որ << … *գեներալ Փիրումով անգոյն և որևէ ձեռներեցութիւնից զուրկ մի մարդ էր…*>>[72]: Բայց թե…եղել է այն, ինչ եղել է:
Ինչևիցե, Փիրումյան-Հովսեփյան գեներալական այդ զույգին էր վստահված Կարսի նահանգում լուծել այնտեղի համար նախատեսված հայկական կառավարության ծրագրի ռազմական հատվածի իրագործման խնդիրները: Եթե մտաբերենք Ալ.Խատիսյանի ներկայացրած Կարսի նահանգում ՀՀ կառավարության անելիքները,

---

[70] ՀԱԱ, Ֆ.45, ց.1, գ.32, թթ.11-13:

[71] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 387, 388, 403; Փիրումյանի շտաբի պետ Վահան-Տեր Առաքելյանի վկայությամբ, գեներալ Փիրումյանը, որը բավականին հակված էր խնավարք դրսևորումների, իրականում իրեն տեսնում էր մայրաքաղաքում՝ ավելի շոշափելի ու բարձր փաշտոն զբաղեցնելիս: Ըստ այդմ, նա բավականին դժգոհ էր իրեն <<գավառ>> ուղարկելուց և, ըստ էության, չէր զբաղվում Կարսի զորապետի իր անմիջական պարտականություններով, այլ ամբողջապես տրվել էր իր անձնական կյանքին; տե՛ս **Ваан Тер-Аракелян,** Начальник штаба крепости Карса, Карс перед падением, http://www.aniarc.am/2015/10/29/vahan-ter-arakelyan-kars-1919/, 29 окт. 2015г:

[72] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 165:

ապա ինքնըստինքյան պարզ է դառնում, որ զինվորական իշխանությունը նահանգում պետք է լուծեր հետևյալ խնդիրները. մի կողմից իրեն ենթակա զորքի մարտական պատրաստականությունը հասցներ այն մակարդակի, որ այն կարողանար հետ մղել հնարավոր թուրքական ներխուժումը և անցնել հակահարձակման, մյուս կողմից՝ ռազմա-ստրատեգիական առումով նահանգը դարձներ մի հզոր պլացդարմ, որտեղից դեպի արևմտյան հայկական գավառներ պետք է շարժվեր հայկական զինուժը: Քաղաքացիական իշխանության պարագայում մենք տեսանք, որ իշխանության այդ թևի ամենաբարձր օղակներում նահանգի դերակատարման ու նշանակության վերաբերյալ կար այն կարևոր փաստի գիտակցումն ու ընկալումը, որ <<… *Կարսի նահանգը Հայեաստանի Հանրապետութեան տարածութեան ոչ միայն կէսից աւելին էր, նա կազմում էր նրա և մեծագոյն ինտերեսը, այդ հասկացողութեան պետական լայն իմաստով… Կարսի նահանգը դառնում էր այսուհետև այն կենտրօնը, որտեղից պէտք է ծաւալվէր մեր պետականութիւնը>>:*
Իսկ որպես ինչ էին դիտում Հայաստանին միացված այդ տարածքը և ինչպես էին գնահատում նրա դերն ու նշանակությունը հայկական անկախ պետության ընդլայնման ու զարգացման համատեքստում նահանգի զինվորական իշխանությունները և առաջին հերթին՝նրա բարձրագույն հրամանատարությունը՝ ի դեմս այդ երկու գեներալների: Թեև երկու գեներալներն էլ արմատներով բուն հայաստանյան հողի ծնունդ էին[73], սակայն մայրենի լեզվին չէին տիրապետում և իրենց կյանքի <<հայաստանյան>> այդ հատվածում, միևնույնն է՝ իրենց անցած ուղիով, թրծվածքով, մտածելակերպով և, առհասարակ, իրենց ամբողջ էությամբ նրանք ռուսական բանակի տիպիկ սպաներ էին, որոնք ճակատագրի բերումով հիմա էլ հայտնվել էին անկախացած Հայաստանի զինված ուժերում: Ինչպես, օրինակ, Կովկասասյան ռազմաճակատի քայքայումից հետո նույն հայաստանյան զինված ուժերում էին հայտնվել ցարական բանակի ազգությամբ ոչ հայ սպաներ Զինկևիչը, Կորոլկովը, Պերեկրյոստովը, Շնեուրը, Սակիլյարին, Բաբաջանովը և շատ ուրիշներ:

Ցավոք սրտի, այդ երկու գեներալներից և ոչ մեկը էպիստոլյար կամ հուշագրային որևիցե ժառանգություն չի թողել և վերը բերված հարցի պատասխանը մենք ստիպված ենք փնտրել և գտնել ինքներս՝ բնականաբար, հիմք ընդունելով առաջին հերթին նրանց 18-ամսյա գործունեությունը Կարսի նահանգում և դրա արդյունքներն ու հետևանքները:

Փոքրիշատե տրամաբանված և հիմնավորված պատասխան գտնելու համար, թերևս, անհրաժեշտ է թեկուզ սեղմ, բայց պարտադիր անդրադարձ կատարել նախ այն հարցին, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ օրերին Հայաստանի

[73] Դանիել-բեկ Փիրումյանը՝ Ղարաբաղի Նախիջևանիկ գյուղից էր, իշխանական տոհմից, Հարություն Հովսեփյանը՝ ներկայիս Վրաստանի Թեթրի-Ծղարոյի շրջանի հայկական Դաղեթ-Խաչեն գյուղից, արմատներով՝ նույնպես ղարաբաղցի:

Հանրապետության բանակն, առհասարակ: Խոսքը, նախևառաջ, այդօրվա հայկական բանակի՝ իր էությամբ ազգային բանակ լինել-չլինելու մասին է:

1917 թ. վերջերից ,- երբ մեծ թափով սկսեց քայքայվել կովկասյան ռազմաճակատը,- մինչև 1918-ի մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի անկախության հռչակումը Արամ Մանուկյանը երևանյան տարածաշրջանում հասցրել էր իրականացնել զինուժի կազմակերպման մի շարք միջոցառումներ, որոնք, թեև արտաքնապես հակասում էին ավանդական ու դասական զինվորական գործի օրենքներին ու ավանդույթներին, սակայն զինուժի կազմակերպման այդ կիսաժողովրդական-կիսաբանակային մոտեցումները իրենց ճշմարիտ ու իրավիճակին միանգամայն ադեկվատ լինելը ապացուցեցին մայիսյան ճակատամարտերի ժամանակ, երբ հայկական այդ զինուժը կանգնեցրեց և ապա պարտության մատնեց թուրքական կանոնավոր բանակի զորամիավորումները[74]: Հայաստանի անկախությունն հայտարարելուց հետո նորանկախ երկրի կառավարությունը որոշեց բանակային գործը վարել այնպիսի ձևով, ոնց որ այն ընդունված էր մի շարք այլ երկրներում՝ մասնավորապես և հատկապես՝ցարական Ռուսաստանում[75]: Իսկ այդ օրերին ցարական բանակի ավանդույթների ու ձգտումների ամենացայտուն ժառանգորդն ու շարունակողը Հայաստանին առավել մոտ տեղակայված և այստեղ մնացած սպայության հետ սերտ կապերի մեջ գտնվող դենիկինյան բանակն էր: Արդյունքում, ինչպես նշում է Հայաստանի Հանրապետության ամենահայտնի զինվորական գործիչներից մեկը՝ Ռուբեն Տեր-Մինասյանը .*<<[Հայաստանի] զինուորական նախարարութիւնը պարզ մանրանկարն էր ռուս զինուորական նախարարութեան. Իսկ բանակը իր ոգիուով, իր վարժութեամբ եւ գործելակերպով, նոյնն էր ինչ ռուսական որեւէ զորաբաժին: Ի զուր չէ, որ հայկական բանակը կրհամարէին Դենիկինի բանակի մի մասը. Նմանութիւնը մեծ էր թե կազմակերպութեան, թե ձգտումների մեջ>>*[76]: Ռուսական կայսերական բանակի նմանակին հավակնող այդ բանակը ուներ մի յուրահատկություն. ձևականորեն հանդիսանալով ազգային պետության բանակ, իրականում իր էությամբ նա այդպիսին չէր. *<<Զինվորական գործը մեր երկրում եկել էին վարելու ռուսները և ռուսախօսները և պետական այդ յիմունքը մինչև վերջը մնաց նոցա ձեռքում և նոցա կամայական հաճոյքից կախված>>*[77]*:*

Ինչպես և ցանկացած բանակի դեպքում, հայկական բանակի հիմքը նույնպես կազմում էր նրա սպայակազմը: Այն իրենից ներկայացնում էր ազգությամբ ռուս, կամ ցարական բանակի այլազգի սպաներ և ազգությամբ հայ սպաներ, որոնց ճնշող մեծամասնության մոտ բացի ազգանունից ուրիշ և ոչ մի բան չկար հայկական. *<<…հայկական կառավարութիւնը գալիս էր այդ աշխարհը* (խոսքը Կարսի նահանգի

---

[74] Տե՛ս **Ռուբէն,** հայ յեղափոխականի մը յիշատակները, հ.7, Երևան, 1990, էջ 330-331:
[75] Տե՛ս **Ռուբէն,** նշվ.աշխ., էջ 331:
[76] **Ռուբէն,** նշվ.աշխ., էջ 332:
[77] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 202:

մասին է- Վ.Հ.) *միայն ռուսներով և այն հայերով, որոնք ոչ մի առնչություն չունենալով հայիութեան հետ, նոյնիսկ ծաղրում էին իրանց մայրենի լեզուն...>>:*[78]

Թեև արմատներով հայ, բայց նրանք, միևնույնն է, ռուսական բանակի սպաներ էին և չափազանց խնդրահարույց էր, թե ինչպես են նրանք աշխատելու շարքային համակազմի հետ, դաստիարակելու և կոփելու նրանց. <<*Թէ ինչպէ՞ս այդ օտարացած սպայիութիւնը, անտեղեակ հայ լեզվին, երկրին, մեր պահանջներին և մեր պատմութեան իմաստին, պէտք է կրթէր հայ վաշտերը, դա ոչ միայն հարց էր, այլ մտատանջութիւն, որ պէտք է ունենար պետական բնոյթ… Գեներալներն ու սպաները բանակի մի կողմն էր, իսկ զինվորությունը, մասսան, բուն հայիութիւնը, այլ բանակ էր, տարբեր հոգեբանութեամբ, մտածելակերպով և ազգային կորովով >>*[79]*:*

Չվախենանք ծայրահեղացումից՝ նրանք ոնց որ համարվել էին, այդպես էլ այստեղ՝ նորանկախ Հայաստանում շարունակում էին համարվել և լինել իրենց էությամբ նույնպես ռուս սպաներ: Եվ նրանց համար գերագույն հեղինակությունն ու հրամանատարությունը ոչ թե հայկական բանակի, կամ նույնիսկ հայկական պետության բարձրագույն ղեկավարությունն էր, այլ ռուսաստանյան գործող զորամիավորումների, տվյալ դեպքում, ինչպես նշվեց, Հայաստանին առավել մոտ տեղակայված դենիկինյան բանակի հրամանատարությունն էր: Ամիսներ շարունակ Հայաստանի Հանրապետության բանակի Գլխավոր շտաբի պետը դենիկինյան բանակի գնդապետ Զենկևիչն (նաև՝ Զինկևիչ) էր, որն համատեղությամբ հանդիսանում էր նաև դենիկինյան հետախուզության ռեզիդենտը Հայաստանում[80]: Դենիկինյան մեկ այլ հետախույզ այդ օրերին զեկուցում էր իր հրամանատարությանը. <<*Հայկական բանակը, որտեղ ռուսական սպաները մեծ թիվ են կազմում, շատ լավ է տրամադրված: Նրանք բացարձակապես չեն ճանաչում կառավարությունը և անհրաժեշտության դեպքում կարող են հեղաշրջում իրականացնել…>>*[81]: Անդրադառնալով ՀՀ բանակին այդ նույն տեսանկյունից, նույնանման գնահատական է հնչեցնում նաև Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյանը. <<*Զինվորական իշխանութիւնը, այդ ռուսները և ռուսախօսները, մի ցաւ էին երկրի համար… զինվորականների այդ ազդեցութիւնը կառավարչական խաւերում այնչափ մեծ էր, որ եթէ այդ ռուսների և ռուսախօսների մէջ գտնվէր մի քիչ թէ շատ ընդունակ և բանիմաց մարդ, նա մեծ յաջողութեամբ կարող էր տապալել այդ երերուն կառավարութիւնը և զինվորական դիկտատուրա յայտարարել: Այդ գնդապետները և ձգտում էին այդ գերիշխանութեանը, բայց նոքա ոչ շնորք և ոչ սրտոտութիւն ունէին*

---

[78] **Նույն տեղում**, էջ 201:

[79] **Նույն տեղում**, էջ 203

[80] Տե՛ս **Վ. Հարությունյան**., Հայ-վրացական պատերազմ (1918թ.) Նյութեր և փաստաթղթեր, Երևան, 2014, (այսուհետ՝ **Վ. Հարությունյան**., Հայ-վրացական…) էջ 145:

[81] **Михайлов В.В.,** Отношения Республики Армении и руководства Вооруженных сил Юга России в 1918-начале 1919года, Вестник Северного (арктического) федерального университета, серия:гуманитарные и социальные науки, 2015, вып.4, сс.27-34; Государственный архив Российской Федерации (ГАРФ). Фонд (Ф.) 446, Опись (Оп.) 1, Дело (Д.), 9, Лист (Л.) 33; 477,1,1:

*այդ քայլի համար: Նրանք բաւականանում էին և նորանով, որ դաշնակցութիւնը պատկառում էր նոցա առաջ և կատարում նոցա բոլոր քմահաճ պահանջները>>>>*[82]: Դա էլ պետք է ասել, որ այն ծայրահեղ պայմաններում, որ ծնունդ առավ և սկսեց հաստատվել Հայաստանի Հանրապետությունը, այդ պետության ռազմա-քաղաքական ղեկավարությունը ոչ ժամանակ ուներ և ոչ էլ որևիցե իրական ռեսուրս, որպեսզի նույնիսկ մտքով կարողանար անցկացնել խիստ ազգային բանակ ստեղծելու և կայացնելու նպատակը: Եվ բնական է, որ երկրի ղեկավարությունը՝ թեև ներքին դժկամությամբ, բայց պետք է նույնիսկ ուրախ լիներ, որ իր տրամադրության տակ են հայտնվում թուրքական բանակի դեմ հաղթական մարտեր վարած ռուսական բանակի սպաները՝ լինեն դրանք հայազգի, բայց ռուսախոս ու ռուսամետ, թե առհասարակ, ռուսներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Այդպիսին էր այդ օրերին դեպքերի դասավորությունն ու ընթացքը: Չմոռանանք, օրինակ, որ առնվազն մինչև 1918թ. մայիսի կեսերը Կովկասյան ռազմաճակատի հրամանատարն էր դեռևս ցարական գեներալ Լեբեդինսկին և հենց նրան, որպես անմիջական վերադասի այս կամ այն հարցով այդ օրերին դիմում էր հայկական կորպուսի հրամանատար Նազարբեկյանը[83]: Եվ հասկանալի է, որ լավ կյանքից չէ, որ Հայաստանի ղեկավարությունը հետագայում էլ, երբ դենիկինյան զորքերը բոլշևիկյան ուժերի հարվածներից սկսեցին քայքայվել ու նահանջել, մտադիր էր այդ զորամիավորումների մնացորդներով համալրել Հայաստանի բանակը: Ճիտ է՝ *<<…ռուս զինվորականների այնպիսի քանակի, որը քաղաքական տեսակետից լինի անվնաս>>*[84]:

Միանգամայն հասկանալի է, որ այդ օրվա Ռուսաստանը՝ թեկուզև իր տարբեր տարածքներում հաստատված տարբեր ռազմաքաղաքական ղեկավարությամբ, միևնույնն է, անկասկած ունենալու էր իր <<մնացորդային>> ազդեցությունը այդօրվա Հայաստանի վրա: Մի կողմ թողնելով <<հեռավոր երկրամասերը>>, շատ հակիրճ խոսենք ավելի մոտ՝Մոսկովյան և հարավային ռուսական երկրամասերի քաղաքական շրջանակների մասին:

Սկսած 1918 թ. օգոստոսի վերջերից՝ Բաքվի կոմունայի անկումից հետո, որտեղ որոշ ժամանակ կայացել էր դաշնակցության և բոլշևիկների դաշինքը ընդդեմ թուրքերի, Խորհրդային Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի Հանրապետության նկատմամբ միարժեքորեն թշնամական էր՝ նա կտրականապես չէր ճանաչում Հայաստանի անկախությունը[85], իսկ երեկվա դաշնակից Դաշնակցությունն էլ այնտեղ հայտարարված էր օրենքից դուրս ու շատ խիստ պատժելու ենթակա: 1918-ի

---

[82] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 23,78:
[83] Տե՛ս Трапезундская и Батумская мирные конференции. Февраль-Май 1918 года, Документы и материалы, Первое издание, Тбилиси, 2018, сс. 414-415.
[84] **Эльчибекян А**. Белогвардейщина юга России и дашнаки, Изв. Акад. наук Армян. ССР. Сер.: Обществ. науки. 1950. № 9. С. 29.
[85] Տե՛ս **Михайлов В.В.,** նշվ. աշխ., էջ 29:

աշնանից մինչև 1919թ. աշուն –1920 թ. ձմեռ հատվածում այդօրվա ռուսական ռազմա-քաղաքական միավորումների հետ անկախ Հայաստանն ամենասերտ կապերն ուներ դենիկինյան շարժման հետ, որտեղից, ի դեպ ամենադժվար պահերին ստացել էր նաև որոշակի ռազմական ու պարենային օգնություն[86]: Իսկ հայկական բանակն էլ, համապատասխանաբար, փաստացի գտնվում էր, մեղմ ասած, դենիկինյան հրամանատարության զգալի ազդեցության ներքո: Իսկ ինչպիսին էր դենիկինյան Սպիտակ շարժման դիրքորոշումը Հայաստանի պետական անկախության հարցում: Ահա գեներալ Անտոն Դենիկինի <<դիրեկտիվը>> այդ կապակցությամբ. <<…*ամբողջապես համակրելով հայկական ազգության ձգտումներին՝ միտված նրա միավորմանը իր էթնոգրաֆիկ սահմաններում և համարելով, որ հայերը իրենց պատմական և տնտեսական շահերով սերտորեն կապված են Միասնական, Անբաժանելի Ռուսաստանի հետ, որի կազմի մեջ է մտնում Հայաստանի առավել ծաղկուն մասը, Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը հնարավոր է համարում Հայկական մարզերի* ***ժամանակավոր ինքնուրույն կառավարումը*** (ընդգծումը մերն է- Վ.Հ.) ՝ *մինչև համառուսաստանյան պետական իշխանության հաստատումը, չունենալով Հայաստանի նկատմամբ որևիցե ագրեսիվ նպատակներ*>>[87]: Իսկ Հայաստանի Հանրապետության արտգործնախարարը 1919-ի աշնանը գրում էր Վրաստանում մեր ներկայացուցչին, որ Դենիկինը <<…*շարունակում է Անդրկովկասյան Հայաստանը համարել ռուսական գուբերնիաներից մեկը, իսկ մեր բանակը՝ որպես ռուսական դիվիզիաներ…*>>[88]: Այսինքն, հետհոկտեմբերյան Ռուսաստանի և ոչ մի ռազմա-քաղաքական միավորում չէր էլ թաքցնում, որ չի պատրաստվում ճանաչել Հայաստանի պետական անկախությունը: Ամենամեղմը, թերևս դենիկինյան մոտեցումն էր. անհրաժեշտ է նպաստել Հայաստանի անկախության պահպանմանը, մինչև <<տեսնենք, թե Ռուսաստանում ինչ է լինելու>>: Դրանից հետո Հայաստանն ինքնըստինքյան կհայտնվի արդեն Ռուսաստանի կազմում: Դենիկինյան Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունը 1918 թ. նոյեմբերին նույնիսկ ուղղակիորեն դիմել էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որպեսզի վերջինս իր հնարավորությունների շրջանակներում անդրկովկասյան տարածաշրջանում պահպաներ ցարական Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը[89]: Եվ միանգամայն բնական է, որ Մուդրոսի զինադադարից հետո դենիկինյան կողմը բավականին լուրջ հավակնություններ ուներ Կարսի մարզի տարածքի և նյութական

---

[86] Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918 – 1920 թթ.), Երևան, 2012, էջ 106:

[87] **Михайлов В.В.,** նշվ. աշխ., էջ 32; **Деникин А.И.** Очерки русской смуты. Т. IV. Вооруженные силы Юга России. Берлин, 1925. 248 с., стр.138; տե՛ս նաև **Петросян Г.А.,** Отношения Республики Армения с Россией (1918–1920 гг.). Ереван, 2012. 424 с., **Пученков А.С.,** Национальная политика генерала Деникина (весна 1918 – весна 1920 г.). СПб., 2012. 338 с.

[88] **Эльчибекян А**. Белогвардейщина юга России и дашнаки, Изв. Акад. наук Армян. ССР. Сер.: Обществ. науки. 1950. № 9. С. 28–29; **Գ. Պետրոսյան,** նշվ.աշխ., էջ 8-9:

[89] Տե՛ս **Эльчибекян А**. Белогвардейщина юга России и дашнаки, Изв. Акад. наук Армян. ССР. Сер.: Обществ. науки. 1950. № 9. С. 25–36.

պաշարների նկատմամբ[90]: Ըստ այդմ էլ, Հայաստանի Հանրապետության բանակը, որի ուղղակի պարտականությունն էր հենց Հայաստանի անվտանգության ապահովումն ու պետական անկախության պաշտպանությունը, իրականում, ասես, կոչված էր ապահովել նախկին ցարական Ռուսաստանի մաս կազմող <<Հայաստան>> պայմանական անվամբ մի ինչ-որ տարածքի հնարավորինս պահպանված լինելը, որը հետո միացվելու էր <<Միասնական և Անբաժանելի>> Ռուսաստանին[91]:
Հայկական բանակի այդօրվա սպայակազմի համար բացարձակապես խորթ և անհասկանալի էին անկախ հայկական պետականության միտքն ու գաղափարը: Նրանք համեմատում էին այդօրվա հայկական պետությունը իրենց <<իսկական>> պետության՝ Ռուսաստանի հետ և խորը արհամարանք ու հեգնանք դրսևորում այն պետության նկատմամբ, որի բանակում այդ պահին ծառայում էին: Այլ կերպ չէր էլ կարող լինել. եթե անգամ մի կողմ դնենք ռուսազգի զինվորականներին, ապա ցարական բանակից հայկական բանակ մեխանիկորեն տեղափոխված հայազգի սպաները իրենց ամբողջ էությամբ, ինչպես ասում են, իրենց <<ուղն ու ծուծով>> ռուսահպատակ էին և միանգամայն բնական է, որ այդպիսին էլ մնալու էին և այդ խառը ռազմաքաղաքական իրավիճակում նրանց համար ապագայի միակ հույսն ու հավատքը ոչ թե անհասկանալի և խորթ պատմական հայրենիքի տարածքում ինչ-որ անհասկանալի պետության հաստատումն ու կայունացումն էր, այլ Ռուսաստանի՝ այդ պահին ի դեմս դենիկինյան բանակի հետ կապող-չկտրվող պորտալարն էր:

Քավ լիցի, ոչ մեկը չի պատրաստվում,-և ոչ մեկը իրավունք էլ չունի,- ինչ-որ մեղադրանքներ հնչեցնել այդ զանգվածի, այդ անձերի նկատմամբ: Պարզապես պատմական այդ էքստրեմալ պայմաններում այնպիսի կարևորագույն մարմնում, ինչպիսին է պետության բանակը, ֆոկուսացված ձևով դրսևորվեցին մեր այն ազգային խնդիրները, որ կուտակվել էին նախորդ դարերի ընթացքում: Տվյալ դեպքում խոսում էր ազգի մասնատված, կիսկսված ու տրոհված լինելու փաստը: Եվ այդ հատվածների՝ առաջին հերթին ռուսահայության ու թուրքահայության, միմյանցից շատ ու շատ հեռու լինելու իրողությունը՝ իրենց աշխարհընկալմամբ, արժեհամակարգով և առհասարակ, քաղաքակրթական մոտեցումներով: Այնպես որ, Հայաստանի Հանրապետության բանակում այդ պահին ծառայող հայազգի սպայակազմի <<ոչ հայեցի>> դիրքորոշումը պայմանավորված էր ամենևին ոչ նրանով, որ այդ բանակում միաժամանակ <<իրար գլխի էին հավաքվել>> մեծ քանակով վատ մարդիկ, այլ ուղղակի հետևանքն էր այն կեցության, որ ունեցել էր հայ ազգը նախորդ դարերում: Եղած որոշ բացառություններ՝ թե դեպքերի, թե անձերի առումով, ինչպես ասում են, <<եղանակ չէին փոխում>>, այլ մեկ անգամ ևս ընդգծում էին ընդհանուր օրինաչափության էությունը. հայկական պետությունը պահում էր հայազգի սպաներով համալրված բանակ, բայց այդ բանակի սպայակազմի մեծ մասին

[90] Տե՛ս **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը …, էջ 79-83; **Վ.Հարությունյան**, Հայ-վրացական… էջ 98-100:
[91] Տե՛ս **Эльчибекян А.**,նշվ. աշխ.էջ 25-36:

միանգամայն խորթ էին այդօրվա հայոց ազգային իղձերն ու ձգտումները, հայ ազգի պրոբլեմները:

Կարսի ռազմավարական ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը տեղակայեց մի զորաբաժին, որն իր բոլոր ցուցանիշներով <<բավարարում >> էր վերը նկարագրված բանակի տիպիկ մի զորախումբ լինելու բոլոր <<պահանջներին ու չափանիշներին>>: Օրինակ, զորախմբի այնպիսի կարևոր մի մարմին ինչպիսին էր նրա հետախուզությունը, ընկալվում էր հետևյալ կերպ. <<*Զինվորական խուզարկու մարմինը, որ յանձնված էր Կարսում մի ռորմելի ռուսախոս հայ գլխապետի, մի ծաղր էր և ոչ լուրջ հաստատութիւն>>*[92]: Իսկ նահանգի սահմանների պաշտպանությունը իրականացնում էր մի ջոկատ, որի <<…*սահմանապահ 17 ռուս սպաները կազմակերպեցին իրանց զօրամասերը անցորդներից և բախտախնդիրներից և իրանք էլ այդ հրոսակախմբերի գլուխը անցած, սկսեցին աջ ու ձախ թալանել…>>*[93]:
Կարսի զորախմբի հրամանատարական կազմում չկար փոքրիշատե ազգային նկարագիր ունեցող, գոնե որոշ խարիզմայով օժտված մի կերպար: Միայն 1920 թ. աշնանը կառավարությունը Կարս տեղափոխեց Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարի նշանավոր և իրոք, խարիզմատիկ դեմքեր Սեպուհին և Սմբատին (Մախլուտոյին), ինչը, բնականաբար, արդեն չէր կարող որոշակի ազդեցություն ունենալ դեպքերի կործանարար ընթացքի վրա, առավելևս՝ կանգնեցնել այն:

Ճիշտ է, զորախմբի կրտսեր սպայական կազմը համալրված էր նաև անկախության ամիսներին բանակ մուտք գործած նոր՝ տեղական կադրերով: Բայց վերջիններս, ժամանակակցի դիպուկ դիտարկմամբ՝ երեկվա սափրիչները, գործակատարներն ու տիրացուները, որևիցե զինվորական կրթություն չէին ստացել և չափազանց աղոտ պատկերացումներ ունեին բանակի, առավելևս, բանակում սպայական կազմի անելիքների և դերակատարման մասին: Զորակոչվող շարքային համակազմն էլ իր ճնշող մեծամասնությամբ նախկին Ռուսահայաստանի բնակիչներն էին՝ հիմնականում գյուղացիներ: Շարքային զինվորների և ոչ բարձր կոչումներով սպայակազմում ներգրավված էին նաև Բաքվի կոմունայի ջոկատներում, Ռուսաստանի Կարմիր բանակում որոշ ժամանակ ծառայած հայ զինվորականներ: Նրանք մեծ թիվ չէին կազմում, բայց նրանք էլ՝ բանակը քայքայող իրենց հետ բերած բոլշևիկյան <<խոսքն ու միտքը>> հետո կասեն…

Երբ 1919թ. վարչապետ Ալ.Խատիսյանը այցելել էր Կարսի մարզ, ապա Սարիղամիշում տեղի կայազորի զորամասերի շքերթը դիտելուց հետո կիսվել էր նահանգապետ Ղորղանյանի հետ. <<*Ես միանգամայն բաւարարված եմ մեր*

---

[92] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 163:
[93] **Նույն տեղում**, էջ 201:

*շարքային զինվորի յուսալից տեսքով և եթէ մեզ վիճակվի պատշաճ ազգային դաստիարակութիւն տալ այդ զինվորութեանը, մենք կոպած կը լինենք մեր անկախութեան պատվանդանը...*>>[94] : Ասվածը հանրահայտ ճշմարտություն է. զինվորական հանդերձանք և հրացան կրող տղամարդկանց զանգվածը առանց այդ <<դաստիարակչական աշխատանքի>> երբևիցե պետության հենարան ու այն պաշտպանող բանակ չի եղել և չի էլ լինի: Առանց դրան՝ առանց համապատասխան ու անհրաժեշտ <<քաղպարապմունքների>>, այդ զանգվածը պետականության պաշտպանից շատ արագ վերածվում է պետականությունը անպաշտպան թողնող աղետաբեր վտանգի:

Երկրում ամբողջապես, իսկ մարզում՝ հատկապես, անհրաժեշտ պայմանների առկայության ու համապատասխան մթնոլորտի ձևավորման պարագայում հնարավոր է, որ վերը նշված <<խառը>> սպայակազմը կարողանար Կարսի ուղղությամբ պատրաստել մարտունակ և թշնամուն հակահարված տալու ընդունակ զորաբանակ: Համապատասխան մթնոլորտի առկայության դեպքում ցարական բանակի կադրային սպաները <<կծածկեին>> ու կլրացնեին նորակոչ հայ սպաների գիտելիքների ու փորձի պակասը, իսկ վերջիններս էլ հանդես կգային յուրահատուկ միջնորդի ու կամրջողի դերում հայ շարքային զինվորի և ռուսախոս հայ, կամ ռուս սպայի միջև: Առավելևս, որ բանակ զորակոչված շարքային կազմը, ինչպես նշվեց, իր ճնշող մեծամասնությամբ երեկվա ռուսահպատակներն էին, որոնց համար ռուսերենը՝ հատկապես հրամանների ու հրահանգների հատվածով, այնքան էլ էքզոտիկ մի բան չէր: Այնպես որ, այդօրվա հայկական զինուժի, այդ թվում և Կարսի ուղղությամբ, սպայակազմի հիմնականում ռուսախոս լինելը չէր կարող ինքնին, զուտ այդքանով հանդիսանալ բանակի քայքայման հիմնական պատճառներից մեկը: Բանակը հետագայում չկռվեց ոչ այն պատճառով, որ զինվորը չհասկացավ ռուսերենով հնչեցրած հրամանը, այլ այն պատճառով, որ զինվորն ու սպան թե առանձին- առանձին, թե երկուսը միասին, լցված և միավորված չէին այն գաղափարով, հանուն որի անհրաժեշտ էր կռվել ու հաղթել: Բերենք ուշագրավ մի դրվագ. Կարսը հանձնելուց մեկ-երկու օր անց, դեպի Ալեքսանդրապոլ նահանջի ընթացքում, գեներալ Հովսեփյանի մոտ, որը Կարսի անկումից օրեր առաջ տեղափոխվել էր թիկունքային հատված, մի խորհրդակցություն է գումարվում: Այդտեղ արևմտահայ փոխգնդապետ Տիգրան Բաղդասարյանը, որ ութերորդ գնդի հրամանատարն էր, առաջարկում է հավաքել, կենտրոնացնել դեռևս լրիվ ցաք ու ցրիվ չեղած հայկական բանակի հատվածները, գրոհել Կարսը և հետ գրավել այն: Հիմնավորելով իր առաջարկը, որ նախ հակառակորդի ուժերը շատ մեծ չեն, իսկ երկրորդը, որ քաղաքը գրավելուց հետո թուրքական զորքը զբաղված է թալանով և նրա համար բավականին դժվար կլինի արագ մոբիլիզացվել և դիմադրություն կազմակերպել: Այդ առաջարկությանը կտրականապես դեմ է արտահայտվում

[94] **Նույն տեղում**, էջ 313:

գեներալ Հովսեփյանը՝ այն հիմնավորմամբ, որ առաջարկության հեղինակը անտեղյակ է հայկական բանակում տիրող ներկա հոգեբանությանը. << *Կարծես թէ Բաղդասարեանը չինական բանակի մէջ գտնուի, մէր զինուորը չի կռուում, չի կռուում եւ չի կռվում*>>[95]: Ինչին հետևում է Բաղդասարյանի իրոք հիմնավորված ու շեշտակի պատասխանը. <<*Դժբախտաբար, զինուորէն առաջ մէր սպայութիւնը,- ռուսական բանակէն մնացած,- չէր ուզեր կռուիլ*>>[96]:

Մինչդեռ, ինչպես հայտնի է, խարիզմատիկ կերպար և ընդգծված գաղափարական անձեր հանդիսացող զորահրամանատարներ Դրոյի և Նժդեհի զորաջոկատները համալրված էին նույն հայ զինվորներով, բայց նրանք, խոշոր հաշվով, պարտություններ չունեցան, թեև միշտ էլ կռվել են իրենց թվապես գերազանցող հակառակորդի դեմ:

Ունենալով Կարսի ուղղությամբ մեր զորախմբի պատկերը, անդրադառնանք մեր կարևորագույն հարցին. որպես ինչ էր դիտվում Կարսի նահանգը 1919թ. գարնանը այնտեղ տեղակայված հայկական բանակային զորախմբի բարձրագույն հրամանատարության և, առհասարակ, նրա պրոֆեսիոնալ սպայակազմի հիմնական՝ տրամադրություն ու մթնոլորտ ստեղծող մասի կողմից: Վերը շարադրվածը հանգեցնում է միայն մեկ հնարավոր պատասխանի. Կարսի նահանգը նրանց պատկերացումներում դիտվում էր ոչ երբեք որպես <<…*այն կենտրոնը, որտեղից պէտք է ծաւալվէր մեր պետականութիւնը*>>, այլ ընդամենը որպես ժամանակավորապես զբաղեցրած մի տարածք, բնականաբար՝ իրենց ոչ հարազատ, որն իրենք ընդամենը պարեկելու են, քանի որ շուտ թե ուշ՝ մնացած վերահսկվող հայկական տարածքների հետ միասին, այն կրկին հայտնվելու է Ռուսաստանի կազմում: Կարևոր չէ, թե որ և ինչպիսի Ռուսաստանի: Բայց անհապաղ և միայն՝ Ռուսաստանի: Չմոռանանք՝ դրսում 1919թ. գարունն էր, այսինքն այն օրերը, երբ դենիկինյան կամավորական շարժումը գնալով թափ և ուժ էր հավաքում և տպավորություն կար, թե բոլշևիկների օրերը հաշված են և ուր որ է կրկին հառնելու է <<այն>> Ռուսաստանը: Էլ ինչ Հայաստան, ինչ անկախություն, ինչ հայկական պետություն:

Այնպես որ Կարսում տեղակայված հայկական զորախումբի հրամկազմը նահանգն իր տարածքով ընկալում էր ավելի շատ որպես իր կողմից ժամանակավորապես զբաղեցրած, իսկ ավելի ճիշտ, -չվախենանք այդ բառից,-օկուպացված տարածք, այլ ոչ թե <<…*այն կենտրոնը, որտեղից պէտք է ծաւալվէր մեր պետականութիւնը*>>: Իսկ ինչպիսին պետք է լիներ նման տրամադրություններով ու ընկալումներով համակված, նման <<օրակարգով>> առաջնորդվող այդ զորախմբի պահվածքն ու

---

[95] Երկու տարի հայկական բանակին մէջ / **Յովհ. Սահակյան**; Հայ. Հանրապետութեան վերջալոյսին/ **Տ.Բաղդասարեան**, Փարիզ, 1937, 288 էջ, էջ. 252-253:

[96] Նույն տեղում:

գործունեությունը այդ տարածքում: Պատասխանը միակն է ու նա է, որը եղել է բոլոր նման դեպքերում՝ սկսած մարդկության ծագման օրվանից՝ ***թալան***:
Իսկ Կարսում՝ թե զինվորական-ռազմական ոլորտում, թե նահանգում ընդհանրապես, թալանելու շատ ու շատ բան կար: Նախ, ինչպես արդեն վերը նշվել է, <<աստղերի դասավորությունն>> այնպիսին էր ստացվել, որ Կարսում կուտակված վերը նշված մեծաքանակ նյութական պաշարները նպատակահարմար էր գտնվել հանձնել զինվորական գերատեսչությանը: Թե ուր գնաց և ինչ նպատակների ծառայեց Կարսի զինվորական բարձրագույն հրամանատարության ձեռքում հայտնված այդ անսպառ հարստությունը, անհայտ է մնում մինչ օրս. <<*Մի բան միայն պարզ էր, զինվորական իշխանութիւնը, լաւ հոտառութիւն ունենալով, բոլորից շուտ լսեց այդ պահեստների ախորժելից բուրմունքը և զինվորականները, թալանի այդ առանցքում գրոհի տրամադրված, գերիշխանութեան ձգտեցին այդ յանձնաժողովում…պետական գոյքի այդ մեծ ամբարները մեծ հռչակ են ստանում Կարսի սահմաններից շատ հեռու և հրեայ, ռուս և հայ գիշատիչները սկսում են վիտալ երթևեկող գնացքներով… Բռնվում էին գողացած իրերով ոչ միայն սայլերի շարաններ, այլ ամբողջ վագոններ: Բայց գործը ոչ միայն չէր պարզվում, այլ վճռի մասն կծիկը աւելի և աւել էր ծաւալվում ու խրճրճվում...*

*Վերջ ի վերջոյ, այդ բոլոր աղաղակող պատկերներից յետոյ, Երևանի Զօրաց մինիստրութիւնը հեռացրեց, վերջապէս, յանձնաժողովի մի երկու ռուս գնդապետներին, բայց նոցա տեղը դարձեալ ռուսներ ուղարկեց և այնպիսի հմտալից վարպետներ, որոնց առաջ նոցա նախորդները աշակերտներ էին...>>*[97]*:* Այնպես որ, այդ հարստությունը մաս-մաս անհետացել է նույն զինվորականների ջանքերով և նրանից ստացված գումարն էլ հայտնվել է ոչ թե պետական գանձարանում, այլ զինվորականների և նրանց հետ կապված կոնկրետ անձանց գրպաններում. <<… *յանձնաժողովի զինվորական անդամները կարողացան ձայնակցութիւն ստեղծել Կարսի նահանգի զօրաց հրամանատարութեան հետ, կապ ստեղծեցին երկաթուղու մի քանի ինժեներների և պաշտօնեաների հետ և այդպիսով թալանը կատարվում էր <<կազմակերպված>> և ոչ թէ հատով՝ ֆուրգօններով, վագոններով, այլ նոյնիսկ յատուկ <<զինվորական>> (անձեռնամխելի) գնացքներով...*

*Այդ օրերում Սարիղամիշում թալանվեց մի մեծ պահեստ:*

*Ես (*քաղաքացիական նահանգապետը –Վ.Հ.*) նախնական քննութիւն նշանակեցի. պարզվեց, որ այդ մեծ թալանը կազմակերպել են գլխաւորապէս և Սարիղամիշի մեր զօրամասի ռուս սպաները, ընկերակցութեամբ ինժեներների, երկաթուղու այլ պաշտօնեաների, երկաթուղու միլիցեայի մասնակցութեամբ, վերջապէս, Սարիղամիշում կանգնած մեր զօրամասի զինվորների, այդ <<կոլլեկտիւ>>, մեծաղմուկ գողութեան մասին ես մի քանի հեռագիր ուղարկեցի Երևան: Եկաւ այդ առիթով Երևանից գեներալ Միլիկով, որ հայերէն, իհարկէ, չը գիտէր, բայց*

---

[97] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 69-71:

*<<քննական>> գործը ձգձգվեց և մեծ գողերը, մեծ աւարով հանդերձ, փախան ժամանակին...>>*[98] :

Այդ <<համալիր>> թալանի մեջ իր կարևոր և ուրույն տեղն ուներ <<ավտոմոբիլային>> գործը[99]: Հարցը նրանումն է, որ երբ հայկական կողմը մուտք գործեց Կարս, նահանգի ամբողջ տարածքում հաշվարկվել էր մոտ երեք հարյուր թեթև ու միջին աստիճանի անսարքություններով մարդատար ու բեռնատար ավտոմոբիլներ, որոնց ոտքի հանելը իրականում մի բարդ խնդիր չէր: Առավելևս, որ Կարսում մնացել էին դեռևս ռուսների տիրապետության օրոք հիմնված արհեստանոցներն ու գարաժները: Հայաստանի կառավարությունը հույս ուներ, որ այդ ավտոմեքենաների նորոգումից հետո մի մասը կհատկացվի կառավարությանը, մի մասը՝ մյուս գավառներին մի մասն էլ, բնականաբար, կհատկացվի հենց Կարսի նահանգի կարիքներին: Բայց այդ ավտոմեքենաներից երկրի կառավարությունը մյուս գավառները չստացան և ոչ մի հատ. մի բեռնատար մեքենա 1920 թ. կեսերին հատկացվեց քաղաքացիական նահանգապետին, մի քանի մարդատար էլ՝ զինվորական հրամանատարությանը: Եվ վերջ… *<<Աֆտոարհեստանոցների վերայ միլլիոններ ծախսեցին, բայց գէթ նմուշի համար երկիրը մի աֆտոմոբիլ չը տեսաւ… Իսկ հայկական բանակի սպարապետը բեռնակիր աֆտոմոբիլով էր գնում զորքերը դիտելու...>>*[100]:

Առաջ անցնելով հավելենք, որ երբ քեմալական զորքը արդեն ընդհուպ մոտեցել էր Կարսին, բանակը և քաղաքը չունեին գոնե մի բեռնատար, որ կարողանային զինամթերք տեղափոխել առաջնագիծ և ռազմաճակատի համար միակ գործող փոխադրամիջոցը դառձել էր նահանգապետի ծառայողական բեռնատարը, որն ի դեպ, նրան էր տրամադրվել Կարսի անկումից ընդամենը մի երեք ամիս առաջ. *<<…գեներալ Փիրումով նահանգապետի բեռնակիր մեքենան էր խնդրում փախչող գունդերին փանփուշտ հասցնելու համար...>>*[101]:

Իսկ բանակի համար նախատեսված կապի միջոցները, որպես կանոն, հայտնվում էին ոչ թե զորամասերում, այլ սպեկուլյանտների ձեռքում, որոնք հետո բազմապատիկ գնով առաջարկում էին այն բանակին[102]: Դրա համար էլ Կարսի բերդի հրետանու կետերի և շտաբի միջև հեռախոսակապը գործնականում բացակայում էր: Բերենք այդ օրերի թալանի՝ բացահայտ հակապետական բնույթ ունեցող ցայտուն օրինակներից ևս մեկը. 1920 թ. ամռանը ՀՀ կառավարությունը անհրաժեշտ գումարներ էր հատկացրել, որպեսզի թարմացվի և համալրվի Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ տեղակայված զորախմբի ծառայողական ձիերի գլխաքանակը՝ ինչպես հեծելազորում, այնպես էլ հրետանու քարշի համար: Պահպանելով օրենքի բոլոր

---

[98] **Նույն տեղում**, էջ 66-71:

[99] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը Հայաստանի…, էջ 191-193; Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը…, էջ 72-85:

[100] **Նույն տեղում**, էջ 80,81, 239; **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը Հայաստանի…, էջ 191-193:

[101] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 239:

[102] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ.22-1, թ.274 և շրջ., 275, (տե՛ս նաև **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը …, էջ 322,323):

կետերը, Աղբաբայի թուրքերից կանխիկ գումարով գնվեցին զորքում ծառայության համար պիտանի մոտ 600 առողջ ձիեր: Ձիերին պետք է բերեին և բանակին հանձնեին ձիատերերը, իսկ գործընթացն ամբողջությամբ պետք է կազմակերպեր և վերահսկեր Շիրակի նահանգի միլիցիան: Օրենքի պահապանները գործեցին չափազանց օպերատիվ. ձիերը ընդունման կետ բերելու ճանապարհին նրանք թուրքերից բռնի կերպով խլեցին բոլոր առողջ ձիերին, փոխարենը նրանց ստիպեցին բանակի ընդունման կետ տանել իրենց կողմից թուրքերին տրված հիվանդ, ծերացած, հաշմված, ինչպես կասեն, կիսասատկած ձիեր: Երբ այդ կենդանաբանական թոշակառուների և հաշմանդամների երամակը տեղ հասավ, պատասխանատու սպաները, բնականաբար, հրաժարվեցին դրանցով համալրել զորամասերը և պահանջեցին, որպեսզի հարցով զբաղվեն համապատասխան ատյանները: Բայց կատարված ակնհայտ հանցագործությունը չափազանց հեշտ մարսվեց. միլիցիան կարողացավ ստեղծել մի այնպիսի իրավիճակ, որ առողջ ձիերը առհասարակ չերևացին, իսկ բերված խոտան ձիերին էլ խրտնեցրին, նրանք էլ կոտրեցին թեթև պատնեշները և ցրվեցին փախան: Ձինվորականներն էլ սահմանափակվեցին ու բավարարվեցին մի քանի բողոք գրելով: Եվ վերջ: Ոչ մեկը պատասխանատվություն չկրեց նրա համար, որ բանակին հատկացված պետական մեծաքանակ գումարներն անհայտացան, իսկ պատերազմի նախաշեմին կանգնած բանակն էլ զրկվեց անհրաժեշտ համալրումից[103]:

Կարսի նահանգում՝ որպես ժամանակավորապես զբաղեցրած տարածք, թալանի շատ հարմար ու չափազանց շահավետ <<օբյեկտներ>> էին նաև մարզի մահմեդական գյուղերը[104]: Այդ գյուղերի բնակչությանը հնազանդեցնելու, հակապետական խռովություններ կանխելու, բանակի ուժը թուրքերին ցուցադրելի իբր խիստ անհրաժեշտ գործողությունների կազմակերպման ու իրականացման ընթացքում չէր մոռացվում նաև այդ ամենի ամենակարևոր ու ամենահիմնական կողմը՝ թալանը. *<<Թուրքերը և քրդերը տեսնում էին, իհարկէ, որ այդ թալանչիները զինվորներ են և նրանք իրաւունք ունէին հաւատալու, որ թալանը կազմակերպված է զինուորական բարձր իշխանութեան գիտութեամբ…զինվորական զգեստով թալանչիները վխտում էին թուրք, քուրդ և ռուս գիւղերի շուրջը և ամեն մեկը իր իրաւունքն էր օգտագործում...*

*Մէկը ձի էր <<բռնագրաւում>>, միուսը՝ տաւար, ոչխար, բուրդ և այլն և բոլորը բացատրում էին, որ պատշաճ վկայական ունեն... սպաները սայլերով արտահանում էին այդ գիւղերից կաթսաներ, բուրդ, գորգեր և այլ հարստութիւն: Իսկ մեր գեներալները և գնդապետները գերադասում էին նստել քաղաքում, զբաղվել ինտրիգներով, բուրդ և այլ իրեր հաւաքել…>>*[105]:

---

[103] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.201, ց.1, գ.98, թ. 87 և շրջ.; տե՛ս նաև, **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը Հայաստանի…, էջ 338-340, 342,350:

[104] Տե՛ս Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 158, 172, 178, 179, 210, 289, 383:

[105] **Նույն տեղում**, էջ 154, 173,183:

Ամբողջ նահանգը հրաշալի տեղեկացված էր ու գիտեր, որ թալանած անասունների տասնյակ հազարավոր գլխաքանակ գեներալ Հովսեփյանը եղբայրը՝ գեներալի զինվորների ուղեկցությամբ ու հսկողությամբ տեղափոխում է Հայաստանից դուրս ու վաճառում[106]:

Հասկանալի է, որ բարձրագույն հրամանատարության՝նման եղանակով հարստանալու գործընթացը իրականացվում էր ենթակաների միջոցով ու ձեռքերով: Բանակի միջոցներով ու հնարավորություններով, եթե այնտեղ հրաժարվում են բուն բանակային գործառույթներից, այդ ամենն իրականացնելը չափազանց հեշտ է: Միանգամայն հասկանալի է նաև, որ բարձրագույն հրամանատարության նման <<խիստ բանակային>> մոտեցումները իրենց ծառայողական պարտականությունների նկատմամբ ծառայողական ուղղաձիգով մեխանիկորեն տարածվելու էին նաև դեպի համակազմի ներքևի շարքերը: Սպաները և նույնիսկ շարքային զինվորները նման պարագայում կատարվածի մեջ միանգամայն <<արդարացված>> ձևով իրենք էլ կուզենային ունենալ իրենց <<փայը>>[107]:

Մեր զորքերի կողմից Օլթիի ենթաշրջանը գրավելուց մի քանի օր անց գեներալներ Հովսեփյանն ու Փիրումյանը չափազանց զայրալի մի հեռագիր են հղում ռազմական նախարար Տեր-Մինասյանին, որտեղ իրենց դժգոհությունն են հայտնում առ այն, որ Կարսի զորամասից մի քանի զինվոր դիմել են դասալքության, իսկ մարզի միլիցիան նրանց հայտնաբերելու համար մատը մատին չի տալիս: Մարզի միլիցիան շատ արագ հայտնաբերում է այդ դասալիքներին: Պարզվում է, որ դասալքություն, որպես այդպիսին տվյալ դեպքում չկա: Պարզապես այդ զինվորները թողել Կարսի իրենց զորամասը և մեկնել են Օլթի, որպեսզի հասցնեն մասնակցել այնտեղ իրականացվող թալանի գոնե վերջին արարներին[108]:

Իրենց պաշտոններում հարմար տեղավորվելուց հետո, բառացիորեն Կարս ժամանելու հաջորդ օրվանից մինչև Կարսի անկումը, Կարսի բարձրագույն զինվորական հրամանատարությունը, առանց չափազանցության, զբաղվեց ամեն ինչով՝ բացի իր ուղղակի զինվորական պարտականություններից: Այն է՝ բացի զորքի մարտական պատրաստականությունը բարձրացնելուց և նրան վճռական ճակատամարտերի նախապատրաստելուց: Ինչպես վկայում են փաստաթղթերը, նրանց գործունեության մեջ իրական իմպերատիվը դա իրոք ահռելի չափերի հասնող մշտապես իրականացվող թալանն էր: Կանգ չառնելով մանրամասների վրա, որոնք բերված են բազմաթիվ հուշերում և փաստաթղթերում, այստեղ նշենք միայն, որ այդ 18 ամիսների ընթացքում բացահայտվեցին և արձանագրվեցին տեղի բարձրագույն հրամանատարության կողմից մարզի նյութական միջոցների հափշտակման,

---

[106] Տե՛ս **նույն տեղում**…, էջ 175, 181, 334,335,361, 429, 430

[107] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը Հայաստանի…, էջ 218-221, 241,242, 331-333, 344-347, 351:

[108]Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ.309, թ.73 (տե՛ս նաև, **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը …, էջ 331); Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 359:

նահանգի բնակչության ռեգուլյար թալանի, բանակին հատկացված միջոցների գրպանման և տարաբնույթ զեղծարարության և այլ հանցագործությունների բազմաթիվ դեպքեր[109]: Ի դեպ, նահանգի մահմեդական բնակչության թալանը հայերի համար անհետևանք չմնաց. ըստ այն օրերի տվյալների, Քյազիմ Կարաբեքիրը Հայաստանի վրա արշավելու պահին ունեցել է ընդամենը 4-5 հազար զինվորով համալրված կանոնավոր զորաբանակ, սակայն նրա զինյալների քանակը շատ արագ գրեթե կրկնապատկվել է ի հաշիվ այն անկանոն զորամիավորումների, որոնք կազմված էին դեպի քեմալական կողմը փախած հայ զինվորականության կողմից թալանված մահմեդական գյողերի բնակիչներից[110]:

Բազմաթիվ փաստաթղթեր, ժամանակակիցների ու ականատեսների վկայություններն ու դիտարկումները փաստում են, որ Կարսի զորախմբի վերը հիշատակված երկու գեներալները՝ հայկական կառավարության կողմից իրենց տված լիազորություններն ու հնարավորությունները ծառայեցնում էին բացառապես անձնական հարստություն դիզելու նպատակին, այլ ոչ թե զորքը սպասվող վճռական իրադարձություններին պատրաստելուն: Թալանը այնքան կարևոր տեղ էր զբաղեցնում Կարսի գեներալների առօրյայում, որ գեներալ Փիրումյանը Կարսի հեռագրատնից զանգարում էր Երևան իր մտերիմին և տեղեկացնում, թե շտապ պետք է Կարս գալ. <<*քո բաժին թալանդ պահել եմ*>>[111]: Ուստիև միանգամայն հասկանալի է ու ճշմարտացի այն եզրակացությունը, որ <<*Մեր հրամանատար կազմը ոչ կարողութիւն և ոչ էլ կորով ունէր բարձրանալու դէպի հասարակական մակերևոյթը և ըմբռնելու պետական և հասարակական պահանջները: Իսկ երկիրը և ժողովուրդը իր պատմութեամբ, նորա գրականութեամբ, արվեստով, տենչանքներով և վաղեմի երազներով, մի խորթ և անհասանելի աշխարհ էր այդ բազմատեսակ և բազմալեզու սպայիութեան համար:*

*Մեր շարքային զինվորութիւնը, իր երկրի և հայրենիքի սիրահար, տպաւորվող և ոգևորվող ազգային գաղափարներով, միանգամայն անջատ էր իր հրամանատարութիւնից: Եւ այդ առանցքում, ուր ենթական ու իշխողը, մէկը կենտ-րոնալից, իսկ միուսը ապակենտրոնական տրամադրութիւն ունէին, չէր կարող կոպվել ամուր, հզօր և ինքնաճանաչ ազգային զօրաբանակ: …Մեր հրամանատար կազմը, առանձին-առանձին վերցված և բոլորը միասին, ժամանակաւոր հիւրեր էին համարում իրանց հայկական բանակում: Այդ գեներալների և սպաների գերազանց մեծագոյն մասը շտապում էր վայելելու միայն կեանքի հաճոյքը և օր առաջ ապահովելով իրան, նա տրամադիր էր կարգաւորելու իր գործերը և համենայն դէպս այդ «հայրենի» սահմաններից դուրս...*

---

[109] Տե՛ս **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը …, էջ 260-276, 331-333, 344-347,351; Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 47,48,70, 71, 80, 175, 238,239,262, 279, 289, 294, 340, 341,348,349, 352,357:

[110] Տե՛ս **նույն տեղում**, էջ 256, 384,385:

[111] Տե՛ս **նույն տեղում**, 337, 351:

*Եւ այդպէս տրամադրված հրամանատարութիւնը չէր կարող դաստիարակել հայ զինվորութիւնը, նա չէր կարող ազգային բանակ ստեղծել: Նա միայն վարակեց հայկական զօրամասերի կուսական շարքերը, քայքայեց հայկական ազգային բանակի մեծ գաղափարը և խորտակելով մեր զօրական կորովը, դէպի անդունդ տարաւ մեր պետական նորածիլ վերապրումները…>>*[112]*:*

Այդպիսին էր այդ վճռական օրերին Կարսի նահանգի զինվորական իշխանությունն ու հայկական բանակային զորախումբը, որը ղեկավարում էին գեներալներ Դանիել-բեկ Փիրումյանն ու Հարություն Հովսեփյանը:

### *4. Երկու իշխանությունների հակասություն, թե՞ անհամատեղելիություն*

Անդրադառնանք այժմ, ինչպես արդեն նշել ենք, այդ օրերին Կարսում ծավալված իրադարձություններին առընչվող պրակտիկորեն ամեն մի հրապարակման մեջ շոշափվող նահանգային իշխանությունների երկու թևերի՝ իշխանության քաղաքացիական և զինվորական հատվածների փոխհարաբերություններին: Զուտ ֆորմալ տեսակետից կարելի է ասել, որ ամենասկզբնական՝ նահանգային

[112] **նույն տեղում**,էջ 333:

իշխանության դեռևս ձևավորման փուլում, ամեն ինչ ոնց որ թե կատարվել է նման իրադրությունների պարագայում համապատասխան տրամաբանության շրջանակներում. իրարից անջատված, իրարից անկախ նահանգային իշխանության այդ երկու բաղադրիչները պետք է փոխլրացնեին և միաժամանակ հավասարակշռեին միմյանց: Եվ նրանց միասնական ջանքերով պետք է մարզում իրականացվեին երկրի կառավարության նախատեսված ռազմաքաղաքական, տնտեսական և բոլոր այլ բնույթի ծրագրերը: Դա, ինչպես ասվեց, առողջ բանականության և պետական շահերի շրջանակներում: Իսկ ինչպես է եղել ամեն ինչն իրականում: Ինչպիսի՞ն էր այդ օրերին Կարսի նահանգի հայկական իշխանական կառույցը, որքանո՞վ էր այն իրոք միասնական, միաձույլ և փոխկապակցված, որպեսզի կարողանար մարզում հանդես գալ որպես կուռ և միասնական հայկական պետական իշխանական ուժ, և որքանո՞վ էր այն տիրապետում իրավիճակին՝ իրեն ենթակայության հանձնած նահանգի տարածքներում: Եվ հնարավոր էր արդյոք, իրականում՝ թեկուզ տեսականորեն, միասնականությունը, ներդաշնակ փոխըմբռնումն ու փոխլրացումը նահանգային իշխանության այդ երկու թևերի միջև:

Ինչպես նշվեց, Կարսի նահանգային իշխանության այդ երկու թևերի փոխհարաբերություններին անդրադարձել են տարբեր հեղինակներ: Սակայն ոչ մեկն այնքան սպառիչ և բովանդակալից չի կարող նկարագրել խնդիրը, քան այդ իշխանության բաղադրիչների անմիջական ձևավորողն ու կազմողը՝ այդ օրվա ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը. <<*Դժբախտաբար, անոնց միջև շարունակ վէճեր եւ բաղխումներ կ'ըլլային իրենց իշխանութեան սահմաններու վերաբերեալ, ինչպես նաեւ Կարսի շրջանը կառավարելու եղանակներու եւ միջոցներու մասին իրենց ունեցած տարակարծութեանց հետեւանքով:*

*Ղորղանեանը կողմնակից էր խաղաղ եղանակներու, կ'ուզէր կառավարել երկիրը վստահելով ազգաբնակութեան բոլոր տարրերուն, ջանալով քաղաքակրթական միջոցներով, տնտեսական շնորհներով եւ մեղմ վերաբերմունքով գրաւել ամէնքի սիրտը դէպի հայկական նոր իշխանութիւնը: Իսկ մեր երկու զորավարները սրի ծայրը կը տեսնէին միակ փրկութիւնը եւ միակ միջոցը երկիրը խաղաղեցնելու:*

*Այս հիմնական տարակարծութեան գետնի վրայ էր, որ շարունակ տեղի կ'ունենային անախորժ ու վնասակար թիրիմացութիւններ ու բաղխումներ: Զօր. Փիրումեանը կը պահանջէր, որ իրեն զինուորական նահանգապետի իրաւունքներ տրուին, որպեսզի քաղաքացիական իշխանութիւնն ալ, յանձին նահանգապետ Ղորղանեանի, իրեն ենթարկուի: Ղորղանեանը, ընդհակառակն, բացարձակապէս դէմ էր իշխանութեան այդ ձեւի կազմակերպման: Աւելորդ է ըսել, թէ այդ խուլ պայքարը կը փոխանցուէր եւ համապատասխան մարմիններուն ու պաշտօնեաներուն:*

*Այստեղ ես կը բավականանամ միայն փաստը արձանագրելով, առանց կանգ առնելու անոր գոյութեան եւ յարատեւման պատճառներուն վրայ: Եւ կ'արձանագրեմ ասիկա,*

*որովհետեւ այդ պայքարը ծանրագոյն, եւ կարելի է ըսել, ճակատագրական հետեւանքներ ունեցավ ապագային…>>*[113]:

ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը իր կողմից փաստում է. <<…*Լավ չէին նաև զոր.Փիրումյանի ու զոր. Հովսեփյանի, ինչպես նաև նահանգապետ Ղորղանյանի հարաբերությունները, որ անդրադառնում էին շրջապատի վրա…>>*[114]:

Բերենք նաև ՀՀ այդօրվա զինված ուժերի սպա Հայ Գնդունու (Իշխանյանի) վկայությունը. *<<Կար ուրիշ դժբախտություն մը ևս: Կարսի հայկական իշխանութեանց՝ քաղաքացիականին ու զինուորականին միջեւ գոյուտիւն ունեցող վիճասէր ու դաւադիր ոգին: Բերդապետ զօր. Փիրումեանի, ճակատի հրամանատար զօր. Յովսեփեանի եւ իրենց գործակիցներու յարաբերութիւնները բոլորովին թշնամական էին նահանգապետ Ղորղանեանի եւ իր շրջապատին հետ: Ասկէ կտուժէր ամեն բան բովանդակ նահանգին գործերուն մէջ: Թրքական վտանգը երբ պայտեցաւ, Կարսի զինուորական և քաղաքացիական իշխանավորները, պէտք չզգացին մոռանալու իրենց կիրքերը, վնասակար հաշիւներն ու հակամարտութիւնները: Երեւանը, իր կարգին, բնավ չէր ուզած ու փորձած այս ախտավոր կացութեան դարման մը խորհիլ, լավ տեղեակ ըլլալով մէկտեղ տիրող անկէրպարան և տնաքանդ մթնոլորտին…>>*[115] :

Ինչպես պարզ երևում է, իշխանության այդ երկու թևերը իրականում ոչ թե հակակշռում և փոխլրացնում էին միմյանց, այլ գտնվում էին խորը հակասությունների, բացահայտ անհաշտ դիմակայության և անզիջուն պայքարի մեջ միմյանց նկատմամբ, ինչը, բնականաբար անխուսափելիորեն առաջ էր բերելու նահանգում ճգնաժամային իրավիճակ: Որի ուղղակի հետևանքն էլ արդեն նահանգի և ամբողջ երկրի պաշտպանունակության անկումն էր: Ի՞նչ կռիվ էր սա, ի՞նչ հակամարտություն և որոնք էին այդ դիմակայության հիմքերն ու պատճառները:

Այս համատեքստում ինքնին առանձնանում և առաջնահերթ պատասխան են պահանջում հետևյալ երկու հարցերը.

ա) ինչի՞ շուրջ էր ծավալվում և անդադար ընթանում այդ պայքարը,

բ) ինչու՞, Հայաստանի բարձրագույն իշխանությունը, տեսնելով այդ դիմակայության ակնհայտ վնասաբերությունը պետական շահերին, քայլեր չէր ձեռնարկում այդ ամենին վերջ դնելու համար:

Առաջին հարցին պատասխան փնտրելը սկսենք Ալեքսանդր Խատիսյանի վերևը մեջբերված տողերում. << *…Զօր. Փիրումեանը կը պահանջէր, որ իրեն զինուորական*

---

[113] **Խատիսեան Ա.**, Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 157:
[114] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան 1998, էջ 508:
[115] **Հայ Գնդունի,** Կարսի անկումին պատճառները, <<Մարտկոց>>, 1932, հոկտեմբեր-դեկտեմբեր:

*նահանգապետի իրաւունքներ տրուին, որպեսզի քաղաքացիական իշխանութիւնն ալ, յանձին նահանգապետ Ղորղանեանի, իրեն ենթարկուի…>>*:

Ինչու՞ էր << *Զօր. Փիրումեանը*>> իր ունեցած լիազորությունների կողքին նորանոր լիազորություններ պահանջում և փաստորեն ձգտում միակ ու միանձնյա կառավարիչը դառնալ Կարսի նահանգի: Չէ՞ որ նա հաստիքային զինվորական էր և ինչպես տեսանք, Կարսի բերդի զինվորական պարետի պաշտոնն էլ ստեղծվեց և <<իջեցվեց>> անձամբ և հատուկ իր համար: Հիմա ինչու էր <<ձեռքը տանում>> դեպի նահանգի քաղաքացիական ոլորտը: Չէ՞ որ դա նախ զինվորականի <<խելքի բանը չէ>>, իսկ երկրորդն էլ նա նման կառավարման փորձ բացարձակ չուներ: Եվ ի վերջո, զուտ տեխնիկական առումով՝ պետությանը նոր միացված նահանգի խճճված ու դժվարին քաղաքացիական ոլորտի կառավարման ստանձնումը բազմապատիկ ավելացնելու էր գեներալի զբաղվածությունն ու ծանրաբեռնվածությունը:

Գեներալների պարագայում նույնպես ոչ մեկը չի պնդում, թե գեներալներ Փիրումյանն ու Հովսեփյանը նպատակային Կարս էին եկել նախորոք հատուկ մշակված ծրագրով, որ 18 ամիս հետո այն հանձնեն թուրքերին: Բայց չմոռանանք, որ բանակը բոլոր ժամանակներում եղել է և կմնա այն կառույցը, որտեղ բացառիկ ու վճռորոշ են զորքի առաջին դենքի մարդկային հատկություններն ու պրոֆեսիոնալ կարողությունները: Լավ թե վատ, բայց այդ օրերին երկրի կառավարությունը իրականացնում էր զորակոչ, բանակի կարիքներին էր հատկացնում պետության գրեթե ամբողջ բյուջեն, դրսից բերում էր սնունդ, զենք ու հանդերձանք, ռազմատեխնիկական, բժշկական և այլ միջոցներ: Կարսի ուղղությունը, ինչպես բազմիցս նշվել է, այդ օրերին ամենակարևորն էր և պետության կողմից հատկացված միջոցներն ու տեղի հնարավորությունները ռացիոնալ օգտագործելու դեպքում կարելի էր հասնել զգալի արդյունքի: Բայց, ինչպես վերը նշել ենք, պետության տրամադրած միջոցներն իրենց նպատակին չէին ծառայում և բանակը՝ հզորանալու և առավել կազմակերպ լինելու առումով դրանցից իրական ոչ մի օգուտ չէր ստանում և առաջընթաց չէր արձանագրում:

Եղած հնարավորություններով Կարսի ուղղությամբ տեղակայված զորախմբից մարտունակ զորամիավորման ստեղծումն ու անհրաժեշտ գործունեության ապահովումը տեղի բարձրագույն հրամանատարության ուղղակի պարտականությունն էր: Գործընթացը պետք է սկսեին գեներալները և նրանց հրահանգով՝սպաների միջոցով այն պետք է գնար հասներ մինչև շարքային զինվորը:

Բայց Փիրումյան-Հովսեփյան <<տանդեմը>> պետության տված լիազորություններն օգտագործեցին խիստ անձնական նպատակներով, նրանք գործնական ոչ մի բան չարեցին բանակը վճռական գործողություններին նախապատրաստելու համար, և բախտորոշ պահին, երբ այդ բանակային զորախմբի գործողություններով էր որոշվում հայկական պետականության լինել-չլինելը, պարզվեց, որ Կարսի ուղղությամբ,

բանակը, որպես այդպիսին, այլևս գոյություն չունի: Եվ միակ բանը, որին դեռևս ընդունակ էր այդ գեներալների հրամանատարության ներքո գտնվող զորախումբը, դա իր ամենագերագույն գեներալի՝ Դանիել-բեկ Փիրումյանի գլխավորությամբ թուրքերին գերի հանձնվելն էր: Չմոռանանք ճշտել, որ 1920թ. ամռանը Կարսի զինվորականության երազանքն իրականացվել էր և գեներալ-լեյտենանտ Դանիել – բեկ Փիրումյանը վերջապես հռչակվել էր Կարսի նահանգի գեներալ-նահանգապետ: Եվ ի՞նչ: Ի՞նչը փոխվեց դրանով: Թերևս փոխվեց ընդամենը մեկ հանգամանք. այն, որ հայկական բանակի գերի հանձնված գեներալ-լեյտենանտը ոչ միայն Կարսի բերդի զինվորական պարետն էր, այլ համատեղության կարգով նաև Կարսի նահանգի գեներալ-նահանգապետը:

Այդ առումով գեներալ Հովսեփյանի բախտը բերել էր՝ Կարսի հանձնումից մի քանի օր առաջ՝ հոկտեմբերի 27-ին, նրան տեղափոխել էին թիկունք և նա <<պլըստաց>> թուրքական գերությունից: Բայց Կարսի զորախմբի քայքայման ու բարոյալքման, նրա անկանոն ու խուճապահար փախուստի հիմնական նախապատրաստողն ու <<ապահովողը>> հենց ինքն էր՝ գեներալ Հարություն Հովսեփյանը: Կարսի հանձնումը քեմալական զորքին եղավ նահանգի զինվորական իշխանության 18 ամսյա գործունեության իրական և ամենախոսուն արդյունքը:

Մեր մատնանշած հարցերից առաջինի առընչությամբ շեշտենք նաև այն ուշագրավ փաստը, որ նահանգային իշխանական թևրի պահանջները ակնհայտորեն անհամաչափ էին և ոչ համարժեք: Իրոք, իր լիազորությունները նոր՝քաղաքացիական ոլորտների վրա տարածելու պահանջով ի հայտ էր գալիս միայն զինվորական իշխանությունը: Քաղաքացիական իշխանությունը իր համար որևիցե նոր լիազորություններ չէր պահանջում, զինվորական ոլորտի հանդեպ որևիցե հավակնություններ չէր ցուցաբերում և այդ ամբողջ գործընթացի մեջ գտնվում էր, պատկերավոր ասած՝միայն <<պաշտպանվողի դերում>>: Կոնֆլիկտի այդ կողմը ընդամենը հայտարարում էր, որ զինվորականության կողմից առաջարկվող նահանգի կառավարման տարբերակը առկա պայմաններում անընդունելի է: Ջիվանու խոսքով ասած, քաղաքացիական իշխանությունը՝ թե ՀՀ կառավարության խողովակներով, թե ուղղակիորեն, ընդդիմադիր կողմին ամեն կերպ հասկացնում էր, որ <<*գոյությունս գոյությանդ վնաս չէ…*>>: Ստեփան Ղորղանյանը չափազանց պարզ ներկայացնում է իր դիրքորոշումը. <<*Պահանջում էի, որ մեր նորաթուխ գնդապետներին և գեներալներին արգելվի միջամտելու երկրի քաղաքական, վարչական գործերին*>>[116]: Բայց միևնույնն է, զինվորական իշխանությունը անդադար կռիվ էր մղում նահանգի քաղաքացիական իշխանության դեմ: Ընդորում երբ ծանոթանում ես փաստաթղթերին, տպավորություն է ստեղծվում, թե այդ կռիվն ավելի շատ ինքնանպատակ է և ընթանում է ավելի շատ բնազդային հարթության վրա, քան գիտակցական:

---

[116] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 489:

Մտաբերենք Կարսի նահանգի քաղաքացիական իշխանության հայեցակարգն ու դրանից բխող մոտեցումները մեր պետականության և մասնավորապես, նահանգի վերաբերյալ. <<… *Կարսի նահանգը Հայեաստանի Հանրապետութեան տարածութեան ոչ միայն կէսից աւելին էր, նա կազմում էր նրա և մեծագոյն ինտերեսը, այդ հասկացողութեան պետական լայն իմաստով… Կարսի նահանգը դառնում էր այսուհետև այն կենտրօնը, որտեղից պէտք է ծաւալվէր մեր պետականութիւնը>>:* Այսինքն նահանգի քաղաքացիական իշխանությունը քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյանի գլխավորությամբ առաջնորդվում էր պետականաստեղծ և ազգակենտրոն հայեցակարգով և ըստ դրան էլ կառուցում նահանգում վարվող քաղաքականությունը: Որքան էլ դա դժվար էր, բայց Ստեփան Ղորղանյանի ղեկավարած կառույցը օրենքի շրջանակներում իրական ու անհաշտ պայքար էր տանում նահանգում կաշառակերության, գանձագողության, թալանի ու ավազակության դեմ[117], շոշափելի քայլեր էր ձեռնարկում բնակչության տարբեր շերտերի և պետական ծառայողների սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ, միաժամանակ առաջ քաշելով նահանգի տնտեսական զարգացման միանգամայն իրատեսական ծրագրեր ու առաջարկներ [118]: Ավելորդ չենք համարում մեկ անգամ ևս նշել, որ Կարսի քաղաքացիական իշխանությունը ունեցավ ակնհայտ ձեռքբերումներ ու հաջողություններ նահանգի մահմեդական զանգվածի հետ հարաբերությունները ոչ ուժային եղանակներով կարգավորելու հարցում[119]:

Միանգամայն հասկանալի է, որ նահանգի քաղաքացիական իշխանությունը իր գործելակերպով, որն հիմնված էր պետականաստեղծ և հայակենտրոն հայեցակարգի վրա, քայլ առ քայլ, օր առ օր շահում էր նահանգի բնակչության վստահությունն ու համակրանքը և աստիճանաբար հենց նրա որդեգրած հայեցակարգն էր դառնալու նահանգում տիրապետող և ընդունելի: Բայց այս պարագայում, ինքնաբերաբար մերժվում և դուրս էր մղվում արդեն Կարսի նահանգի զինվորականության որդեգրած՝ պետականամերժ և անազգ մոտեցումների հայեցակարգը: Սուբյեկտիվ ու գործնական դրսևորմամբ դա արտահայտվելու էր նրանում, որ այդ հայեցակարգի կրողներն էլ պարզապես հայտնվելու էին լուսանցքում՝ իրենց համար միանգամայն կանխատեսելի ոչ այքան հաճելի հետևանքներով. <<*Այդ յաջող դասաւորվող իրաւակարգը նահանգում, քուն և հանգիստ չէր տալիս Կարսի նախկին գեներալ նահանգապետ գեներալ Յովսէփեանին, իսկ նորան նմանվելով և գեն. Փիրումովին>>*[120]:

Հենց այդ լուսանցքում հայտնվելու վտանգը այն մշտապես անհանգստացնող գործոններից մեկն էր, որ Կարսի զինվորական իշխանությանը նորից ու նորից մղում էր կռվի ընդդեմ նահանգի քաղաքացիական իշխանության:

---

[117] Տե՛ս **նույն տեղում** , էջ188,191-194,197-211,218-221,224.
[118] Տե՛ս **նույն տեղում**, էջ 181,187-189,191-198,225-229,238-239.
[119] Տե՛ս **նույն տեղում**, էջ 176-179, 186,199-201,211:
[120] **Նույն տեղում**, էջ 361:

Դա ոչ հավակնությունների պայքար էր, ոչ էլ պայքար էր ազդեցության ոլորտների, կամ էլ կապիտալի ու սեփականության բաշխման կամ վերաբաշխման համար: Եվ այդ պայքարն էլ ամենևին պարփակված ու պայմանավորված չէր զուտ Կարսի նահանգով: Այդ օրերին պարզապես Կարսի նահանգում էին գերխտացել ու կուտակվել հայոց պետականության լինել-չլինելու հիմնահարցերը և հենց Կարսի հողի վրա էլ ընթանում էր բախումը այդօրվա հայ իրականության մեջ տեղ գտած երկու քաղաքակրթական մոտեցումների միջև. պետականաստեղծ և ազգանպաստ՝ ի դեմս քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյանի, որը քաղաքական, տնտեսական և ուժային լծակների ճշգրիտ ու նպատակային կիրառման միջոցով ձգտում էր խաղաղ համակեցություն հաստատել երկրամասում և պետականամերժ ու ազգաժխտող՝ ի դեմս հայտնի գեներալական տանդեմի, որն անտեսելով պետական շահերը, բիրթ ուժի կիրառմամբ ձգտում էր իր մենիշխանությունն հաստատել նահանգում: Սա էր այդ կոնֆլիկտի իրական առանցքը: Իսկ այդ երկու մոտեցումները միմյանց կողքի հետ նույնքան են համատեղելի, որքան որ միմյանց հետ համատեղելի են ջուրն ու կրակը. *<<Նա (*գեներալ Հովսեփյանը-Վ.Հ. *) բռնելու, ջարդելու և փշրելու մեծ կողմնակիցն էր և այդ լոգունգով նա տրամադիր էր կառավարելու երկիրը: Մենք տրամագծօրէն տարբերվում էինք իրարից մեր հասկացողութիւններով ու աշխարհայեցողութեամբ… Մեր քաղաքակրթական և շինարար աշխատանքը պէտք է կոպեր մեր պետականութեան պատվանդանը և այդ զրահի տակ մենք անխռով կարող էինք իշխել… մեր միատեղ աշխատակցութիւնը ես ոչ միայն թիւրիմացութիւն, այլ մի ծաղր էի համարում… >>*[121]:

Եվ դրա համար էլ դիմակայությունը իշխանության այդ երկու թևերի միջև չդադարեց ոչ մի օր և ոչ մի վայրկյան: Որովհետև իշխանության այդ երկու թևերի միաժամանակյա գոյությունը Կարսի նահանգում պարզապես անհամատեղելի էր: Այսպիսիք էին այդ անհաշտ հակամարտության <<ներհայկական>> քաղաքակրթական առանցքն ու բախման իրական պատճառները:

Անդրադառնանք այժմ այս բաժնի սկզբում հնչեցված երկրորդ հարցին՝ ինչու Հայաստանի կառավարությունը քայլեր չձեռնարկեց նահանգի իշխանությունների այդ կոնֆլիկտին վերջ դնելու համար: Առավելևս, որ, ինչպես տեսանք, հարցին անդրադարձող բոլոր հեղինակները միաբերան շեշտում են, որ այդ հակամարտությունը ուղղակի սպառնալիք էր նահանգի և, առհասարակ, երկրի անվտանգությանը. *<<…նա (*գեներալ Հովսեփյանը-Վ.Հ. *) այդ օրվանից մեծ աղմուկ արշաւ կազմակերպեց նահանգի ադմինիստրացիաի, իմ դէմ, մի քաջարի արշաւ, որ լուծվեց Կարսի անկումով և մեծաչափ նպաստեց Հայոց Հանրապետութեան խորտակմանը>>*[122]: Միանգամայն հասկանալի է, որ *<<…այդ մթնոլորտում պետութեան պրիստիժը, համարումը, միանգամայն ընկնում էր, երկիրը չէր տեսնում*

[121] **Նույն տեղում**, էջ 45:
[122] **Նույն տեղում**, էջ 53:

*իր առաջ անաչառ կառավարութիւն, նա տեսնում էր գեներալներ և խմբապետներ, որոնք իրանք էին և օրէնք և իշխանութիւն>>*[123]*:*
Սա, թերևս, այն դեպքն է, երբ ճիշտ կլինի հետևել հրեական ազգային ավանդույթին և հարցին պատասխանել հարցով. իսկ հնարավոր էր արդյոք պրակտիկ տիրույթում հասնել այդ կոնֆլիկտի իրական լուծմանը, կամ, առհասարակ, վերացնել այն: Մեր կարծիքով՝ ոչ, հնարավոր չէր: Եվ հնարավոր չէր մի քանի պատճառով: Նախ, և ամենահիմնականը, դա, ինչպես տեսանք բախում էր ոչ թե երկու անձերի և ոչ էլ նույնիսկ երկու խմբավորումների միջև, այլ բախում էր երկու միայնգամայն հակառակ աշխարհընկալումների և հայեցակարգերի միջև: Իրոք, չէ որ 1920-ի ամռանը զինվորականների պահանջը բավարարվեց և գեներալ Փիրումյանին ՀՀ կառավարության կողմից տրվեցին գեներալ-նահանգապետի լիազորություններ: Եվ դրանից նահանգում ոչինչ չփոխվեց: Համենայնդեպս որևիցե դրական տեղաշարժի մասին բացակայում են ինչ-ինչ ակնարկներ, վկայություններ, կամ էլ փաստեր: Այնպես որ, անձերի պարզ մանիպուլյացիաներով հարցը չէր կարող լուծվել:

Այդ բախմանը վերջ դնելու համար անհրաժեշտ էր Կարսում վերացնել դրա իրական պատճառը: Պատկերավոր ասած՝ նահանգը <<մաքրել>> միմյանց հակադիր այդ երկու հայեցակարգերից մեկն ու մեկից: Իրագործելի ինչպիսի՞, առողջ բանականության շրջանակների մեջ տեղավորվող, լուծումներ էին հնարավոր, որ այդօրվա կառավարությունը չարեց: Եթե կողմերի միջև <<խաղաղությունն ու համերաշխությունը>> պետք է հաստատվեր քաղաքացիական իշխանության նկատմամբ <<վիրահատական միջամտության>> եղանակով, ապա հասկանալի է, որ նման արդյունք հնարավոր էր ակնկալել միայն այն դեպքում, եթե Ղորղանյանին իր շրջապատով փոխարինում էին մի այնպիսի նոր նահանգապետով, որն իր թիմով գործելու էր զինվորական իշխանության հետ միանգամայն համահունչ ու համաձայնեցված: Ավելի ճիշտ՝ նրա ցանկությամբ ու թելադրանքով: Այսինքն երկու գեներալների հետ միասին լծվելու էր նահանգում պետականակործան գործողություններին, լրացներ և ուժեղացներ դեպի երկրի հանձնումը տանող այդ տանդեմի գործունեությունը: Բայց սա, ինչպես ասում են, կլիներ արդեն կատարյալ աբսուրդի թատրոն. նորանկախ երկրի պետականության համար պայքարող կառավարությունը պարզապես չէր կարող գնալ նման ակնհայտ կործանարար քայլի:

Հետևաբար, նշված <<խաղաղությունն ու համերաշխությունը>> հաստատելու համար մնում էր մի տարբերակ՝ անհրաժեշտ էր <<վիրահատական միջամտություն>> իրականացնել նահանգի զինվորական իշխանության նկատմամբ: Տեսականորեն ամեն ինչ պարզ է ու հստակ. պաշտոնանկ է արվում <<ոչ հայրենասեր>> Փիրումյան-Հովսեփյան զույգը և նրանց տեղը նշանակվում է ազգային մտածողությամբ, որոշակի խարիզմա ունեցող նոր զորավար և կամ մի քանի զորավարներ: Բայց գործնական

[123] **Նույն տեղում**, էջ 159:

իրականության մեջ պարզվեց, որ ամենադժվարն ու, փաստորեն, անհնարինը հենց առաջին քայլն է՝ գեներալական այդ զույգը տեղաշարժելը: Ուստիև, երկրորդ փուլի՝ Կարս նոր բարձրագույն հրամանատար ուղարկելու հարցի քննարկումը ինքնին <<օրակարգից դուրս է մնում>>:

Դա էլ ասենք, որ դեպքերի ընթացքն ու իրավիճակն այնպիսին չեն եղել, որ երկրի կառավարությունն անտեղյակ էր Կարսում տիրող և, մասնավորապես, զինվորական հատվածում տիրող իրավիճակին: Քաղաղաքցիական նահանգապետը նահանգում տիրող իրավիճակի, դեպքերի ընթացքի և այնտեղ անհրաժեշտորեն լուծվելիք խնդիրների մասին՝ թե մոտակա, թե հեռահար, մշտապես տեղեկացրել է կառավարության: Բնականաբար, այդ տեղեկատվական հոսքի մեջ իր չափաբաժինն են ունեցել նաև զինվորական իշխանության կողմից թույլ տրվող ապորինություններին առընչվող տվյալները: Գեներալական զույգի չարաշահումների և, մեղմ ասած, ոչ պետականանպաստ գործունեության մասին բարձրաձայնել են նաև որոշ զինվորականներ. <<*Երկար միջնորդութիւնից յետոյ, ամենակալ Ռուբէն փաշան ունկնդրութիւն շնորհեց գնդ. Յարութիւնեանին: Գնդապետը բացատրեց բոլոր անցած գնացածը և մի մեծ գրաւոր զեկուցում ներկայեացրեց, որի յիման վերայ թէ՛ գեներալ Յովսէփեան և թէ՛ նորա <<գնդապետները>> ու <<կապիտանները>> պէտք է ոչ թէ հրամանատարէին, այլ հեղինակալից պէտք է գրաւէին դատարանում մեղադրական նստարանի կենտրօնական տեղը...Բայց այդ ևս, իհարկէ, չօգնեց*>> [124]:

Այնպես որ, եղել են ահազանգեր <<պատկան ատյաններ>>, եկել ու գնացել են տարբեր աստիճանի ստուգողներ և հետաքննիչներ, <<քննական>> ու <<դատաստանական>> տարբեր խմբեր, սակայն փաստն արձանագրելուց այն կողմ քայլ չի արվել, և ոչ մեկն , ըստ էության, կատարվածի համար պատասխան չի տվել[125]: Նույնիսկ Կարսի անկումից մի քանի օր առաջ, երբ միանգամայն աչքի առաջ էին արդեն պետությունը ավերակների վերածող զորախմբի հրամանատարության գործունեության արդյունքները, ոչ ոք չէր շտապում <<ձեռք տալ>> նրանց .
<< *Սպարապետ Նազարբեկով, Կարսի անկումից մի քանի օր առաջ այցելելով Կարսը, երևի իր վերջի հրաժեշտը տալու այն չքնաղ վայրերին, ուր նա 18 թվից այնպէս եզակի անյաջող և այնպէս աղմկալից պաշտպանում էր հայրենիքի պատիւը, չէր կարող չը տեսնել զօրաբանակի ընդհանուր լքումը և մեր զօրական կատարեալ սնանկութիւնը: Բայց հայկական Կամարելեան և այս աներկբայ և անտարակոյս փաստերի առաջ չէր կարողանում բաժանվել Փիրումօվ – Յովսէփեանից..*>>[126] : Ոչ մի ստուգող, ոչ մի ատյան չկարողացան նրանց տեղաշարժել և Կարսի բարձրագույն հրամանատարությունը մնաց անձեռնմխելի փաստորեն մինչև վերջ. ինչպես գիտենք, գեներալ Հովսեփյանը <<գերագույն>> հրամանով Կարսից թիկունք տեղափոխվեց Կարսի անկումից ընդամենը մի քանի օր առաջ՝ հոկտեմբերի 27-ին, իսկ Փիրումյանն

---

[124] **Նույն տեղում**, էջ 176:
[125] **Նույն տեղում**, էջ 47,48, 75, 80, 175, 238, 239, 336, 337, 339, 360, 376, 403:
[126] **Նույն տեղում,** էջ 402,403:

իր տեղում մնաց անսասան՝ ընդհուպ մինչև թուրքերին գերի հանձնվելը: Ինչպես վկայում են փաստաթղթերը, Հայաստանի այդօրվա կառավարությունը իրոք տեղեկացված էր Կարսի գեներալների գլխավորությամբ կատարվող աղաղակող անօրինականությունների մասին[127]: Սակայն մեղավորներին չէր պատժում՝ գոնե պաշտոնանկ անելու միջոցով: Այստեղ էական է սակայն այն հարցը, թե չէր ցանկանում պատժել, թե չէր կարողանում: Փաստերը վկայում են, որ կառավարությունը պատրաստ էր ընթացք տալ այդ գործերին, սակայն ասես մի անտեսանելի ձեռք ամեն անգամ կանխում էր դա:

Այդօրվա Հայաստանում կառավարության վրա իրական ճնշում կարող էր գործադրվել երկու ինստիտուտների կողմից. իշխող կուսակցության և բանակի: Փաստաթղթերը վկայում են, որ Կարսի մարզում առաջին զինվորական դեմք հանդիսացող Դանիել-բեկ Փիրումյանը չափազանց մտերիմ՝ այդ թվում նաև խնամիական կապեր ուներ <<Աստղերի պալատի>>՝ Դաշնակցության Բյորոյի հետ[128]: Նույն փաստաթղթերից տեղեկանում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ այդ գեներալի գլխին կուտակվում էին ամպեր, նա այցելում էր <<Աստղերի պալատ>> և այնտեղից դուրս գալուց հետո նրա գլխավերևում կրկին սկսում էր շողալ արևը. << *…Բոլորը գիտէին, որ այդ թալանները կատարվել են զօրաց հրամանատարութեան զրահի տակ, բոլորը գիտէին, որ նահանգապետը անզօր է այն մարդկանց դէմ, որ մեր աստղերի պալատում ունէին խնամակալ մեծ ձեռքեր… այդ օրերում Կարսի հրամանատարը ուխտագնացութիւն է կատարում Երևան, դէպի աստղերի պալատը, <<ընկերական շրջանները>> և դրութիւնը դիւթիչ կերպով փոխվում է, Փիրումով մնում է իր տեղում և վերադարնում է Կարս…>>*[129]:

Չնայած ի հայտ եկող բացթողումների և չարաշահումների, Հայաստանի այդօրվա ռազմական գերատեսչության բարձրագույն կազմը նույնպես Փիրումյանի և Հովսեփյանի հանդեպ որևիցե պատժամիջոց չէր կիրառում[130]: Ինչը ուղղակի ազդակ էր երկրի կառավարությանը, թե Կարսի գեներալներին ձեռք տալն արգելված է. *<<Շատ հետաքրքիր է, որ դաշնակցութիւնը, որ իր անցեալում եղել է այնչափ ինքնորոյն, այնչափ վստահ իր անելիքներում և այնչափ խիզած ու համառ, այսօր խաղալիք էր այդ ռոռմելի գեներալների և գնդապետների ձեռքում… Կառավարութիւնը մինչև ի վերջը չը կարողացաւ սանձարկել այդ գեներալներին ու գնդապետներին…>>*[131]:

Բնական է, որ նման ձևով զրահապատված լինելով, Կարսի պարետը անձեռնմխելի էր պահում նաև իրեն ձեռնատու շտաբը և իրեն ենթակա սպայակազմը, որի համար, իր հերթին, անձնական շահի տեսակետից, շատ էլ ձեռնատու էր նման հրամանատարության առկայությունը:

---

[127]Տե՛ս **նույն տեղում** , էջ 159:
[128] Տե՛ս **նույն տեղում**, 74,78,151, 159:
[129] **Նույն տեղում**, 151, 403:
[130] **Ռ. Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, Հատոր IV, Երևան, 2016, էջ 279:
[131] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 51, 79:

Չմոռանանք նաև, որ 1920 գարնանից ՀՀ կառավարությունն ու ռազմական գերատեսչությունը կանգնած էին Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի, Վեդի-Բասար, Զանգի-Բասար շրջանների հետ կապված խնդիրների հրատապ լուծման անհրաժեշտության առաջ: Եվ այդ տագնապալի օջախների առկայության ու ռեսուրսների, հնարավորությունների ու ժամանակի խիստ դեֆիցիտի պայմաններում ոնց որ ասվեր թե <<համեմատաբար խաղաղ Կարսը մի քիչ էլ կսպասի>>: Գուցեև հույսը դրվում էր այն հանգամանքի վրա, որ Կարսի բերդն անառիկ է և դեպքերի ամենավատթար զարգացման դեպքում նույնիսկ այդտեղի զորաջոկատը մի որոշ ժամանակ կդիմադրի՝ մինչև գան <<լավ ժամանակները>>՝ ուր որ է Վիլսոնի վճիռը կիրապարակվի: Եթե նույնիսկ դա այդպես է, ապա հաշվի չի առնվել տարրական մի ճշմարտություն. ցանկացած բերդի անառիկություն որոշվում է ոչ թե նրա պատերի հաստությամբ ու բարձրությամբ, այլ, առաջին հերթին, այդ պատերից ներս գտնվող զինվորի մարտունակությամբ: Իսկ այդ գործոնի վերաբերյալ ամենաճշգրիտ բնութագրումը տվել է, ինչպես վերը տեսանք հենց գեներալ Հովսեփյանը. << *…մէր զինուորը չի կռուում, չի կռուում եւ չի կռվում*>>, դրանով իսկ տալով, առաջին հերթին, Կարսի զինվորական իշխանության, իսկ խոշոր հաշվով, նաև այդօրվա Հայաստանի կառավարության 18 ամսյա գործունեության գնահատականը Կարսի նահանգում:

Սա է մեր կարծիքով, վերը հնչեցրած երկրորդ հարցի պատասխանը. գեներալների անձնական կապերը, կառավարության կողմից բանակի և կուսակցվության հետ խնդիրներ չստեղծելու ձգտումը և այդ ամենին գումարած՝ նահանգի զինվորական ոլորտում արմատական փոփոխությունն իրականացնելու համար ռեսուրսների և ժամանակի իրական դեֆիցիտը անհնարին են դարձրել այդ հակամարտությանը տալ արմատական լուծում:

Այնպես որ, եթե հմուտ կառավարիչ և դիվանագետ Ալեքսանդր Խատիսյանն անգամ տարիներ անց, իր գրառումներով սահմանափակվում է <<… *միայն փաստը արձանագրելով, առանց կանգ առնելու անոր գոյութեան եւ յարատեւման պատճառներուն վրայ…* >>, նա <<դիվանագիտություն չի խաղում>>, այլ փաստորեն բաց տեքստով հայտարարում է, որ այդ օրերին Հայաստանի Հանրապետության կառավարության ուժերից և հնարավորություններից փաստորեն վեր է եղել վերջը դնել Կարսի մարզի իշխանության երկու թևերի դիմակայությանը՝ չնայած այդ պատճառով պետական շահերին և երկրի անվտանգությանը ակնհայտորեն սպառնացող վտանգի գիտակցմանը:

## 5. *Հյուսիսը շառագունում է*

Մինչ 1919-ի ապրիլին Կարսի նահանգը Հայաստանի Հանրապետությանը միացնելուց սկսած երկու ռուսախոս հայ գեներալներ՝ թողած զինվորականի իրենց ուղղակի պարտականությունները, մեկ տարի էլ տքնում էին ամեն գնով հասնել Կարսում գեներալ-նահանգապետության հաստատմանը, Երկիրը իր հերթական

պտույտն էր կատարում և հերթական մի շերտ էր հյուսում ու ավելացնում մարդկության ճակատագրի կտավին: Ինչ էր բերում և ինչ էր խոստանում 1920-ի գարունը հայությանը և այդօրվա հայկական պետությանը:

Նախ, 1920-ի հունվարին Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց Առաջին աշխարհամարտում հաղթող տերությունների կողմից՝ այն էլ էական մի վերապահումով՝ Հայաստանը ճանաչվում էր առանց նրա սահմանները ճշտելու: Ինչը մի մեծ հույս էր, գրեթե՝ համոզմունք, որ հետագայում նոր տարածքներ կմիացվեն Հայաստանին: Հաջորդը դա այն իրողությունն էր, որ իր տրամաբանական ավարտին էր մոտենում Փարիզյան վեհաժողովը: 1920 թ. ապրիլի վերջերին հաղթող պետությունները Հայաստանի մասով Սան-Ռեմոյում որոշում կայացրին նախկին Օսմանյան կայսրության մաս կազմող Արևմտյան Հայաստանի մի քանի նահանգներ այդօրվա Հայաստանի Հանրապետությանը միացնելու վերաբերյալ: Հարցի վերջնական որոշում կայացնելը մի կողմից <<ճամփա ընկավ>> դեպի Սևր՝ դիվանանագիտական ու փաստաթղթային ձևակերպում ստանալու, մյուս կողմից՝ հայտնվեց ԱՄՆ նախագահ Վիլսոնի սեղանին՝ սպասելով որ նա գծի հայ-թուրքական սահմանը (Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում) և հրապարակի դրան վերաբերող իր իրավարար վճիռը[132]: Ժամանակակցի գրառմամբ. <<*Սևրը և Վիլսոնը այն մոգական պատկերներն էին, որոնց շուրջը համախմբվում էին հայկական բոլոր վերապրումները…>>*[133]:

Այս ամենն, իհարկե, հրաշալի էր, եթե չլիներ մի <<անհարմար>> նրբերանգ. հայերին այդ <<հողահատկացումն>> իրականացնող տերություններից և ոչ մեկը՝ ոչ առանձին-առանձին, և ոչ էլ բոլորը միասին, չցանկացան, եթե չասենք՝ կտրականապես հրաժարվեցին երաշխավորը դառնալ այդ որոշումները կյանքի կոչելու, պրակտիկ իրականացնելու հարցում: Այդ որոշումների իրականացումը՝ տվյալ դեպքում դրանց կատարման ուժային պարտադրումը, մնում էր, փաստորեն, Հայաստանի Հանրապետության ուսերին: Բայց Հայաստանն արդյոք ունե՞ր դրա համար անհրաժեշտ ուժային ռեսուրսներ և՝ նույնիսկ դրանց բավարար լինելու պարագայում, ու՞մ նկատմամբ նա պետք է կիրառեր այդ ուժային պարտադրանքը: Եվ առհասարակ, գործը հասնելու էր արդյո՞ք երբևիցե այդ պարտադրանքի կիրառմանը: Հարցը այն էր, որ պատմական այդ նույն ժամանակահատվածում Հայաստանից դուրս՝ ավելի ճիշտ՝ Հայաստանի շուրջ արդեն ձևավորվել էր մի այնպիսի իրադրություն, որը ոչ միայն որևիցե հնարավորություն չէր թողնում Սևրի պայմանագրի և Վիլսոնի վճռի իրականացման համար, այլ խիստ հարցականի տակ էր դնում արդեն հենց Հայաստանի Հանրապետություն պետության գոյությունը: Այդ խիստ վտանգավոր իրադրության ի

---

[132] Տե՛ս **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը Հայաստանի…, էջ 139:
[133] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 152:

հայտ գալը պայմանավորված էր մի կողմից՝ Թուրքիայի <<արևելյան վիլայեթներում>> քեմալական շարժման սկզբնավորումով ու շատ արագ թափ առնելով և միաժամանակ՝ բոլշևիկյան Ռուսաստանի զինված ուժերի կողմից Դենիկինին մի շարք ծանր պարտություններ հասցնելով և սրընթաց դեպի կովկասյան տարածաշրջան շարժվելով: Այդ ամենի հետ մեկտեղ չմոռանանք նաև հաղթող տերությունների՝Հայաստանի հարցում փաստացի <<ձեռքերը լվանալու>> իրողությունը:

Իրոք, եկեք հիշենք, որ 1919-ի ապրիլին հայկական զորքի Կարս մտնելուց ընդամենը օրեր անց՝ 1919-ի մայիսի 19-ին իր մի քանի գաղափարակիցների հետ Սամսունում ափ իջավ գեներալ Մուստաֆա Քեմալը: Եվ այն մեկ տարվա ընթացքում, երբ Կարսի հայկական զորախումբի հրամանատարությունը՝հայտնի երկու գեներալների գլխավորությամբ, թողած իրական բանակային առօրյան, իրականում զբաղված էին բանակը բարոյալքելով ու կազմալուծելով, Մուստաֆա Քեմալը կարողացավ Օսմանյան կայսրության նախկին <<արևելյան վիլայեթներում>> կազմակերպել հետագայում իր անվամբ կոչված շարժումը, որի նպատակն էր թույլ չտալ,որ հանկարծ Թուրքիա պետությունն և թուրքական պետականությունը կանգնեն աշխարհի քարտեզից անհետանալու հեռանկարի առաջ: Օսմանյան բանակի նախկին մեկ այլ գեներալ՝ Քյազիմ Կարաբեքիրի հետ միասին նրանք ձեռնամուխ եղան պատերազմից հետո ջախջախված օսմանյան բանակի կիսամերկ ու սոված բեկորներից մարտունակ զորախմբի միջուկի կազմակերպման ու ստեղծման գործին: Արևելյան՝ հայկական ուղղությամբ քեմալականների նպատակն էր ասկյարին բերել ու կանգնեցնել նվազագույնը Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահմանագծի վրա, ինչը անհրաժեշտաբար ենթադրում էր Կարսի նահանգի հետգրավումը Հայաստանից: Եվ դրան հասնելու համար անհրաժեշտ ուղին ու մեխանիզմը Քեմալը հնչեցրել էր չափազանց պարզ և հասկանալի. <<*Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը*>>[134]: Իրոք որ, ասված է չափազանց պարզ և հասկանալի: Այնպես որ, շարադրած փաստերից միանգամայն հասկանալի է, որ Սան-Ռեմոյի և դրան հաջորդած Սևրի <<հողի>> վրա մոտ ապագայում հայ-թուրքական զինված բախումը՝ տվյալ դեպքում քեմալական շարժման զորամիավորումների հետ, դառնում էր արդեն անխուսափելի:

Իսկ քեմալական շարջումն ինքը արդյոք ունե՞ր այնքան ռեսուրսներ, որ կարողանար իրագործել իր այդ <<հայկական ծրագրերը>>: Սկզբնական շրջանում, իհարկե՝ ոչ: Բայց քեմալականների նպատակները գնալով թափ էին հավաքում և մեկ տարվա ընթացքում այդ շարժումը դարձավ քաղաքական մի այնպիսի գործոն, որի հետ սկսեցին հաշվի նստել նույնիսկ հաղթող տերությունները: Բայց ամենամտերիմ՝ բառացի եղբայրական հարաբերություններ՝ <<իմպերիալիզմի դեմ պայքարի>> հողի վրա քեմալական շարժումը հաստատեց բոլշևիկյան Ռուսաստանի հետ: Սկսած

[134] **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը…, էջ 126:

1919թ. մայիսից քեմալա-բոլշևիկյան շփումները կայանում և ինտենսիվանում էին տարբեր մակարդակներում, իսկ 1920 թ. ապրիլի 26-ին՝ ճակատագրի հեգնանքով՝ հենց Սան-Ռեմոյի կոնֆերանսի ավարտի օրը, Մուստաֆա Քեմալը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անունից իր հայտնի նամակն է հղում բոլշևիկյան առաջնորդ Վլադիմիր Լենինին, որտեղ առաջարկում էր իր ծառայությունները Անտանտի դեմ համատեղ պայքար մղելու հարցում, այդ թվում՝ նաև ընդդեմ <<իմպերիալիստական Հայաստանի>>[135]: Ընդհուպ մինչև զինված ուժերը միավորելու և անհրաժեշտության դեպքում՝ միացյալ քեմալա-բոլշևիկյան զորախմբով միասնական ռազմական գործողություններ իրականացնելու միջոցով[136]: Քեմալականների ծրագրերը, կարելի է ասել, համաշխարհային մասշտաբի էին և դրանց իրականացնելու համար էլ, բնականաբար անհրաժեշտ էր ունենալ համաշխարհային մասշտաբի օժանդակող ուժ: Ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի քեմալականները գտան այդ ուժը, որը խոստացավ օգնել նրանց, խոստումն էլ կատարեց լի ու լի, տրամադրելով քեմալականներին ոսկուց ու ռազմանավերից սկսած մինչև ներարկիչներ ու <<մայկա-տռուսիկ>>[137]:

Իսկ նույն Ռուսաստանում դեպքերը նույնպես զարգանում էին շատ արագ ու սրընթաց: Այդ թվում՝ նաև կովկասյան ուղղությամբ: Ցարական բանակի, այդ թվում նաև հայկական բանակում ծառայության անցած սպայության համար անհերքելի հեղինակություն և ռուսական հզոր պետականության վերականգման հույսեր ներշնչող Անտոն Դենիկինն այլևս տապալված էր: Նրան փոխարինելու եկած բարոն Վրանգելը վերահսկում էր ընդամենը Ղրիմը և Հայաստանից արդեն շատ հեռու էր: Իսկ Անտոն Դենիկինի պարտվելուց հետո դեպի Կովկաս առաջ էին շարժվում արդեն այլ զորքեր: Այդ գնդերի առջևից քայլող նվագախումբը արդեն <<Боже царя храни>>-ի փոխարեն հնչեցնում էր լրիվ մի այլ հիմն՝ անունն <<Ինտերնացիոնալ>>, իսկ երկգլխանի ռուսական արծվի փոխարեն էլ այդ զորքի գլխավերևում փողփողում էր արդեն մուրճ ու մանգաղով կարմիր դրոշը: Հյուսիսը սկսել էր շառագունել. <<*... ռուսները, մի կողմից յիմարացնելով..., միուս կողմից կաշառելով մարդկանց, աղմկում էին հրապարակը կարմիր, բանվորութիւն, աշխատանք բացականչութիւն-ներով և աստիճանաբար ներս սողում Կովկաս և նորից գրաւում իրանց շահաւետ և բուրալից անկիւնները... Ռուսները, բոլշեվիկ դիմակի տակ, ձգտում էին գրաւել Կովկասը, վերահաստատել այստեղ իրանց նախկին տիրապետութիւնը և միջոցների մէջ խտրութիւն չէին դնում*>>[138]:

Եվ նման իրադրության մեջ հայերի կողմից արդեն ինչ ուժային պարտադրանքի և այդ միջոցով պետության տարածքների ընդլայնման մասին կարող էր խոսք գնալ, երբ իրականությունն այն էր, որ մենք նախևառաջ պետք է հոգ տանեինք մեր

---

[135] Տե՛ս **նույն տեղում**, էջ141-144:
[136] Տե՛ս **նույն տեղում,** էջ 141-145:
[137] Տե՛ս **նույն տեղում**, էջ 145-146, 427-434:
[138] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը..., էջ 524,567:

պետականության և եղած պետական սահմանների պահպանման համար: Իսկ դրա համար նախ պետք է կառողանայինք զինված դիմադրություն ցույց տալ երկու ուղղությամբ՝ թե թուրքական՝ քեմալական, թե բոլշևիկյան՝ ռուսական ինտերվենցիոն զորաջոկատներին և միայն որոշ դրական արդյունքի հասնելու դեպքում հանդգնել մտածել՝ ավելի ճիշտ՝ երազել Տրապիզոնի ու Վանի մասին: Եվ վերջապես ու՞մ դեմ էր կռվելու հայկական բանակը: Քեմալական զորաջոկատների, բոլշևիկյան գնդերի, թե՞ նրանց միացյալ զորախմբի: Եվ իրականում կռվելու էր արդյո՞ք: Առաջ անցնելով ասենք բոլորիս համար հանրահայտ փաստը. կռվողը կռվեց ու լավ էլ կռվեց: Դրոն Սուրմալուի ճակատում նախ կանգնեցրեց, իսկ հետո էլ հետ շփրտեց քեմալական զորքին և Սուրմալուից մենք ի վերջո զրկվեցինք ոչ թե այդ ճակատում պարտվելու, այլ **<<ԿԱՐՍ>>**-ի պատճառով: Զանգեզուրում Նժդեհը հաջողությամբ մարտնչեց թե բոլշևիկյան գնդերի, թե կողքից նրանց <<դամ պահող>> ադրբեջանցի ցարական գեներալ Ալի Աղա Շիխլինսկու զորքերի դեմ և հեռացավ միայն նրանից հետո, երբ անհերքելի երաշխիքներ ունեցավ, որ Զանգեզուրը կմիացվի ոչ թե կարմրած Ադրբեջանին, այլ Խորհրդային Հայաստանին: Այնպես որ մեր բանակի կռվել-չկռվելը բացի ամեն ինչից, որոշվում էր նաև, թե ով է նրան կռվի տանողը և մարտի դաշտում առաջնորդողը: Ի դեպ, Արցախյան շարժման օրերին Նժդեհին նվիրված <<*Արազ ափին ծնված ընկեր*>> հայտնի երգին ավելացվեց մի գեղեցիկ քառյակ, որով կցանկանանք մի քիչ մեղմել մեր այս <<չոր ու ցամաք>> շարադրանքը:

Զանգեզուրը հայոց մնաց

Քո հանճարով, Մեծ Նժդեհ:

Թե բոլշևիկ, թե շուն թուրքը

Բազկիդ ուժըն են ճաշակե:

Լիրիկան՝ լիրիկա, բայց ամբողջ <<հայկական կամպանիայի>> ելքը, այդօրվա հայկական պետության լինել-չլինելը որոշվելու էր Կարսի ռազմավարական ուղղությամբ: Եվ հերթական անգամ առկախվում է հարցերի հարցը. հայկական բանակի Կարսի զորախումբը պատրաստ էր արդյո՞ք մարտնչել հանուն հայկական պետության պահպանման: Ու՞մ դեմ այդ զորախումբը պատրաստ էր կռվել, ու՞մ դեմ չէր կռվի, կամ էլ կկռվեր, առհասարակ, թե ոչ:

Կարսի զորախմբի, մեղմ ասած, անմխիթար վիճակին մենք վերը քանիցս անդրադարձել ենք: Սակայն շատ կարևոր է հասկանալ, թե ինչպես էին անդրադարձել այդ զորախմբի ընդհանուր տրամադրությունների և, մասնավորապես, նրա մարտունակության վրա այս բաժնում շարադրված իրադարձությունները: Կարսի զորախմբի պարագայում խոսքը վերաբերում է, բնականաբար և առաջին հերթին, ռուսաստանյան իրադարձություններին:

Ինչպես քանիցս շեշտվել է, ցարական բանակից մեխանիկորեն Հայաստանի Հանրապետության բանակում հայտնված և այստեղ ծառայության անցած ռուսական բանակի սպաների՝ այդ թվում և ազգությամբ հայ սպաների, ճնշող մեծամասնության հայացքը միշտ էլ հառած է եղել դեպի հյուսիս: Այնտեղ, հյուսիսում էր ամեն ինչը՝ ուժ, հզորություն, պետություն, բանակ, իշխանություն… Ի՞նչ էր այդ ամենի համեմատ այս թշվառ, ողորմելի և անհասկանալի Հայաստանը՝ իբր պետություն՝ լցված նույնքան էլ անհասկանալի ու ողորմելի իրենց իբր արնակիցներով: Այդ սպաները <<քեֆները լավ ժամանակ>> իրենց զգացմունքներին ազատություն էին տալիս և իրենց կարոտախտը <<վասն Ռուսիո>> փարատում էին նրա հիմնը՝ <<Боже царя храни>> երգելով և գեներալ Վրանգելի կենացը խմելով[139]:

Իսկ ինչպես էր <<Հյուսիսի շառագունելն>> անդրադառնում հայկական բանակի Կարսի զորախմբի տրամադրությունների վրա: Խոսքը, բնականաբար և առաջին հերթին, ռուսական բանակի նախկին սպայակազմի մասին է: Նախկինից եղած հենքը և տրամաբանությունը հուշում են, որ այդ սպայակազմի տրամադրությունների մեջ տիրող գլխավոր գիծը՝ այն է, իրենց համարել ռուսաստանյան զորական, որը ժամանակավորապես ծառայում է Հայաստանում և սպասում է տարածաշրջան Ռուսաստանի վերադառնալուն, բոլշևիկյան հաղթանակների ֆոնին ամենևին էլ չփոխվեցին և նույնիսկ չսասանվեցին:

Նախ այդ սպաները և նույնիսկ երկու գեներալները ինչ-ինչ՝ թունդ կայսերական գաղափարական կերպարներ չէին, որ կտրականապես մերժեին բոլշևիզմը: Նրանց համար գլխավորը Ռուսաստանի հետ կապող պորտալարի պահպանումն էր: Իսկ թե որ Ռուսաստանի՝ միապետական, սահմանադրական թե բոլշևիկյան,- արդեն էական չէր: Կարևորը՝ որ մնար Ռուսաստանի հետ կապող այդ լարը: Կարևոր չէր, թե հատկապես որ գույնի Ռուսաստանի: Կարևոր էր, որ Ռուսաստանը կրկին Տեր կանգնի իրենց: Ի վերջո, այդ սպայակազմը ոչ հին, ոչ էլ նոր Ռուսաստանի տերերի շարքում չկար՝ և չէր էլ կարող լինել: Նրանք ընդամենը Ռուսաստանի հովանու տակ իրենց <<ապահով զգացողներից >> էին՝ միանգամայն օտար ու անընդունելի համարելով սեփական պատմական հայրենիքը՝ իր բազում ու անհասկանալի խնդիրներով.<< *Իր հոգու խորքերում, այդ գեներալներից և գնդապետներից ամեն մէկը փայփայիմ էր վերստին ռուսերեն հրամանատարելու երազը և շնչասպառ յետևում էր Ռուսաստանի անցքերին: Թէ ո՞վ կը տապալվի այնտեղ և ո՞վ կը հաղթէ, այդ նորան հետաքրքրում էր, իհարկէ, այս և այն չափով, բայց և այնպէս նա տրամադիր էր նորից ընկնելու ռուս մեծ օվկիանոսը, ուր կարիք չէր լինի ոչ հայ լեզվի և ոչ հայ պատմութեան...: Այդպէս էր մեր հրամանատարութեան հոգեբանութիւնը…>>*[140]: Այդ հոգեբանության ու մտածելակերպի մի շարք բացահայտ

---

[139] Տե՛ս **նույն տեղում**, էջ 405,406:
[140] **Նույն տեղում**, էջ 558:

դրսևորումներ ի հայտ կգան նախ 1920 –ի մայիսյան բոլշևիկյան խռովության օրերին, և ամբողջապես <<երես կելնեն>> արդեն 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին՝ քեմալականների ներխուժման ընթացքում:
Միաժամանակ, սրտացավ մարդիկ՝ Հայաստան ներթափանցած բոլշևիկյան գործակալության ներկայացուցիչները, շատ մատչելի ձևով բացատրում և խոստանում էին, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո նախկին ռուսական սպայությունը անգործ չի մնա, և իր ծառայությունը կշարունակի արդեն բորշևիկյան կարմիր զորքերում: Բուն Ռուսաստանում, ինչպես հայտնի է, այդ օրերին նման օրինակներն հազարավոր էին: Եվ ի վերջո, շատ հեռու չգնանք,- հենց Կովկասի <<հարցերը լուծող>> 11-րդ Կարմիր բանակի միմյանց փոխարինած երկու հրամանատարներն էլ՝ Միխաիլ Լևանդովսկին և Անատոլի Գեկկեռնը, երկուսն էլ երեկվա ցարական շտաբս-կապիտաններ էին, երկուսն էլ թիֆլիսեցի տղերք: Այնպես որ Ռուսաստանը գալիս է, և պետք է դրան պատրաստ լինել: Իսկ ինչ է անհրաժեշտ անել, որ այդ <<մեծ վերադարձը>> տեղի ունենա հնարավորինս արագ, սահուն և արդյունավետ: Շատ քիչ բան՝ ընդամենը չկռվել, այն է՝ ժամանակին ապահովել հայկական զորախմբի կատարյալ քայքայումն ու անհրաժեշտ կապիտուլյացիան: Դեհ, բոլշևիկյան՝ այն է ռուսական զորքերի դեմ չկռվելը հասկանալի էր ինքնին: Նույնիսկ Դրոն մի դրվագով հայտարարել էր, թե ռուսների դեմ կռվելն իր ուժերից վեր է: Մնում է թուրքական-քեմալական զորքը: Բայց քեմալականներն այսօր բոլշևիկների, այն է՝ռուսների հետ նույն քարշակին են լծված: Այնպես որ, այսօր թուրքերի դեմ կռվելը հավասարազոր է ռուսների դեմ կռվելուն: Ստացվում էր, որ հայկական բանակի Կարսի զորախումբը առհասարակ չէր կռվելու և ոչ մեկի դեմ՝ ոչ բոլշևիկների՝ ռուսների, և ոչ էլ քեմալականների՝թուրքերի:

Այսինքն, եթե Դենիկինի պարտությունները ինչ-որ մի պահ նույնիսկ կարող էին առաջ բերել շփոթություն ռուսաստանյան այդ հայ սպայության կազմում՝ տիրոջը կորցնելու առումով, ապա շատ արագ վիճակը վերականգնվեց: Գաղափարական խնդիրների բացակայության պայմաններում նոր տիրոջը երկար փնտրելու և սպասելու անհրաժեշտություն չեղավ: Հայկական բանակի սպայության այդ հատվածը նոր տիրոջը՝ բոլշևիկներին, գտավ ու ենթարկվեց նրանց իրոք շատ արագ և, կարելի է ասել՝ սիրով[141]: Իսկ Կարմիր բանակը Կովկասում անկասելիորեն շարժվում էր առաջ և նույնքան էլ անկասելիորեն Հայաստանի ու նրա զինված ուժերի համար՝ առաջին հերթին Կարսի ուղղությամբ, մոտենում էին վճռական գործողությունների օրերը:

[141] Զավեշտալի, բայց խիստ խորհրդանշական մի դիպված. երբ 1920-ի մայիսին Կարսում ու Սարիղամիշում հայտնվեցին բոլշևիկյան հեղկոմները՝ իրենց կարմիր դրոշներով, ապա Վրանգելի կենացն առաջարկող ռուսախոս այդ հայ գնդապետը մայիսյան այդ օրերին արդեն խոնարհվում և արտասվելով համբուրում էր բոլշևիկյան կարմիր դրոշը:

### *6. Քեմալա-բոլշևիկյան դաշինքը և հայ բոլշևիկները*

Մեր օրերում ամենամոդայիկ քաղաքական տերմիններից է <<գունավոր հեղափոխություն>> եզրույթը: Եվ ինչպես քաջ հայտնի է, այդ <<գունավոր հեղափոխությունների>> ամենամոլի հակառակորդը այսօր Ռուսաստանն է: Այդ կապակցությամբ ժամանակակից ռուս պատմաբաններից մեկը շատ տեղին կատակել է, թե իրոք որ, <<ամեն նորը դա լավ մոռացված հինն է>>. Ռուսաստանը չգիտես ինչու մոռացել է, որ այս աշխարհում <<գունավոր հեղափոխությունների>> պրակտիկան ներդնողն ու իրագործողը առաջինը եղել է հենց ինքը՝ Ռուսաստանը, իսկ ավելի ճշգրիտ՝ բոլշևիկյան Ռուսաստանը, որը տվյալ երկրի իրեն ոչ հարմար

իշխանությունը փոխարինել է իրեն հնազանդ, բառացիորեն խամաճիկ իշխանությամբ: Այն էլ ոչ միայն արտաքին օժանդակության, այլ ուղղակի ուժային՝ ռազմական միջամտությամբ: Ճիշտ է, հետհոկտեմբերյան շրջանի այդ հեղափոխությունները թեև եղել են գունավոր, բայց ցավոք սրտի՝ միշտ մեկ գույնի՝ կարմիր[142]:

Այդ <<կարմիր>> հեղափոխությունների ամենադասական իրագործումը դրսևորվեց Անդրկովկասում: Դա ստացավ խորհրդայնացում անվանումը: Անդրկովկասի խորհրդայնացման այդ գործընթացում Մոսկվայի հենակետը Կովկասում քաղաքացիական պատերազմի օրերին ստեղծված բոլշևիկյան Կովկասյան երկրամասային կոմիտեն էր (КАВКАЗСКИЙ КРАЕВОЙ КОМИТЕТ), որի ղեկավար մարմնի՝ Կովկասյան բյուրոյի (КАВБЮРО) անփոփոխ ղեկավարն էր այդ տարիների ընթացքում Գ.Կ.Օրջոնիկիձեն: Իսկ Մոսկվայի կողմից այդ մարմնի <<նայողն>> ու Կովկասում նրա գործունեության հիմնական ուղորդողը Ի.Վ. Ստալինն էր:

Հասկանալի է, որ ռազմական գերակշռությունն ու բիրտ ուժը իրենց հերթին, բայց անկախացած կովկասյան պետությունները վերանվաճելու համար բոլշևիկյան Ռուսաստանին անհրաժեշտ էր ներխուժումից առաջ տեղերում իրականացնել տվյալ պետության փլուզումը նախապատրաստող ու ապահովող որոշ <<հողային աշխատանքներ>>: Կոնկրետ Հայաստանի պարագայում այդ նախապատրաստական քայքայիչ աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը դրված էր հայազգի արդեն համոզված հաստիքային հակապետական տարրերի՝ հայ բոլշևիկների[143] և նրանց օժանդակելու նպատակով դրսից ուղարկվող այլազգի գաղափարական ընկերների վրա. <<…*այդ նախերգանքն էր այն աշխատանքների, որ պէտք է կատարէին ռուս սվիները հայ դավաճանների առաջնորդութեամբ Երևանում և մեր երկրի միուս մասերում*>>[144]: Առավելևս, որ այդօրվա Հայաստանում՝ ի տարբերություն հարևան Վրաստանի և Ադրբեջանի, բոլշևիկները օրենքից դուս չէին և շատ հաճախ նրանք նույնիսկ աշխատանքի էին ընդունվում երկրի պետական հաստատություններում: Ի դեպ, ինչպես այսօր կասեին, տնայնաբույծ, տեղական արտադրության բոլշևիզմ այդօրվա Հայաստանում չկար: Նույնիսկ մարքսիզմի դասական տեսության համաձայն, Հայաստանում բացակայում էր բոլշևիզմի ծլարձակման համար փոքրիշատե նպաստավոր սոցիալ քաղաքական բազան: Պատահական չէ, որ ժամանակակիցը անկեղծորեն գրում է . <<*Թէ ի՞նչ էր բոլշևիզմը և թէ ի՞նչ դիմակի տակ էր գալիս ռուսը այս անգամ Կովկասու մենք չը գիտէինք*>>[145]:

---

[142]Տե՛ս **А.В.Квашонкин**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, № 4, С. 432 – 456; **А.В.Квашонкин**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, № 5, С. 586 – 610:

[143] Տե՛ս **Վ.Հարությունյան**, Կարսի մարզը Հայաստանի…, էջ 120-127:

[144] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 510:

[145] **Նույն տեղում**, էջ 575:

1919-ի վերջերին-1920-ի սկզբներին ասպարեզ իջած <<Արմենկոմ>>-ում հաշվառված հայ բոլշևիկներ մեծ մասը՝ հատկապես ղեկավար կազմը, այսպես թե այնպես դրսից եկած ընկերներ էին: Իսկ կազմակերպական առումով <<Արմենկոմ>>-ը հանդիսանում էին Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության ընդամենը մի բջիջ՝ մարզային կոմիտեի կարգավիճակով և նրա անդամների թիվը ամենաճոխ հաշվարկներով ամբողջ Հայաստանում չէր հասնում հազարի[146]:

Այստեղ ավելորդ չէ անդրադառնալ մի նրբերանգի. մեզանում բավականին ընդունված է հայ բոլշևիկներին բնութագրել որպես <<դավաճաններ>>: Բայց եթե լինենք ավելի ճժգրիտ, ապա հայ բոլշևիկների հանդեպ <<դավաճան>> եզրույթն օգտագործելը այնքան էլ կոռեկտ չէ: Նրանք ոչ մեկին էլ չեն դավաճանել՝ ոչ իրենց կուսակցությանը, ոչ իրենց գաղափարներին և ոչ էլ իրենց տերերին: Նրանք ոնց որ ի սկզբանե եղել էին ու հանդես էին գալիս որպես անկախ հայկական պետականության համոզված ու երդվյալ հակառակորդ ու թշնամի, այդ սկզբունքին հավատարիմ մնացին նաև մինչև իրենց վերջին օրերը՝երբ սկսեցին <<հնձվել>> իրենց իսկ տերերի ձեռքով: Իսկ իրենց գաղափարական հետնորդների տեսքով՝նրանք մեր կողքի հետ քայլում են ընդհուպ մինչև այսօր: Բնական հարց է առաջ գալիս, թե հանուն ինչի, ինչ պատճառներից ելնելով և ինչ նպատակներ հետապնդելով հայ մարդկանց այդ համախումբը  որդեգրեց այդ խիստ ժխտողական ու ավերիչ կեցվածքն ու դիրքորոշումը իրենց ազգային պետականության նկատմամբ: Բացատրությունը ավելի քան պարզ է ու մարդկայնորեն էլ միանգամայն հասկանալի՝ խորտակելով սեփական ազգային պետականությունը և դարձնելով այն Խորհրդային Ռուսաստանի կցորդ, ազգային բոլշևիկյան կադրերը հնարավորություն էին ստանում տեղեր զբաղեցնել թեև արդեն հակամիապետական, բայց միևնույնն է՝ մեծապետական և ծավալապաշտական, աշխարհում ամենահզորներից մեկի՝ ռուսական նոր իշխանական վերնախավի շարքերում: Առնվազն՝տեղական ղեկավարների մակարդակով: Էլ չենք խոսում չբացառվող ավելի հեռանկարային հնարավորությունների մասին, ինչպես դա եղավ ասենք մի շարք կովկասյան, այդ թվում և հենց հայ բոլշևիկների պարագայում, որոնք հասան բոլշևիկյան Ռուսաստանի ամենաբարձր իշխանական էշելոններ:  Ասում են ամեն մի ժամանակը ծնում է իր հերոսներին: Այդ ժամանակները այլ հերոսների կողքին ասպարեզ բերեցին նաև այդ մտածելակերպն ու նպատակները ունեցող հայ հերոսներին՝ հայ բոլշևիկների տեսքով ու կերպարով:
Միանգամայն կանխատեսելի էր և նույնիսկ բնական, որ հանդիսանակով ընդհանուր՝ համառուսաստանյան բոլշևիկյան կուսակցության տեղական կառույց, հայ բոլշևիկները Կովկասում, իսկ առաջին հերթին՝ Հայաստանում, քեմալա-բոլշևիկյան դաշինքի ծրագրերի ու նպատակների իրիականացման տեսանկյունից

---

[146] Տե՛ս Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920 թթ. Փաստաթղթերի ժողովածու, աշխատասիրությամբ **Վլադիմիր Հարությունյանի**, Երևան, 2014, 420 էջ (այսուհետ՝ **Վ.Հարությունյան**, Հայ բոլշևիկների…) էջ 101:

այդ դաշինքում պարտադիր պետք է ունենային իրենց ուրույն տեղն ու պարտականությունները: Եվ ունեին. *<<Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը>>*: Այս ծրագրային դրույթի հեղինակը, ինչպես արդեն նշել ենք, Մուստաֆա Քեմալն է:

*<<…միտքը <<Մեծ, Միացյալ և Անկախ Հայաստանի>> մասին հանդիսանում է խիստ հետադիմական, վտանգավոր ու հանցավոր քիմերիկ մի գաղափար, որի դեմ պետք է պայքար ծավալի բոլշևիկյան կուսակցությունը…>>:* Իսկ այս ծրագրային դրույթի հեղինակը հայ բոլշևիկ Անաստաս Միկոյանն է[147]:
Ինչպես տեսնում ենք, չնայած շարադրանքի որոշ տարբերության, ծրագրային ու նպատակային էությամբ երկու դրույթներն էլ նույն են. բացառել անկախ հայկական ազգային պետության գոյության հնարավորությունը. *<< Ռուսաստանը և Թիւրքիան, ոխերիմ թշնամիներ, բարեկամ դիմակաւորված այսօր, համայնորէն խեղդում էին նորածին Հայաստանը>>*[148]:

Թուրք գործիչ Մուստաֆա Քեմալի մոտեցումը միանգամայն պարզ է ու հասկանալի. նա ձգտում էր պարտված Թուրքիայի՝ օտարների կողմից դեռևս <<չիրացված>> բեկորներից կազմել-հավաքել նոր Թուրքիա և այդպիսով անհետացման իրական սպառնալիքից փրկել ու վերականգնել թուրքական պետականությունը: Եվ այդ ծրագրի իրացման ճանապարհին քեմալականներին անհրաժեշտ էր իրոք ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը: Մուստաֆա Քեմալը՝ նաև հայ բոլշևիկների օժանդակությամբ, ի վերջո իրագործեց իր այդ ծրագիրը և հասավ իր նպատակին:

Իսկ ինչ նպատակ էին հետապնդում հայ բոլշևիկ Անաստաս Միկոյանը և իր հայ կուսակիցները: Տասնամյակներ շարունակ, ներառյալ մեր օրերը, ոմանք տքնում են ներկայացնել այդօրվա հայ բոլշևիկներին որպես գաղափարներ կրողների և ինչ-ինչ կարևոր գործեր իրականացնողների: Բայց չգիտես ինչու համառորեն շրջանցվում է այն պարզ իրողությունը, որ իրականում, այդ անձինք, առատորեն ֆինանսավորվելով և հենվելով մի հզոր տերության ուժի վրա, պայքար էին մղում իրենց պատմական հայրենիքի՝ օտարների կողմից դեռևս <<չիրացված>> բեկորներից մի կերպ կազմված-հավաքված հայկական պետականության ոչնչացման ուղղությամբ: Բացի այդ գնով խորհրդային իշխանական էլիտայի շարքերում ընդգրկվելը որևիցե այլ մոտիվ գտնել ու նշել նրանց գործողություններում, պարզապես հնարավոր չէ: Թերևս, որպես գաղափարական ֆոն, կարելի է ավելացնել միայն հայտնի, սակայն խիստ կասկածելի սպեկուլյացիաները համաշխարհային հեղափոխության և Արևելքի ժողովուրդների ազատագրման վերաբերյալ:

---

[147] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը Հայաստանի…, էջ 123; **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ 78-82;
[148] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 510:

Բնական է, որ Կովկասի ուղղությամբ Կարմիր բանակի առաջ շարժվելուն զուգընթաց պետք է ակտիվանար և կանոնակարգվեր հայ բոլշևիկների գործունեությունը՝ առաջին հերթին՝ քարոզչությունը, հայկական պետականության թուլացման ուղղությամբ: Անհրաժեշտ միջոցներ <<կենտրոնից>> տրամադրվում էին. *<<Դեռ 19 թվի վերջերում այստեղ ու այնտեղ խոսում էին, որ Մոսկվան մեծ զումարներ է ուղարկել մեր երկիրը>>*[149]:

Քարոզիչները վստահ կերպով պնդում էին, թե ներկայացնում են Ռուսաստանը և խոսում են Ռուսաստանի օրվա իշխանությունների անունից: Եվ խոսում ու քարոզում էին այդօրվա համար ականջը շոյող բաներ. <<ռուսը կրկին գալիս է, իր հետ բերում է պատերազմի ավարտ ու խաղաղություն, կայունություն, հաց, մթերք, կարգ ու կանոն: Հայերիս համար մտահոգիչ թուրքերի գործոնը խնդիր չէ: Թուրքերն էլ ձեր իմացած երեկվանը չեն, նրանք այժմ ռուսների հետ են և գալիս են ոչ թե հային կոտորելու, այլ ընդամենը դաշնակներին քշելու և ռուսին օժանդակելու՝ հայոց երկրում խաղաղություն, կարգ ու կանոն հաստատելու համար: Եվ առհասարակ, Հայաստանին և հային անվտանգ, ապահով ու հանգիստ կյանք կերաշխավորեն բոլշևիկների իշխանությունը և թուրքերի ու Ադրբեջանի հետ մեր եղբայրանալը: Իսկ այդ դրախտին շուտափույտ հասնելու համար անհրաժեշտ է շատ քիչ բան. անհրաժեշտ է, որպեսզի հայոց բանակը չկռվի, ժողովուրդն էլ չխանգարի թուրքերի ու բոլշևիկների առաջխաղացմանը:>>[150]:

Բանակում և հասարակությունում տիրող վերը նկարագրած իրավիճակն ու մթնոլորտը չափազանց բարեբեր էին հյուսիսից եկող այդ ազդակներն ընդունելու և կլանելու համար: Թե սպայակազմի նշված հայտնի հատված, թե ժողովրդի համար այդ օրերին և այդ իրավիճակում բոլշևիզմը նախևառաջ դա ռուսն էր, իսկ ռուսը՝ նախկին հուշերով, դա կարգ ու կանոն էր, խաղաղություն, ապահովություն: Եվ կրկին. <<*Ռուս կայսերական ռեժիմը երկրի հասկացողութիւններում դառնում էր այն իդեալը, որին նա կարոտում էր>>*[151]: Իսկ ամենակարևորը, նույնպես հին հուշերով՝ռուսը դա <<թուրքի դեմն առնողն>> էր: Թեև այս անգամ արդեն՝ թուրքի հետ եղբայրանալու միջոցով: Եվ ըստ հայ բոլշևիկների՝ Հայաստանում հայի պարտքն էր չխոչընդոտել այդ եղբայրության խիստ հայանպաստ ծրագրերի իրագործմանը:

Պետք է ասել, որ այդ քարոզչությունը տվեց իր արդյունքը, քանզի դրա համարմիջավայրը բավականին պարարտ էր: Հայաստանի կառավարությունը տեղեկացրել և բացատրել էր ժողովրդին, որ բոլշևիկը՝ այն է, ռուսը, այսօր թութքի հետ է և առաջինը հենց ինքն է օժանդակում թուրքին որպեսզի նա կարողանա իրագործել իր զավթողական ծրագրերը հայաստանի նկատմամբ: Հայաստանի բնակչության մեծամասնությունը՝ հիմնականում ռուսահայերը, քեմալա-բոլշևիկյան

---

[149] **Նույն տեղում**, էջ 510:
[150] Տե՛ս, օրինակ, **Ա.Ներսիսյան**, Կարո Սասունի, Երևան, 2009, էջ. 165-170:
[151] Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը…, էջ 575:

դաշինքի փաստը ընդունեցին ի գիտություն, սակայն դրան տվեցին միանգամայն այլ մեկնաբանություն. եթե թուրքն այսօր ռուսի հետ է, ուրեմն թուրքից վտանգ չկա, էլ թուրքի դեմ ինչու կռվենք[152]:

Թե թուրքի գալուն, թե ռուսի գալուն, ինչ կերպարանքով էլ նրանք ներկայանային այդ պահին, կտրականապես դեմ էին այդօրվա Հայաստանում ապաստանած արևմտահայերը: Քանզի տեսել էին թե թուրքի խերը, թե նաև ռուսի խերը, երբ վերջիններս իրենց զորքի <<ստրատեգիական>> առաջ-հետ-առաջ տեղաշարժերով հասնում էին հայկական այն շրջանների վերջնական հայաթափմանը, ինչը դեռևս չէին հասցրել իրականացնել թուրքերը: Իսկ գրաված շրջաններում էլ ռուսները, փաստորեն, արգելում էին հայերին վերադառնալ իրենց տները, քանզի, ինչպես արդեն նշվել է, պլանավորված էր այդ տարածքները բնակեցնել ռուս էթնոսով: Այնպես որ արևմտահայերի և արևելահայերի վերաբերմունքը հյուսիսի հանդեպ նույնը չէր և առկա էին մոտեցումների տարբերություններ: Բայց հայ բոլշևիկները այդ իրավիճակն էլ ճարպկորեն շահարկում ու ծառայեցնում էին իրենց նպատակների համար: Խաղալով մարդկանց ցածրագույն բնազդների վրա և իրար դեմ հանելով նույն ազգի երկու հատվածները, նրանք իրենց կողմն էին գրավում արևելահայ մեծամասնությունը և տեղի մահմեդականությունը: Բոլշևիկները տեղաբնիկ արևելահայությանն ու մահմեդական տարրին սադրում էին, որ արևմտահայերին անհրաժեշտ է ստիպել, որ թողնեն-գնան Արևմտյան Հայաստան,այսինքն դեպի անխուսափելի սպանդ, կամ էլ, եթե մնում են, այստեղ ապրեն որպես փախստական միայն տրամադրվող նպաստի միջոցներով, որ կառավարության կողմից նրանց տրամադրած վարելահողը, սերմացուն և ամեն ինչը պետք է հետ վերցնել ու բաժին հասցնել արևելահայերին ու մահմեդականներին[153]: Երկրի հասարակության ու բանակի մի զգալի մաս, որ թաթախված, ներգրավված ու արդեն խրված էր վերը բերված, ըստ էության, պետականությունը քայքայող մեծ ու փոքր գործընթացների մեջ և ոնց որ թե այդ ամենից դուրս գալու ուղիներ ու հնարավորություն էլ չէր տեսնում ու չէր էլ փնտրում, հյուսիսից եկած այդ ազդակները սկսեց ընկալել որպես ստեղծված իրավիճակից հնարավոր, և ամենակարևորը՝ իրենցից ոնց որ թե մեծ ճիգեր չպահանջող և ուրիշների հաշվին վիճակից դուրս գալու միջոց: Բայց թե որն էր լինելու դրա համար վճարվելիք իրական գինը, այդ ուղղությամբ խորանում ու իրենց հաշիվ էին տալիս ոնց որ թե շատ քչերը: Դեպքերի ընթացքն այնպիսին էր, որ ներսից՝ տարբեր խավերի լուռ, հետևանքների մասով ամբողջ խորությամբ չգիտակցված, բայց իր էությամբ ու բնույթով՝ հանցավոր համաձայնությամբ

---

[152] Ստալինին ուղարկված հեռագրերից մեկում (22 նոյեմբերի, 1920 թ.) Օրջոնիկիձեն բառացիորեն գրում է. <<…*Դաշնակները խոստովանում են, որ քեմալա-բոլշևիկյան դաշինքի մասին իրենց քարոզչությունը առաջ բերեց Քեմալի դեմ չկռվելու տրամադրություններ, քանի որ նա բոլշևիկների դաշնակիցն է*:>>, տե՛ս Большевистское руководство. Переписка, 1912—1927. Сборник документов. Составители: **А. В. Квашонкин, О. В. Хлевнюк, Л. П. Кошелева, Л. А. Роговая**. Москва, 1996, 423 с., Документ No 107 :

[153] Տե՛ս **Ա.Ներսիսյան**, նույն տեղում:

իրականացվող պետականության տարուբերման ֆոնի վրա, <<ճիշտ ժամանակին ու ճիշտ տեղում>> հայտնվեցին օտարի ձեռքից կերակրվող ու նրա կողմից գործուղված ու կառավարվող հայ բոլշևիկները: Նրանց ասպարեզ գալը և երկրի ու հասարակության ամենևին ոչ միարժեք միտքն ու կարծիքը պղտորելն ու փոթորկելը, երկրի ներսում հինգերորդ շարասյուն կազմակերպելն ու այն գործի դնելը օտար ուժերի համար խիստ դյուրին էին դարձնում այդօրվա հայկական անկախ պետականության ոչնչացումը:

Հասկանալի է, որ քեմալա-բոլշևիկյան ծրագրի Հայաստանին վերաբերող հատվածի հանգուցային կետի `<<*Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը*>> իրականացման համար որպես գործունեության առավել կարևոր ու արդյունավետ ասպարեզ առաջին հերթին ընտրվելու էր հայկական բանակը: Նախ այդօրվա Հայաստանում բոլշևիկյան լայնամասշտաբ գործունեություն ծավալելու համար քաղաքացիական հատվածում անհրաժեշտ սոցիալ-քաղաքական ու հասարակական բազան իրոք բացակայում էր: Այդ իրողությունը՝ հենց դասական մարքսիստական դիրքերից նույնիսկ ժամանակին մատնանշել է Ստալինը[154]: Մյուս կողմից, բանակը, որպես առաջնային թիրախ ընտրելը պայմանավորված էր հետևյալ երկու հանգամանքով. առաջինը դա այն ակնհայտ իրողությունն էր, որ պետությունը օտար ներխուժման առաջ պաշտպանվելու անընդունակ դարձնելու համար անհրաժեշտ էր նախ քայքայել և կազմալուծել նրա բանակը, իսկ երկրորդ հանգամանքն այն էր, որ հայկական բանակի նախկին ռուսաստանյան սպայակազմի գերակշռող մասը, ինչպես տեսանք, իրեն առաջվա նման համարում էր դեռևս Ռուսաստանի, այլ ոչ թե Հայաստանի զորական: Իսկ Ռուսաստանը ներկայացնողներն այդ օրերին բոլշևիկներն էին, որոնց շարքերում հայերի կողքին <<վճռական>> դեպքերից առաջ հայտնվել էին արդեն նաև բազմաթիվ ռուսներ ու հրեաներ: Հակապետական գործունեություն ծավալելու համար ամենևին երկրորդական չէր նաև այն հանգամանքը, որ հայկական բանակի կրտսեր զինվորականների շարքերում հանդիպում էին նաև Բաքվի կոմունայի, Ռուսաստանի տարբեր վայրերում նախկինում Կարմիր բանակի շարքերում ծառայած հայ զինվորներ, կրտսեր պետական ծառայողներ[155]: Այնպես որ, հայ բոլշևիկները պատրաստվում էին անցնել արդեն գործնական քայլերի, առավել ևս, որ, ինչպես ասում են, <<դաշտն այնքան էլ քարքարոտ չէր>>, քանզի <<…*մեզանից ոչ ոք ոչ մի գաղափար չունէր բոլշևիզմի մասին և ոչ մի հասկացողութիւն չուներ, թէ ի՞նչ դժոխային ցանցերով էր պատած մեր <միացեալ և անկախ Հայաստանը>…>>*[156]:

### *7. 1920-ի մայիսյան դեպքերը Հայաստանում և Կարսի նահանգը*

---

[154] Տե՛ս **Эльчибекян А.**,նշվ. աշխ, էջ 25:
[155] Տե՛ս **Վ.Հարությունյան,** Հայ բոլշևիկների… էջ 19,20, 35-42:
[156] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 528:

Անդրկովկասում առաջինը, ինչպես հայտնի է, քեմալականների անմիջական աջակցությամբ ու մասնակցությամբ խորհրդայնացվեց Ադրբեջանը: 1920 թ. ապրիլի 28-ին բոլշևիկյան զորքերը մտան Բաքու և բառացիորեն ժամեր անց՝ Օրջոնիկիձեի անմիջական նախաձեռնությամբ ու մասնակցությամբ՝ դիվանագիտական, գաղափարական և տեղեկատվական ճակատներով Հայաստանի Հանրապետության դեմ սկսվեց լայնածավալ հարձակում[157]: Տեղ-տեղ նկատվում էին նաև ռազմական սադրանքներ: Ընկեր Սերգոն՝ նույն ինքը Գրիգորի Օրջոնիկիձեն, մտադրված էր հընթացս՝ <<ձեռքի հետ>> միանգամից իրականացնել նաև Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը և հնարավորինս արագ ավարտել բոլշևիկյան Ռուսաստանի <<կովկասյան կամպանիան>>: Չանտեսենք, որ նույնիսկ ամենաբոցաշունչ բոլշևիկն էլ՝ իսկ ընկեր Սերգոն հենց ամենաբոցաշունչներից էր, զուրկ չէ մարդկային թուլություններից: Ադրբեջանի համեմատաբար սահուն խորհրդայնացումը շատ էր ոգևորել կովկասյան բոլշևիկների առաջնորդին և նա շտապում էր գործն հնարավորինս արագ հասցնել ավարտին և դառնալ Կովկասի նոր՝ կարմիր փոխարքա: Նա արդեն հեռագրում էր Մոսկվա, պահանջելով իրեն օժտել տեղում կովկասյան կառավարություն՝ СОВНАРКОМ-ԺՈՂԿՈՄԽՈՐՀ կազմելու և այն գլխավորելու լիազորություններով[158]: Բայց Մոսկվայում այլ կերպ էին մտածում: Եթե Ադրբեջանի պարագայում անձամբ Լենինն էր շտապեցնում Օրջոնիկիձեին և 1920 թ. մարտի 17-ին հեռագրում էր նրան, թե << «Взять Баку нам крайне, крайне необходимо... (թարգմանությունը. *Մեզ համար ծայրահեղ, ծայրահեղ անհրաժեշտ է վերցնել Բաքուն…*) >>[159], ապա դրանից հետո անմիջապես անցնել բոլշևիկյան զինուժի միջոցով Հայաստանն ու Վրաստանը <<կարմրացնելու>> գործողությունները Կրեմլում մի շարք հիմնավորումներով համարում էին դեռևս ժամանակավրեպ: Եվ ոչ միայն չէին կիսում այդ ուղղությամբ Օրջոնիկիձեի մտադրությունները, այլ նույնիսկ բավականին մտահոգված էին <<կովկասյան ընկերների>> նման խանդավառությամբ ու բավականին կտրուկ քայլեր էին ձեռնարկում նրանց տեղային այդ ինքնագործունեությունը զսպելու և կանխելու ուղղությամբ[160]:

Եթե Վրաստանը խորհրդայնացնելու մտքից Օրջոնիկիձեն 1920-ի մայիսին ժամանակավորապես <<ձեռք քաշեց>>, ապա Հայաստանի խորհրդայնացման հարցում նա չէր ցանկանում սպասել: Դա էլ ասենք, որ Հայաստանի պարագայում առաջ էր եկել մի լրացուցիչ հանգամանք, որի պատճառով ընկ.Սերգոն Հայաստանի խորհրդայնացումը չէր ցանկանում հետաձգել: Հարցը նրանումն էր, որ Հայաստանի

---

[157] Տե՛ս **А.В.Квашонкин**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, № 4, С. 436,438; **А.В.Квашонкин**, Советизация Закавказья…, էջ 169; **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ 103-106,151-155, 181,182,200,249-252:

[158] Տե՛ս **А.В.Квашонкин**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, № 4, С.436,437.

[159] Նույն աշխ., էջ 435

[160] Տե՛ս **А.В.Квашонкин** Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, № 4, С. 437- 440, 443,444,446.

Հանրապետության կառավարությունը, ձեռքին ունենալով Սան-Ռեմոյի կոնֆերանսի՝ այն է, հաղթող տերությունների որոշումները, ինքն էլ որոշեց, որ արդեն իսկական ժամանակն է բոլոր առումներով կարգավորել հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ և 1920 թ. ապրիլի վերջերին-մայիսի սկզբներին Մոսկվա՝ բոլշևիկների հետ բանակցելու գործուղեց Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությանը: Թե ինչ <<արդյունք>> արձանագրեցին այդ հայ-բոլշևիկյան վայ-բանակցությունները հայտնի է բոլորին, սակայն արդեն զուտ պատվիրակության Մոսկվա մեկնելու հարցը խիստ մտահոգել էր կովկասյան ընկերներին. բա որ հանկարծ Մոսկվայում դաշնակների հետ ինչ-որ համաձայնության գան, այդ դեպքում <<ստեղի>> գործերը ոնց են դասավորվելու: Օրջոնիկիձեն խիստ ջղաձգված ու սպառնալից տոնով հեռագրում էր. << ...имейте ввиду, что если Вы с Арменией заключите мир, это будет нечто ужасным для мусульман... (թարգմանությունը. …*նկատի ունեցեք, որ եթե Դուք Հայաստանի հետ խաղաղություն կնքեք, մահմեդականների համար դա կլինի ինչ-որ սարսափելի մի բան*) >>[161]: Իսկ մեկ այլ հեռագրում էլ առաջարկվում էր հայկական պատվիրակությանը՝ Մոսկվա ժամանելուն պես պարզապես…ձերբակալել[162]:

Միանգամայն հասկանալի է, որ ՀՀ պատվիրակության մոսկովյան այդ ուղևորությունը խիստ մտահոգիչ էր, նախևառաջ և հատկապես, հայ բոլշևիկների համար: Առավելևս, որ հայկական պատվիրակությանն ընդունել-չընդունելու, բանակցել –չբանակցելու, էլ չենք ասում բանակցային օրակարգի վերաբերյալ՝ մոսկովյան տերերը հայ բոլշևիկներին չէին տեղեկացրել և, առհասարակ, որևիցե կերպ այդ հարցում վերջինների գոյությունը հաշվի չէր առնվել: Եվ հայ բոլշևիկներին այլ բան չէր մնում, քան Շանթի պատվիրակության մեկնելու օրվանից սկսած և մինչև նրա ամբողջովին ձախողված վերադառնալը, մի հիստերիա ու վայնասուն բարձրացնել՝ թե առանձին, թե թուրքերի ու ադրբեջանցիների հետ նույն <<դաստի>> մեջ, զոռալով, թե ***դրանց*** հետ ոչ մի բանակցություն, պետք է մերժել հայկական կողմից եկած շփվելու բոլոր առաջարկները և, իհարկե, հարցը լուծել ավանդական բոլշևիկյան կարգով՝ <<…*մինչև դաշնակցական գարշանքի վերջնական ոչնչացումը…*>>[163]: Այնպես որ, զուգադիպություն էր դա, թե նախախնամություն, բայց 1920 թ. մայիսի առաջին օրերին առկա էին երկու գործոն, որոնք հայ բոլշևիկներին արդեն պետք է մղեին <<վճռական գործողությունների>>. մեկը դա Ադրբեջանի համեմատաբար հեշտ ստացված խորհրդայնացման ոգևորող օրինակն էր, մյուսը՝ Հայաստանի կառավարության և Մոսկվայի միջև հանկարծ ինչ-ինչ պայմանավորվածություններ ձեռք բերելու դեպքում իրենց՝ լուսանցքում հայտնվելու վտանգը: Տրամաբանական է, և դեպքերի ընթացքն էլ ցույց տվեց, որ գործոն դառնալու

---

[161] Տե՛ս **նույն տեղում** C. 437.

[162] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 361, թթ. 13,14; **Վ.Հարությունյան,** Հայ բոլշևիկների…, էջ 251-252; **А.В.Квашонкин**, Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, № 4, С. 441.

[163] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 68, թթ. 13,14; **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…, էջ 259-261:

և լուսանցքում չհայտնվելու փոխարեն պահանջարկված լինելու համար հայ բոլշևիկներին՝ նրանց առնվազն առավել անհամբեր ու ծայրահեղական հատվածին, անհրաժեշտ էր երկում սադրել իրենց մասնակցությամբ հակամարտ մի իրավիճակ: Այնպես որ, տրամաբանորեն հենց սրանք պետք է համարել 1920 թ. մայիսին հայ բոլշևիկների կողմից կազմակերպած հակապետական խռովության իրագործման դրդապատճառները: Հաշվարկը շատ պարզ էր՝ հաջողության դեպքում իշխանությունն անցնում էր իրենց ձեռքը, Մոսկվան այդ ամենին տեր էր կանգնում, և արդեն Շանթի պատվիրակությունը ինքն էր հայտնվում լուսանցքում, իսկ ամենահավանականը՝ բանտում: Անհաջողության դեպքում հայստանյան կառավարության կողմից անխուսափելի էին դառնում պատժիչ միջոցների կիրառումը, ինչը կարելի էր շատ նպաստավոր ձևով շահարկել և օգտագործել հայ-ռուսական բանակցություններում որպես կարևոր հակահայաստանյան խաղաքարտ: Ինչպես հայտնի է, աշխատեց երկրորդ՝ անհաջող ելույթի տարբերակը և դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ հայ բոլշևիկների դեմ կիրառված <<անասելի բռնությունների>> առասպելն իրոք օգտագործվեց ավելի քան նպատակային ու արդյունավետ[164]:

1920 թ. մայիսին հայ բոլշևիկները ընդգծված հակապետական, հայկական ինքնիշխան պետականության ոչնչացմանն ուղղված խռովության փորձ ձեռնարկեցին: Խռովությունը, կամ ինչպես խորհրդահայ պատմագրությունում է ընդունված՝ ապստամբությունը ղեկավարելու համար Ղազախ-Դիլիջանից մինչև Սուրմալու և Նոր-Բայազետից մինչև Զանգեզուր ստեղծվել էին ռազմական հեղափոխական կոմիտեներ՝ ռազմհեղկոմներ[165]:

Այդօրվա հայկական պետությունը թուլացնելու և տապալելու հարցում, ինչպես քանիցս շեշտվել է, առանցքային թիրախը Ալեքսանդրապոլ- Կարս ստրատեգիական ուղղությունն էր: Ուստիև, չխորանալով ՀՀ մյուս հատվածներում մայիսյան հակապետական ելույթներին, անդրադառնանք միայն նրան, թե ինչպես զարգացան մայիսյան դեպքերը հատկապես Ալեքսանդրապոլ- Կարս ուղղությամբ: Խռովարարների կենտրոնական մարմինը՝ Հայաստանի բոլշևիկյան հեղափոխական կոմիտեն՝ Հայհեղկոմը տեղակայվել էր Ալեքսանդրապոլում: <<Տեղական>>

---

[164] Առաջ անցնելով նշենք, որ բոլշևիկյան քարոզչությունը՝ առաջին հերթին հենց հայ բոլշևիկների ձեռամբ, 1920 թ. հետմայիսյան շրջանում բառացիորեն հակահայաստանյան հիստերիա էր բարձրացրել՝ Հայաստանում իբր հարյուրավոր և նույնիսկ երկու հազար գնդակահարված բոլշևիկների մասին: Մինչդեռ հենց բոլշևիկյան աղբյուրների բերած տվյալները հետևյալն են. 1920-1921թթ. կառավարության հրահանգով գնդակահարված, ապստամբական մարտերում և Հայաստանում քաղաքացիական կռիվներում զոհված մայիսյան խռովության մասնակիցների ընդհանուր թիվը կազմում է 46 մարդ; տես **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ 217-220,254: Հարկ է նաև նշել, որ խռովության առաջնորդներ Ս.Մուսայելյան, Բ.Ղարիբջանյան և այլոք գնդակահարվեցին միայն այն բանից հետո, երբ Բաքվում բոլշևիկները առանց որևիցե հիմքերի գնդակահարեցին հայ բոլշևիկների ձեռքով Հայաստանում առևանգված և Բաքու բոլշևիկներին հանձնած թվով վեց հայ կառավարական ու զինվորական պաշտոնյաների:

[165] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…., էջ 109-122:

հեղկոմներ ստեղծվել էին նաև Կարսում և Սարիղամիշում[166]: Ալեքսաբդրապոլ-Կարս-Սարիղամիշ գծով, հայկական բանակի տարբեր զորամասեր՝ իրենց սպայակազմի ու շարքային համակազմի որոշ մասերով ակնհայտորեն թեքվել էին խռովարարների կողմը: Մասնավորապես, Կարսի ռազմհեղկոմի հինգ անդամներից երկուսը՝ շտաբս –կապիտան Մելիքյանը և հրետանավոր զինվոր Բայթունին, տեղի կայազորից էին: Ըստ բոլշևիկյան զեկույցների, Կարսի կայազորի 800 սվիններից 400-ից ավելին պատրաստակամություն էին հայտնել հանդես գալ բոլշևիկների կողմից՝ ընդդեմ երկրի կառավարության [167]: Իսկ եթե խոսենք ավելի որոշակի, ապա. <<*Շատ բնորոշ է, որ Կարսի նահանգում այդ շարժումը առաջ [եկավ] միայն և միայն զօրամասերում և այն էլ այն գնդերում, ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր և օտար հայ զինվորին*>>[168]:

Իրոք, Կարսի նահանգում հայ բնակչությունը որևիցե աջակցություն խռովարարներին չցուցաբերեց: Ավելին, երիտասարդությունը՝աշուղ Ջիվանու որդի Պարույր Լևոնյանի գլխավորությամբ, քաղաքում ստեղծեցին <<Փրկության կոմիտե>>, որն իր շուրջն սկսեց հավաքել քաղաքացիական բնակչությանը: Հակառակ հայերին, հակապետական խռովությանը միանգամից աջակից ու կողմնակից դարձան և բոլշևիկների հետ իրենց համերաշխությունն հայտնեցին տեղի մահմեդական, հունական և ռուսական ազգային խորհուրդները. <<*Այս խռովարարները յարաբերութեան մէջ էին մտել բացի ռուսներից, թուրքերի, քրդերի և յոյների հետ, հայկական իշխանութեան տապալման ծրագիր մշակել*>>[169]: Սակայն զանգվածային աջակցություն խռովարարներին այդ ազգությունների զանգվածների կողմից նույնպես չցուցաբերվեց:

Սարիղամիշում նույնպես խռովությունը հիմնված էր զինվորականության վրա: Ընդորում այստեղ էլ հակապետական ելույթի հեղինակներն էին ռուսախոս սպաները. <<*Շատ բնորոշ է, որ և Սարիղամիշում ըմբոստացան այն զօրամասերը, ուր հրամանատարութիւնը ռուսախօս էր…*>> [170]: Այստեղի ռազմհեղկոմի կազմում էր կրտսեր սպա Լիպարիտ Մխչյանը[171], ում հեղկոմը նշանակվեց Սարիղամիշի կայազորի կարմիր զորքերի հրամանատար, բացահայտ հակապետական գործողություններ էր կազմակերպում կապիտան Չմշկյանը: Դեպքերի մասնակից՝բոլշևիկ մի զինվորականի վկայությամբ, ոչ բացահայտ, սակայն իրականում հակապետական տարրերի կողմն էր անցել նաև Սարիղամիշում

---

[166] Տե՛ս **նույն տեղում,** էջ 114,115,118,119:
[167] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ.154, թ.1-4; **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ 147-150:
[168] Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը…, էջ 538:
[169] **Նույն տեղում**, էջ 539; տե՛ս **նաև Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ132-144, 147-150:
[170] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 539:
[171] Լիպարիտ Մխչյանը ծնունդով Կարսից էր, ծառայել էր ռուսական բանակում, բոլշևիկյան կուսակցության անդամ էր 1917-ից:

տեղակայված 4-րդ գնդի հրամանատար գնդապետ Միրիմանյանը[172]: Խռովությունը Սարիղամիշում եղավ ամենաերկարատևը՝ մինչև մայիսի 18-ը: Խռովարարները նույնիսկ հասցրել էին բեռնատար վագոնից զրահագնացք կառուցել: Ի դեպ, Սարիղամիշին վերաբերող ուշագրավ մի փաստ. այստեղի հեղկոմի հինգ անդամներից երկուսը ունեին սլավոնական ազգանուններ. Կուխմալակին Պավել, Մատիչկո Պյոտր: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք ոչ հայկական բանակի զինվորականներ են, և ոչ էլ նահանգի մոլոկաններից, կամ էլ տեղի այլ ռուսական աղանդների կազմից: Ամենայն հավանականությամբ, նրանք եղել են պարզապես եկած, ավելի ճիշտ՝ ուղարկված ընկերներից:

Իսկ ինչպիսի դիրքորոշում ու կեցվածք դրսևորեցին այդ օրերին նահանգային իշխանությունները՝ ի դեմս իրենց բարձրագույն ղեկավարության: Քաղաքացիական նահանգապետի դիրքորոշումը միարժեքորեն երկրի օրինական կառավարության կողմն էր: Նա կանգնած էր անկախ ազգային պետության պահպանման դիրքում: Իր վաղեմի ծանոթ, այդօրվա Հայհեղկոմի անդամ բժիշկ Արտաշես Մելքոնյանը նրան մի մեծ նամակ էր ուղարկել, որում առաջարկում էր անցնել խռովարարների կողմը և հետագայի համար խոստումներ ու երաշխիկներ էր տալիս իր հնարավորությունների այդօրվա շրջանակներում: Եղել էր նաև շատ կոնկրետ առաջարկ. *<<Խնդրում եմ Ձեզ մնալ Ձեր պաշտօնում և միևնոյն ժամանակ ստանձնել խորհրդային իշխանութեան ներքին գործերի կոմիսարի պաշտօնը: Բժիշկ Արտաշէս Մելքոնեան>>.*[173] Սակայն քաղաքացիական նահանգապետի կողմից առաջարկը կտրականապես մերժվել էր. *<<…Ես մնում եմ իմ տեղում և հայրենի իդեալների հետ. Նահանգապետ Ղորղանեան>>*[174]:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլ-Կարս զորախմբի բարձրագույն հրամանատարական կազմին, ապա Ալեքսանդրապոլում գեներալ Խաչատուրովը բացահայտորեն անցել էր բոլշևիկների կողմը, ինչի համար էլ սպանվեց տեղի դաշնակցականների ձեռքով: Իսկ Կարսում, ինչպես վկայում են փաստերը, գեներալներ Փիրումյանն ու Հովսեփյանը խռովության օրերին մի տեսակ անհայտացել էին ու լքել ասպարեզը. *<<Զօրաց շարքերում մայիսին տեղի ունեցած առաջի խռովութիւններին իսկ Կարսի երկու գեներալները այլևս հրամանատար չէին, գէթ այդպէս էին իրանց ձևացնում հենց իրանք, գեներալները, առարկելով, որ զօրքը չի լսում և չէ հնազանդվում իրանց... զօրքերի հրամանատար գեներալ Փիրումով*

---

[172] Տե՛ս, Հայկական ճարտարապետության ուսումնասիրության հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, հուշագրական ժառանգություն, հ.14, Երևան, 2011, էջ 57,58: Այստեղ անհրաժեշտ է հստակեցնել, որ խոսքը գնդապետ *Ալեքսանդր Միրիմանյանի* մասին է, որը Սարղամիշում տեղակայված 4-րդ գնդի հրամանատարությունը ստանձնել էր *Կարապետ Հասան-Փաշայանից* հետո:

[173] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 547:

[174] **Նույն տեղում**, էջ 549:

*յայտարարեց, որ զօրքը ամբողջովին անցել է խռովարարների կողմը և հրամանատարութիւնը միանգամայն անզօր է ճնշելու ապստամբութիւնը… Գեն. Յովսէփեան այդ օրերում միանգամայն չեզօքացրել էր իրան զօրքից, առարկելով, որ զինվորները չեն լսում իրան... Որպես գործնական և հեռատես մարդ՝ նա այդ օրերում շրջում էր արդեն առանց սրի…>>*[175]:

Ի դեպ, Կարսի կայազորում խռովության նախաձեռնողն ու հակապետական կեցվածքով առավել ակտիվ զորամասերից մեկը եղել է անմիջականորեն գեներալ Հովսեփյանի ենթակայության տակ գտնվող պահակա-պարեկային վաշտը. << *Ամենից առաջ ըմբոստացաւ և ապստամբվեց գեներալ Յովսէփեանի թիկնապահ վաշտը: Նա միացաւ այդ խռովութեան ռուս և հրեայ ղեկաւարներին>>*[176]: Այդ վաշտում հակապետական ելույթի ղեկավարներից էր գեներալ Հովսեփյանի ռուսազգի համհարզը. << *Երբ Աղէքսանդրապօլի զինվորական խլրտումները անդրադարձան Կարսի նահանգը, այդ հակազգային և հակապետական շարժման գլուխը կանգնեց գեներալ Յովսեփեանի թիկնապահ վաշտը: Կարգը վերականգնելուց յետոյ, պարզվեց, որ այդ խռովութիւններին մասնակից էր գեն. Յովսեփեանի ամենամօտ ադիւտանտներից մէկը, ռուս գլխապետ Կուտիրով>>*[177]:

Այդ օրերին հայհեղկոմը երկու գեներալներին և զորախմբի մի շարք բարձրաստիճան սպաներին առաջարկություն էր ուղարկել անցնել բոլշևիկների կողմը, զորախումբը հայտարարել բոլշևիկյան Կարմիր բանակի մի զորամիավորում և շարունակել ղեկավարել այն[178]: Գեներալ Փիրումյանը պատասխանել էր հեղկոմին, որ << *…հանուն ռազմաճակատի կայունության պահպանման, զորախմբի հրամկազմը ենթարկվում է հեղափոխական կոմիտեին… Իսկ միուս օրը քաղաքում ասում էին, որ նոյն բեվկոմը Կարսի երկու գեներալներին շնորհել է կարմի գեներալների տիտղոսը...>>*[179]:

Սակայն խռովարարները չկարողացան որևիցե շոշափելի հաջողություն գրանցել և դեպքերի ընթացքը եղավ այնպիսին, որ հետագա մի քանի օրերի ընթացքում ՀՀ կառավարությունը խռովությունը ճնշեց: Կոնկրետ Կարսում <<*գնդապետ Յարութիւնեան, Կարսի բոլոր զօրամասերի գլուխ անցնելով, ստիպում է դաւաճաններին անձնատուր լինել>>*[180]:

Գեներալներն ու սպայակազմի մի մասը կրկին ասպարեզում հայտնվեցին և հանդես եկան կառավարությանը հավատարիմ լինելու դիրքերից միայն խռովությունը

---

[175] **Նույն տեղում**,էջ 440, 539, 559:

[176] **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ149-150; Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 538:

[177] **Նույն տեղում**, էջ 558-559:

[178] Տե՛ս ՀԱԱ, ֆ.1022, ց.2, գ. 150, թ. 1; **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ 145:

[179] **Նույն տեղում** էջ148; Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…,էջ 538; **Ռ.Գ. Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, հ. 3, Երևան 2015, էջ 288:

[180] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 551:

ճնշելուց հետո[181]: Իսկ Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. դեկտեմբերի վերջերին 1920 թ. մայիսին Կարսի հեղկոմի անդամ Վռամ Ղազանչյանի[182] և նախկին նահանգապետ Ստեփան Ղորղանյանի զրույցից պարզվում է հետևյալը. *<<Նոցանից մէկը, մի երիտասարդ՝ Ղազանջեան ազգանունով, պատմեց մեզ երեքիս, որ մայիսեան Կարսի խռովութիւնների կազմակերպողներից մէկը ինքն էր, որ գեն. Փիրումով և գեն. Յովսէփեան անցել էին նոցա՝ խռովարարների կողմը, իսկ Ձեզ,– դարձաւ ինձ Ղազանջեան,– վճռված էր ձերբակալել, բայց մենք պարտվեցինք և դուք ազատվեցիք...>>*[183]:

Այստեղ, թերևս, այդօրվա իրավիճակն ինքն է ստիպում և նույնիսկ պահանջում ու թելադրում շարադրանքի ընդհանուր ընթացքից կատարել անհրաժեշտ մի շեղում: Խոսքը այն մասին է, որ մեզանում առկա է և բավականին տարածում ունի մի արմատավորված կարծիք առ այն, որ <<եթե դաշնակները չկառչեին իշխանությունից և իշխանությունը 1920 թ. մայիսին հանձնեին հայ բոլշևիկներին, ապա Հայաստանը կխորհրդայնացվեր այդ օրվա սահմաններում և հայ ժողովուրդը մի քանի ամիս անց այդքան մարդկային և տարածքային կորուստներ չէր ունենա: Դա պետք է արվեր անպատճառ, ելնելով մեր պետական և ազգային շահերից, քանի որ միևնույնն է, խորհրդայնացումն անխուսափելի էր և ընդամենը ժամանակի հարց էր>>: Այսինքն, այդ դեպքում, Հրանտ Մաթևոսյանի ասածի նման, *<<Դարսը մերն էր>>*[184]*:*

Ճիշտ է, պատմության այս կամ այն դեպքերը քննարկելիս, միանգամայն անիմաստ է խոսել <<եթե>>-ներով: Բայց տվյալ դեպքում խոսքը գնում է շատ ծանր ու լուրջ մեղադրանքի մասին և հարցը որոշակի արձագանք է պահանջում և, եթե հնարավոր է, նաև որոշ պարզաբանում:

Ինչպես, ինչ մեխանիզմով, ինչ երաշխիքներով և ինչ պայմաններով, հնարավոր էր, կամ, եթե ղեկավարվենք այդ տրամաբանությամբ, ավելի ճիշտ՝ անհրաժեշտ էր իշխանությունն այդ օրերին հանձնել հայ բոլշևիկներին: Երբ 1920 թ. դեկտեմբերի մեկին Սիմոն Վրացյանի կառավարությունը իշխանությունը հանձնում էր հայհեղկոմին, նա այդ իշխանությունը հանձնում էր ոչ թե պարզապես վեցը հայ բոլշևիկների, այլ այն վեց հայ բոլշևիկներին, որոնք այդ պահին բացահայտ հենվում էին բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքական ու ռազմական հզորության վրա: Եվ այդ վեց հոգին ոչ թե իրենք իրենց վեր կացել եկել ու պահանջում էին իրենց հանձնել իշխանությունը, այլ նրանց ընտրել և ուղարկել էր հենց բոլշևիկյան Ռուսաստանը ու վերջնագիրն էլ դրել հայաստանյան իշխանությունների առաջ, որ հենց սրանց՝ այս վեց անձերին պետք է փոխանցեք երկրի իշխանությունը: Իսկ 1920-ի մայիսին, նույնիսկ ամենամեծ պատրաստակամության պարագայում, ում պետք է փոխանցեր իշխանությունը Հայաստանի կառավարությունը: Մատների վրա հաշված մի քանի

---

[181] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ 221:
[182] Տե՛ս **նույն տեղում ,** էջ 109,110,115:
[183] , Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…,էջ 440:
[184] Հրանտ Մաթևոսյամ, Տերը, Երևան, Սովետական գրող, 1983, էջ 436:

հայ բոլշևիկների: Բայց որպես ինչ և ինչի համար: Ովքեր էին այդ անձինք և ինչ իրական ուժ ունեին իրենց թիկունքում նրանք այդ օրերին: Հայաստանի շրջանակներում իրենց ունեցած ուժը, ինչպես ցույց տվեցի հետագա օրերի դեպքերի ընթացքը, խիստ թույլ էր և խիստ փոքրաթիվ: Ճիշտ է, նրանք ասում էին, թե իրենց սատարում է և ուղղակի օժանդակում է Խորհրդային Ռուսաստանը իր ողջ ռազմաքաղաքական ներուժով ու կարողություններով: Բայց ուր էր այդ ներուժը մայիսյան այդ օրերին, չէ որ այդ ուժի որևիցե առարկայական ներկայություն և ցուցադրում այդ օրերին այդպես էլ չարձանագրվեց: Բացառությամբ, թերևս, Կարմիր բանակի հեծյալ գնդի մուտքը Իջևան և այնտեղից դեպի Դիլիջան իրականացրած զորաշարժը, որը բոլշևիկյան բարձր հրամանատարության կողմից շատ արագ կանխվեց, իսկ գունդն էլ շատ շտապ դուրս բերվեց Հայաստանի Հանրապետության սահմաններից[185]: Այսօրվա դրությամբ թե հայաստանյան, թե ռուսաստանյան, թե այլ արխիվներում դեռևս չի հայտնաբերվել գեթ մեկ փաստաթուղթ, որը եթե ուղղակի չհաստատեր, ապա գոնե ակնարկեր, որ 1920 թ. մայիսին հայ բոլշևիկների կազմակերպած հակապետական խռովությունը անմիջականորեն հրահանգվել ու ղեկավարվել է մոսկովյան իշխանական վերնախավի կողմից: Հակառակը, ինչպես մի անգամ արդեն նշել ենք, այսօր կան բազմաթիվ վկայություններ, որ այդ օրերին բոլշևիկյան կուսակցության և պետության իշխանության անգամ բարձրագույն մարմնի՝ Քաղբյուրոյի մակարդակով քանիցս շեշտվել է, որ տվյալ պահին (*1920 թ. մայիս-հունիս –Վ.Հ.*) Հայաստանի խորհրդայնացման հարցը օրակարգում չկա և նույնիսկ քանիցս շեշտվել է, որ այդ հարցում անհրաժեշտ է կովկասյան ընկերներին հետ պահել ինքնագործունեությունից[186]: Այսինք 1920 –ի մայիսը Հայաստանում դա ոչ <<Բաքվի 1920-ի ապրլի 28-ն էր>>, ոչ էլ դեռևս <<Երևանի 1920-ի դեկտեմբերի 1-ը>> և ասպարեզում չկար այն իրական ուժը, որի անհերքելի գերակշռության ու առավելության առկայության պայմաններում դաշնակցությունը պետք է խոհեմություն ցուցաբերեր և հոժարակամ հրաժարվեր իշխանությունից վերջինիս օգտին: Ավելորդ չէ այստեղ մեջբերել այդ օրերին հնչեցրած կարծիքը, որը միանգամայն անընդունելի է համարում դաշնակցության կողմից Ալեքսանդրապոլում նույնիսկ մեկ-երկու օրով իշխանությունը զիջելը. <<*Մայիսի սկզբներում մի բուռն եկվորներ առաջ բերեցին Աղէքսանդրապօլում հակապետական բռնկում և դաշնակ-ցական <սիրելի ընկերներ> մի քանի ժամից յետոյ ձեռքից թողեցին իշխանութիւնը...>>*[187]:

Այլ հարց է, թե որոնք էին այն պատճառները, որոնք այդ օրերին զսպում էին Խորհրդային Ռուսաստանին, և նա 1920թ. մայիսին չցանկացավ Հայաստանի հարցը

---

[185] **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ 254:

[186] Տե՛ս Большевистское руководство. Переписка. 1912—1927. Сборник документов / Составители: **А.В.Квашонкин, О.В.Хлевнюк, Л.П.Кошелева, Л.А.Роговая.** — М.: 1996. — 423 с., Документы No 71, 79,80; **А.В.Квашонкин**, Советизация Закавказья…, сс. 167,170,172,177; **А.В.Квашонкин** Технология «красных революций» в Закавказье в начале XX в., Политика и Общество, 2016, № 4, сс. 437- 440, 443,444,446.

[187] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…,էջ 541:

լուծել Ադրբեջանի խորհրդայնացման սցենարով: Նախ, Կարմիր բանակի բարձրագույն հրամանատարությունը ռազմական բնույթի տեղեկատվություն էր ստանում ոչ միայն կուսակցական ընկերներից, այլ նաև պրոֆեսիոնալ հետախույզների միջոցով: Իսկ վերջիններս տեղեկացնում էին, որ հայկական բանակը բավականին մարտունակ է և երկրի խորհրդայնացումը տվյալ պահին իրենից դժվար թե ներկայացնի մի ուրախ, թեթև ու անվտանգ զորաշարժ-զբոսանք[188]: Առավելևս, որ այդ օրերին զգալի ուժեր ու միջոցներ էր պահանջում խորհրդա-լեհական պատերազմը: Մյուսը, որ շատ կարևոր է, դա այն հանգամանքն էր, որ բոլշևիկյան Ռուսաստանի ուղղակի ռազմական ներխուժումը Հայաստան կարժանանար արևմուտքի չափազանց բացասական արձագանքին ու գնահատականին: Հայաստանի խորհրդայնացման համար մշակվել էր հատուկ դոկտրին՝ <<մեթոդական ձեռնարկ>>, ըստ որի, Հայաստանի վրա առաջինը արևմուտքից պետք է հարձակվեին քեմալական զորքերը: Այդ դեպքում Արևմուտքի ԶԼՄ-ներում մեծ աղմուք կբարձրանար, որ թուրքերը հերթական անգամ իրականացնում են հայերի կոտորած: Բոլշևիկյան մամուլը նույնպես կդատապարտեր թուրքական ներխուժումը, ինչից հետո Խորհրդային Ռուսաստանի զինուժը Հայաստանի անպաշտպան դարձած արևելյան սահմանով մուտք կգործեր երկիր, կկասեցներ թուրքերի իրականացվող կոտորածը և հայերի ու ամբողջ աշխարհի աչքին կներկայանար փրկչի կերպարով[189]: Իսկ երրորդը, որը թերևս ամենակարևորն է, դա այն հանգամանքն է, որ եթե հանկարծ 1920-ի մայիսին Խորհրդային Ռուսաստանը գնար Հայաստանի խորհրդայնացմանը, մեղմ ասած խիստ անտրամաբանական է, որ երկրի կեսը խորհրդայնացվեր որպես հայկական խորհրդային պետություն, մյուս մասն էլ՝ Կարսի մարզը,- նվիրաբերվեր քեմալականներին, մի քանի կտոր էլ տրվեր Ադրբեջանին: Դա <<չաշխատող>> տարբերակ էր: Այնպես որ, մայիսյան հակապետական ելույթի հաջողության դեպքում Հայաստանի Հանրապետությունը կխորհրդայնացվեր այդօրվա նրա զբաղեցրած տարածքների իրական սահմաններում, այսինքն արևմտյան ուղղությամբ՝ նվազագույնը Կարսի մարզը ներառյալ: Բայց դա կլիներ արդեն քեմալական կողմին հասցված մահաբեր հարված, որի հետևանքները հենց նույն Ռուսաստանի համար լինելու էին անկանխատեսելի և ոչ դյուրին, առավելևս, որ քեմալականները այդ օրերին արդեն ինտենսիվ շփումների մեջ էին նաև հաղթող տերությունների հետ: Այնպես որ առճակատումը քեմալականների հետ, Հայաստանի խորհրդայնացման գնով չէր կարող տեղավորվել Կովկասում իր համար երաշխավորված դիրքեր հաստատելու ձգտող Ռուսաստանի պլանների մեջ: Որոնք ապահովելու համար քեմալական կողմի հետ վաղօրոք արդեն ձեռք էր բերվել ու բազմիցս հավաստիացվել ապագա Թուրքիայի սահմանը Արփաչայ-Արաքս գծով անցնելու պայմանավորվածությունը[190]: Այնպես որ այդ օրերին Խորհրդային Ռուսաստանը ոչ

---

[188]Տե՛ս **նույն տեղում** , էջ 564:

[189] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը …էջ146:

[190] Տե՛ս **Бабкен Арутюнян:** Московский и Карсский договоры 1921 года были позорнее Александропольского, ИА Regnum, *11.11.2011*,

թե օժանդակելու էր հայ բոլշևիկներին շուտափույտ խորհրդայնացնել Հայաստանը, այլ հակառակը, ինչպես քանիցս նշվել է, նա կոնկրետ քայլեր ձեռնարկեց, որպեսզի այդ օրերին բռնկված խռովությունը զարգացում չստանա և այդ պահին գործը հանկարծ չհասնի ամբողջ երկիրը խորհրդայնացնելուն: Ի դեպ Անկարան էլ էր բավականին անհանգստացած մայիսին Հայաստանում ծավալված դեպքերով: Քյազիմ Կարաբեքիրը, տեղեկանալով Հայաստանում բռնկված բոլշևիկյան խռովության մասին, խիստ մտահոգ նամակ է հղում Անկարա, որտեղ կարծիք է հայտնում, որ եթե հանկարծ Հայաստանում տեղի ունենա խորհրդայնացում, ապա իրենք ալևս հավերժ պետք է հրաժարվեն Կարս-Արդահանին տիրանալու մտքից[191]: Եվ շատ հավանական է, որ քեմալական կողմն իր հերթին ձեռնարկեր քայլեր, որպեսզի Ալեքսանդրապոլյան հեղկոմը հանկարծ իր ձեռքը չվերցնի երկրի իշխանությունը: Առավելևս, որ քեմալականները ուղղակի և անմիջական շփումների մեջ էին կովկասյան բոլշևիկների և այդտեղի Կարմիր բանակի հրամանատարության հետ[192]:

Այլ հարց է, որ կենտրոնական մոսկովյան իշխանություններին դեպքերի նման ընթացքը՝ չհաջողված և ճնշված հակապետական բոլշևիկյան ապստամբություն Հայաստանում, ըստ էության, շատ էլ ձեռք էր տալիս. մի կողմից Հայաստանի պետականության նավակը սկսեց բավականին ուժգին ճոճվել, մյուս կողմից՝ հրաշալի առիթ էր ստեղծվում՝ շահարկելով Հայաստանում բոլշևիկների նկատմամբ իրագործվող որոշ խստությունները, սկսել ուղղակիորեն միջամտել այդ երկրի ներքին գործերին:

Այնպես որ, եթե կան, կամ էլ ի հայտ կգան նորանոր փաստեր և հանգամանքներ, որոնցից ելնելով հնարավոր է դաշնակցական այդօրվա իշխանություններին մեղադրել հազար ու մի մեղքերի մեջ, բայց ոչ երբեք նրանում, որ 1920-ի մայիսին չզիջեցին իշխանությունը հակապետական արկածախնդրության դիմած մի քանի հայ բոլշևիկների: Քանզի, ասպարեզում իրոք բացակայում էր այն ռեալ ուժը, որին հնարավոր էր և պարագաների բերումով պետք էր զիջել պետության կառավարման ղեկը: Միանգամայն բնական է, որ ստեղծված իրավիճակում գործող կառավարությունը պետք է դիմեր այնպիսի քայլերի, որոնց միջոցով ճնշվեր օտար

---

http://old.memo.ru/hr/hotpoints/caucas1/msg/2011/11/m271212.htm; **Բ.Հարությունյան,** Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրման քննության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 2011, № 3 . pp. 51-61. Նշենք, որ բոլշևիկյան կուսակցությունը և նրան անդամակցող հայ բոլշևիկները միշտ էլ կողմնակից են եղել Կարսը թուրքերին զիջելուն: Դեռևս 1918թ. ապրիլի 18-ին ընթացիկ մոմենտի վերաբերյալ իր ընդունած բանաձևում այդ կուսակցության կովկասյան մարմինը Կովկասում դավաճան էր պիտակում նրանց բոլորին, ով չի ընդունում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը և պայքար է մղում Անդրկովկաս թուրքական ներխուժման դեմ, տե՛ս Из истории иностранной интервенции в Армении в 1918 году (Документы и материалы), сост. **Х.А.Бадалян**, Ереван, 1970, с.73:

[191] Տե՛ս **М.Озтюрк,** Советско-турецкие отношения на Кавказе в 191-1923 гг., Канд. Диссертация, СанктПетербург, 2010 с.69-70.

[192]Տե՛ս **նույն տեղում**, էջ 63:

ուժի գործակալն հանդիսացող հակապետական խմբավորման կազմակերպած և ազգային անկախ պետականության կործանմանը միտված խռովությունը:

Միանգամայն այլ հարց է, իհարկե, թե այդ օրերին արդյոք դա հայկական պետականության սպառնացող միակ վտանգն էր և որքանով կանխեցին կառավարության այդ քայլերը պետության փլուզումը և հնարավոր էր արդյոք այն օրերին և այն պայմաններում իրականում կանխել այդ փլուզումը:

Վերջում մեկ անգամ ևս անդրադառնալով 1920 թ. մայիսյան դեպքերին Կարսի նահանգում կարող ենք ասել, որ չնայած կրած պարտությանը, բոլշևիկները Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ իրականում արձանագրեցին կարևոր ստրատեգիական հաջողություն և ձեռքբերում. նրանք գործնականորեն պարզեցին, փորձարկեցին և արձանագրեցին, որ այդտեղի զորախումբը, ըստ էության, միշտ պատրաստ է և ընդունակ է շատ ակտիվ մասնակցություն ցուցաբերել քաղաքական պրոցեսներին: Անգամ, եթե այդ պրոցեսները ունեն բացահայտ հակապետական ուղղվածություն ու բնույթ. *<<20 թվի մայիսեան օրերում զինվորութեան այդ տրամադրութիւնը հրապարակ դուրս եկաւ և Կարսի երկու գեներալները ցոյց տվեցին այդ օրերում իրանց իսկական դէմքը: Այդ գեներալները մի ակնթարթում կորցրեցին իրանց նօմինալ հեղինակութիւնը, երերվեցին, աջ ու ձախ ընկան, բայց, իհարկէ, կորով չունեցան կանգուն լինելու այդ ուղղութիւններից և ոչ մէկում: Եւ այդ բնական էր: Գեներալներն ու սպաները բանակի մի կողմն էր, իսկ զինվորութիւնը, մասսան, բուն հայիութիւնը, այլ բանակ էր, տարբեր հոգեբանութեամբ, մտածելակերպով և ազգային կորովով:*
*Այդ մի շարք անհերքելի փաստերը բաւական էին, իհարկէ, համոզվելու, որ Կարսի նահանգի զօրաց հրամանատար կազմի մեծագոյն մասը անպէտք էր և անհամապատասխան մեր պետական միտումներին: Բայց և այնպէս և մայիսեան դէպքերից յետոյ այդ բոլոր գեներալները և սպաները մնացին իրանց տեղերում: Երկրի և հասարակութեան համար պարզ էր այդ հրամանատար կազմի կատարեալ անկարողութիւնը, պարզ էր և այն, որ սանձարձակ զօրքը այդպիսի հրամանատարների ձեռքում միայն չարիք էր երկրի համար… ուշագրաւ պէտք է համարել, որ այդ բոլոր գեներալները և սպաները նախամեծար դարձան ռուս զօրաբանակում, նոցա հայրենիքի կործանումից յետոյ>>*[193]:

[193] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…,էջ 342, 539:

### *8. Կարսի վերջնախաղը*

Մինչ Հայաստանում մայիս-հունիսին այստեղ ու այնտեղ բռնկվում ու ճնշվում էին բոլշևիկյան կրքերը, Մոսկվայում շարունակվում էին հայ-բոլշևիկյան <<իբր բանակցությունները>>: Զուգահեռ ընթանում էին նաև քեմալա-բոլշևիկյան բանակցությունները: Այդ զուգահեռ ընթացող բանակցությունների ընթացքն այնպիսին էր, որ բառացիորեն հաղորդակից անոթների օրենքով, օրեցօր աճում ու ավելի էին հաստատվում հայերի հաշվին քեմալական կողմի պահանջները բավարարելու բոլշևիկների պատրաստակամությունն ու վճռականությունը: Բնականաբար, համապատասխան համաչափությամբ նվազում էին հայկական պատվիրակության սպասելեքներն ու ակնկալիքները: Արդյունքում, բոլոր կետերով

մերժված հայկական պատվիրակությունը վերադարձավ Հայաստան՝ բոլշևիկների հետ բանակցությունները արդեն տեղում շարունակելու անհասկանալի ու անհայտ հեռանկարով: Իսկ քեմալական բանագնացներին ընդունել էր անձամբ Լենինը և նրանց այն ռեպլիկին, թե թուրքական կողմը մտահոգված է, որ խորհրդային Ռուսաստանը կարծես թե որոշ պայմանավորվածություն է ձեռք բերել հայերի հետ, Լենինը պատասխանել էր, որ այդ հարցում Ռուսաստանն իրոք որ սխալ է թույլ տվել և կաշխատի ուղղել այդ սխալը, իսկ եթե դա արդեն նրա ուժերից վեր լինի, ապա այդ դեպքում թող դա անի հենց քեմալական կողմը[194]: Այնպես որ թուրքական՝ քեմալական պատվիրակությունը վերադարձավ Լենինի հետ բարեկամության նախնական համաձայնագիր կնքած և ամենակարևորը՝ բոլշևիկների թույլ տված որոշ սխալներ շտկելու, այն է՝ Հայաստանի հետ տարածքային հարցեր ճշտելու հնարավորության համաձայնություն ստացած: Միաժամանակ Անկարա ողևորվեց Հայաստանի դեմ պատերազմելու <<ծախսերը հոգալու>> համար բոլշևիկների նվիրատված ոսկին ու զենք-զինամթերքը տեղափոխող թուրք-բոլշևիկյան հեծյալ ջոկատը[195]: Քեմալա-բոլշևիկյան գրկախառնությունը ավելի ու ավելի էր ջերմանում ու հզորանում, իր ճիրաններում ավելի ու ավելի սեղմելով Հայաստանը: Այնպես որ, արտաքին քաղաքական ասպարեզում՝ այդ օրերին ամենաառաջնային ու ամենաակտուալն համարվող <<մոսկովյան>> ուղղությամբ ձեռքբերումները, ինչպես բոլորիս հայտնի է, նույնիսկ զրոյական չէին կարող համարվել, այլ ընդգծված բացասական էին ու Հայաստանի համար խիստ վտանգավոր:

Հայ բոլշևիկների 1920 թ.մայիսյան խռովությունը, ինչպես նշվել է, հաջողություն չունեցավ և ճնշվեց: Բայց դրանով կասեցվեցին արդյոք այդ կողմից Հայաստանի պետականությանը սպառնացող արտաքին ու ներքին վտանգները: Ամենևին: Խռովությունը ճնշելուց հետո քեմալա-բոլշևիկյան վտանգը Հայաստանի հանդեպ ոչ թե չեզոքացվեց, կամ էլ թուլացավ, այլ հակառակը, ավելի սաստկացավ, ստանալով ավելի ու ավելի համակարգված ու ահագնացող բնույթ. <<…*Մայիսեան դաւադրութիւնից յետոյ էլ հայ բոլշեւիկները հանգիստ չնստեցին, նրանք ավելի եւս մոլեգնած շարունակեցին իրենց դավադրուտիւնը,- Կարսի շրջանի ռուսների եվ թուրքերի հետ ձեռք-ձեռքի…>>*[196]: Մոսկվա-Անկարա ալյանսը սպասարկող և նրանց դեմից վազող ու ամենից բարձր գոռացող հայ բոլշևիկների ասածը ամեն տեղ ու ամեն պահին նույնն էր. <<Կարթագենը՝ այն է , անկախ Հայաստանը, պետք է կործանվի>>[197]: Նախ, նրանցից բոլորը չէ, որ խռովությունը ճնշվելուց հետո հեռացան Հայաստանից: Օրինակ, Ալեքսանդրապոլի հեղկոմի <<եկվոր>>

---

[194] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը Հայաստանի…էջ145:

[195] Տե՛ս **նույն տեղում,** էջ145, 427; **М. Озтюрк**. Рассмотрение советской помощи Анкаре в 1920-1922 гг. на основе турецких исторических источников. Научные проблемы гуманитарных исследований. 2010. № 5. С. 69-76.

[196] **Ց.Ա.Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ <<Ալիք>>, ազգային, քաղաքական, հասարակական և գրական օրաթերթ, 2 մայիսի, 1961, թիվ 91:

[197] Տե՛ս **Վ.Հարությունյան**. Հայ բոլշևիկների…էջ103-106, 152-155:

անդամներից Ավիս Նուրիջանյանը, որը 1918-ին Բաքվում՝ Համազասպի ջոկատի կազմում որպես Բաքվի կոմունայի կամավոր զինվոր կռվել էր թուրքերի դեմ, այժմ, ճողոպրելով քաղաքից, մի քանի այլազգի ուղարկված բոլշևիկների հետ թաքնվում էր Աղբաբայի կարափափախ թյուրք ցեղի վրաններում և չճանաչված լինելու համար՝ աչքերին իջեցրած թյուրքի սև փափախը, շարունակում էր իր բացահայտ հակապետական գործունեությունը. *<<Մի ինչ որ Ավիս, որ յետոյ ռուս մինիստր դարձավ Երևանում, թագնվում էր Աղէքսանդրապոլ բուն հայկական գաւառում և ռուսների ու հրեաների հետ ռումբ պատրաստում հայկական իշխանութիւնը պայթեցնելու համար>>*[198]: Նրանցից ոմանք էլ, խուսափելով պատասխանատվությունից, ուղևորվեցին ուղիղ…Էրզրում և Կարս վերադառձան արդեն Քյազիմ Կարաբեքիրի զորաջոկատի շարքերում[199]
Միաժամանակ, հայ բոլշևիկները, չնայած խռովության անհաջողությանը, արդեն կայուն ու հիմնավորված տպավորություն ու կարծիք ունեին երկրի ներքին պրոբլեմների, բնակչության տրամադրությունների և ամենակարևորը՝ բանակում առկա մոտեցումների ու տրամադրությունների վերաբերյալ և առիթը բաց չէին թողնում <<արդյունավետ>> շահարկել և օգտագործել այդ ամենը. *<<…մենք չրգիտէինք նոյնպէս, որ մեր երկրի բոլոր անկիւններում, Երևանից սկսած, վխտում են ռուս վարձկանները և ջանալից հրդեհում երկրի անբաւական տրամադրութիւնը… Ընդհանուր շփոթի և ընդհանուր անիշխան մթնոլորտում նրանք անարգել ցանում էին բոլշեվիկ թոյնը և քաղցրալից քայքայելով սերունդների դարաւոր իդեաները, ռուս-տաճկական սվիներին դափնալից ընթացք հարթում…>>*[200]:

Իսկ պետության նեսում էլ՝ բոլշևիկների հետ զուգահեռ և հուրախություն նրանց, պետականության վեմը շարունակում էին ճոճել ու խարխլել՝ այսօրվա լեզվով ասած, անսանձելի դարձած կոռուպցիոն դրսևորումները: Կառավարությունը կարողացավ ճնշել բոլշևիկյան հակապետական խռովությունը, սակայն չճնշվեց, չվերածվեց ու չպատժվեց այն ամենը, ինչն հանդիսանում էր պետությունը ներսից քանդող գործոն. *<<Մենք ոչինչ չրգիտէինք, թէ ի՞նչ է կատարվում մեր շուրջը, մեր բոլոր հաստատութիւններում բնակակալել էին գողերի և դաւաճանների մի մեծ բազմութիւն: Առաջինների հետ մաքառելու մենք ոյժ չունէինք, երկրորդ տեսակի գործիչները դիմակաւորված էին և մենք նոցա չէինք տեսնում… Դրսում մենք գործ ունէինք տաճկաց բանակի հետ, որ նվաճելով մեր երկրի գրեթէ կէսը, բախում էր մեր մայրաքաղաքի դռները: Իսկ երկրի ներսում, որպէս մի գերբնական անտեսանելի հրէշ, կանգնում էր դաւաճան և այլասեռված հայը, որ յենվելով իր թիկունքում դարան*

---

[198] **Յ.Ա.Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ <<Ալիք>>, ազգային, քաղաքական, հասարակական և գրական օրաթերթ, 2 մայիսի, 1961, թիվ 91; Տե՛ս նաև Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…,էջ 569:
[199] Տե՛ս **Յ.Ա.Ք. Հաճեան**, նույն տեղում:
[200] **Յ.Ա.Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ <<Ալիք>>, ազգային, քաղաքական, հասարակական և գրական օրաթերթ, 3 մայիսի, 1961, թիվ 92; Տե՛ս նաև Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…,էջ 567, 581:

*մտած ռուս սվիների և թուրք խուժանի վերայ, սպառնում էր ոչ միայն մեր քաղաքական սահմաններին, այլ և մեր լինել կամ չլինելուն...>>*[201]*:*

Վայ էն ազգին, որն ինքն իրեն հասցնում է այնպիսի մի վիճակի, երբ պետականության վեմի ներքին ու արտաքին տարուբերման ուժերը սկսում են ներդաշնակվել միմյանց հետ: Բնության մեջ դա կոչվում է <<ռեզոնանս>>, ինչի ի հայտ գալը նշանակում է փլուզում և ավերում ամեն ինչի և ամենուրեք. <<*Եւ այդ թէ՛ զինվորական և թէ՛ քաղաքացիական անիշխանութեան մթնոլորտում իրաւակարգը պէտք է ընկներ>>*[202]*:*

Հայաստանի պարագայում այդ ավերիչ <<ռեզոնանսը>> կյանքի կոչվեց և գործարկվեց առաջին հերթին հենց ամենակարևոր՝ Կարսի ուղղությամբ:

Հասկանալի է, որ մոսկովյան բոլշևիկների տված տասնյակ հազարներով հրացաններն ու միլիոններով փամփուշտները, հարյուրավոր կիլոգրամներով ոսկին, հենց հայ բոլշևիկյան քայքայիչ գործունեությունը, թալանն ու անօրենությունները երկրի տնտեսական բնագավառում, բացահայտ դավաճանության հասնող հրամանատարական կազմի ապիկարությունն ու բանակի բարոյալքումը, ոչ արդյունավետ պետական կառավարումը ի վերջո պետք է <<կրակեին>>: Այնպես որ, <<*Վեց տարի շարունակ պատերազմելուց և կռվելուց յետոյ, մենք կանգնած էինք շրջապատված թշնամիներով և պառակտված ներսում ազգուրացներով>>*[203]*:*

Առաջին կրակոցը հնչեց արդեն 1920 թ. օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին. *<<Կեազում Կարաբեկիր փաշայի առաջաւոր ոյժերը առաջին անգամ երևացին մեր սահմանագլխում 20 թվի օգոստոսի 27>>*[204]*,* երբ մի քանի օրվա ընթացքում Քյազիմ Կարաբեքիրը հայերից հետ վերցրեց նրանց կողմից հունիսին գրաված Օլթիի գավառակը: Թուրքերի՝ սեպտեմբերի լույս 13-ի գիշերային վճռական գրոհի ընթացքում <<*ֆիզիկական ու ռազմական առումներով թմբիրի մեջ գտնվող հայերն ընկան խաչաձև կրակահերթերի հորձանուտի մեջ>>* և ունեցան 200 զինվորի կորուստ՝ սպանված և վիրավոր: Սակայն հայկական հրամանատարության շարքերում այդ կապակցությամբ ոնց որ էական մտահոգություն չկար. նրանք անհաջողությունը վերագրում էին հայերի անբարենպաստ դիրքերին և մի շարք այլ <<անբարենպաստ>> պայմաններին ու <<խանգարիչ>> գործոններին>> [205]:

Հայաստանի մասով քեմալա-բոլշևիկյան դաշինքի նախագծած ու մշակած ծրագիրը մտնում էր իր վերջնական՝ ամենավճռական փուլ: Պատկերավոր ասած, իրադարձությունները այդ <<հայկական պարտիայում>> սրընթաց զարգանում էին և դեպքերը տեղափոխվում էին արդեն դեպի Կարսի <<վերջնախաղ>>:

---

[201] **Նույն տեղում**, էջ 529, 544:
[202] **Նույն տեղում**, էջ 203, 252:
[203] **Նույն տեղում**, էջ 510:
[204] **Նույն տեղում**,էջ 382, 395, 413:
[205] **Ռ.Գ.Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 218- 220:

Իսկ ինչպիսի՞ն էր այդ վերջնախաղում պաշտպանվող կողմի՝ այն է, Կարսի հայկական զորախմբի վիճակը: Թե՛ քանակապես՝ ուժերի հարաբերակցության առումով, թե՛ որակապես՝ զորախմբի մարտունակության տեսակետից:

Անդրադառնանք նախ ամենաառաջնային՝ ուժերի քանակական հարաբերակցության ցուցանիշներին: Հենց սկզբից ասենք, որ տարբեր աղբյուրներում բերվում են միմյանցից էապես տարբերվող տվյալներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնք, դատելով թե աղբյուրներից, թե ներկայացվող թվերից, պետք է որ առավել մոտ լինեն իրականությանը:

1. Հայաստանի ռազմական գերատեսչության <<Ռազմիկ>> շաբաթաթերթը, չբերելով թվային տվյալներ, ընդհանուր հարաբերակցության մասին այդ օրերին գրել է, որ մենք ունեցել ենք <<…*կանոնաւոր հագնուած ու պարենաւորուած զօրք*, ***թվով մի քանի անգամ շատ թշնամուց***…>>[206]:

2. Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյան. *<<Կարսի նահանգում գտնված մեր զօրաբանակը, իր բոլոր անկազմակերպ և թերի կողմերով հանդերձ,* ***համենայն դէպս մի 4 անգամ մեծ էր թշնամու բանակից****....>>*[207], *<<…հակառակ մեր հրամանատարութեան ուղղրած տեղեկութիւններին,* ***քեամալիստների թիւը մի 4 անգամ մեր զորաբանակից փոքր էր****>>*[208], *<<Պետք է զարմանալ, արդեոք, այդ բոլորից յետոյ,* ***որ քեամալիստներից չորս անգամ աւելի ոյժեր ունենալով,*** *մենք վարկաբեկեցինք զինվորական բախտը Կարսի մեծահռչակ ամրութիւնների տակ>>*[209]*:*

3. Սիմոն Վրացյանը թվարկում է զորախմբի կազմում ընդգրկված զորամասերը. *<<…այստեղ գործում էին զորավար Հովսեփյանի բրիգադը- առաջին գունդ՝ գնդ. Մազմանյան, 4-րդ գունդ՝ գնդ. Միրիմանյան, 5-րդ գունդ՝ գնդ. Շագուբաղյան, Սեպուհի բրիգադը՝7-րդ գունդ՝ գնդ. Իշխանյան, 8-րդ գունդ՝ փոխգնդ. Բաղդասարյան, գնդ. Ղորղանյանի ձիավոր բրիգադը և մի քանի կամավորական խմբեր՝ Փիլոսի, Մուրադյանի, Սմբատի և այլն: Կարսի ճակատում գործում էին սավառնակներ և <<Ազատամարտ>> զրահագնացքը>>*[210]: Թեև զինվորականության թվաքանակը բերված չէ, սակայն նշվում է, որ Կարսում գերի ընկած հայ զինվորների թիվը հասնում էր ութ հազարի: Այս դեպքում՝ նույնիսկ ամենահամեստ մոտեցման պարագայում կարելի է ենթադրել, որ Կարսի ուղղությամբ հայերն ունեցել են առնվազն 10-12 հազարից ոչ պակաս զինվորականություն:

4. Մեր մյուս վարչապետը՝ Ալեքսանդր Խատիսյանը բերում է հետևյալ տվյալները. *<<Կարս-Ալեքսանդրապոլի ճակատում կանգնած են հետևյալ զորամասերը. խոսքը*

---

[206] **<<Ռազմիկ>>** շաբաթաթերթ, 8 նոյեմբերի, 1920 թ., թիվ 26:
[207] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 457:
[208] **Նույն տեղում**, էջ 163,167:
[209] **Նույն տեղում**, էջ 151:
[210] **Ս.Վրացյան,** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 508:

*վերաբերում է կանոնավոր զորքերին և հատկապես հետիոտն զորքերին: Այդտեղ են առաջին գունդը (Մազմանյան)՝ 1500 սվին, 4-րդ գունդը (Միրիմանյան)՝ 2000 սվին, 5-րդ գունդը (Շաղուբաթյան)՝ 700 սվին, 6-րդ գնդի մեկ գումարտակ (Հայ Գնդունի-Համբարձում Թոփչեան)՝ 800 սվին և 8-րդ գունդը (Տիգրան Բաղդասարյան)՝ 1500 սվին, ընդամենը՝ 7200 սվին: Բացի դրանից, կան նաև Սմբատի խմբերը>>*[211]: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ բերված չեն կամավորական խմբերի զինվորների թվաքանակը, հաշվի առած չէ նաև Նիկոլայ Ղորղանյանի հեծյալ բրիգադը: Եթե հաշվի ենք առնում նաև այդ ուժերը, ապա Կարսի ուղղությամբ նորից գալիս ենք մոտավորապես 10 հազարից ոչ պակաս զինվորականության քանակի:

5. Լենդրուշ Խուրշուդյանը մեջբերում է հետևյալ տվյալները. «*Հայ բանակը լավ սպառազինված, զգեստավորված և պարենավորված էր շնորհիվ անգլիական օժանդակության: 1920 թ. հունիս- հուլիս ամիսներուն Անգլիայեն ստացված էր 40 հազար ձեռք համազգեստ և 25 հազար հրացան մեծաքանակ ռազմանյութով... Պատերազմը սկսած պահուն հայ բանակն ուներ 22 հազար բերան, այսինքն այդչափ զորք, պատերազմիկ կամ ոչ: Բայց նորանոր զորահավաքներու հետևանքով բարձրացավ այդ թիվը, այնպես որ, Կարսի անկման ժամանակ ուներ 55 հազար բերան, ասոնցմե կռվող ուժն էր 32 հազար սվին և մնացյալը թիկունքային ուժեր էին: Այս 32 հազարեն 23 հազարը կգտնվեր Կարսի ճակատը»*[212]:

6. Դեպքերի անմիջական մասնակից, այդ օրերին հայկական բանակի գլխապետ (կապիտան), արևմտահայ Գ.Սիւրմէնեանը իր հուշերում ներկայացնում է հետևյալ թվերը. Կարսի ուղղությամբ 1920 թ. հոկտեմբերին հայկական զինուժը կազմել է մոտ 10 հազար զինվոր, իսկ մեկ այլ հաշվարքով՝ 15-16 հազար[213]:

7. Ռիչարդ Հովհաննիսյանը նշում է, որ <<… *Կարսի ճակատում հայկական բանակը հասել էր գրեթե 10 000 զինվորի, չհաշված մատակարարման, կապի, հրետանու և կայազորի ստորաբաժանումները*>>[214]:

Մեր ուսումնասիրած բավականին ընդարձակ գրականության ցանքը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ Կարսի ուղղությամբ հայկական զորախմբի վերաբերյալ վերը բերված թվերը առավել իրատեսական են և առավել մոտ են իրականությանը: Չնայած, որ նման ճարահատյալ <<համակերպվելու>> պարագայում նույնիսկ, համեմատաբար մոտ համարվող թվերի միջև եղած բացահայտ խզումը վկայում է այն մասին, թե ժամանակին ինչ աստիճանի փնթի է աշխատել երկրի ռազմական գերատեսչությունը և հատկապես, Կարսի զորախումբը, որ տեղի բանակային կառույցի վերաբերյալ առկա է թվային այդչափ անորոշություն:

---

[211] **Ա.Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ,1968թ., էջ 289,290:
[212] **Լ.Խուրշուդյան**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, երկրորդ հրատարակություն, Երևան, 2017, էջ 251:
[213] Տե՛ս **Գ.Սիւրմէնեան**, Տաճկահայ զինուոր եւ զինուորականութիւնը, Պեյրութ, 1967, էջ 68-70, 86-87:
[214] **Ռ.Գ.Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 282:

Ավելի անորոշ ու խայտաբղետ են Կարսի ուղղությամբ թուրքական զորախմբին վերաբերող քանակական տվյալներ: Ստեփան Ղորղանյանը նշում է 4 հազար թիվը, նույն կապիտան Գ.Սիւրմէնեանը՝ գեներալ Սիլիկյանի խոսքերից, նույնպես նշում է 4 հազար թիվը[215], այդօրվա հայկական հետախուզության տվյալներով թուրքերի թիվը կազմել է 5000[216], Ալեքսանդր Խատիսյանը խոսում է Կարսի ուղղությամբ շարժվող 12 հազարանոց քեմալական զորքի մասին[217], իսկ Լ.Խուրշուդյանը ներկայացնում է, որ ամբողջ հայ –թուրքական ճակատում թուրքերը կենտրոնացրել էին 25-30 հազար զինվոր[218]: Կարսի ուղղությամբ արշավող Կարաբեկիրի 30-50 հազարանոց զորախմբի մասին հիշատակումները մենք համարում ենք, մեղմ ասած, ոչ այնքան հիմնավոր և ինչպես ասում են, քննարկման չենք դնում:

Ճիշտն ասած, Կարսի պարագայում կողմերի ուժերի հարաբերակցությունը քննարկելն այնքան էլ ակտուալ հարց չէ, քանզի մեծ ընթարումներ, առավելևս՝ ճակատամարտեր, կողմերի միջև չեն եղել և հետևաբար չեն եղել իրավիճակներ, որտեղ վճռական լիներ կողմերից մեկն ու մեկի թվապես գերակշռող լինելու հանգամանքը: Բայց, համենայնդեպս մենք ներկայացրինք այդ վիճակագրությունը, որպեսզի ընթերցողը՝ ինչպես նաև մենք, ազատ լինենք դեպքերի ընթացքի վրա այդ գործոնի ազդեցության հնարավոր անորոշությունից:

Եվ այսպես, Կարսի ուղղությամբ հակառակորդ կողմերի զինվորների թվաքանակների միջև մի ինչ-որ ճչացող տարբերություն չի եղել: Ամենահամեստ ու <<համաձայնողական>> մոտեցման դեպքում նույնիսկ, կողմերի ուժերը կարելի է ընդունել, վատագույն դեպքում, մոտավորապես հավասար: Այսինքն Կարսի ուղղությամբ հակառակորդի թվային անհերքելի և դիմադրությունն անիմաստ դարձնող թվային գերակշռության մասին խոսք լինել չի կարող: Էլ չենք խոսում այն մասին, որ, ըստ ռազմական գործի դասական տեսության, հարձակվող կողմը կարող է հաջողության ակնկալիքներ ունենալ, եթե գերազանցում է պաշտպանվող կողմին առնվազն երեք անգամ: Բայց…երևի թե ավելորդ է այստեղ բերել պատմությունից հայտնի բազում օրինակներ, որոնք պրակտիկայում են ժխտել այդ դրույթը. <<*54 թվին իշխան Բեհբութեան 3000 հոգով ջարդեց թիւրքաց 60 հազարանոց բանակը …>>*[219]: Հայտնի փաստ է նաև, որ ունեցած զինատեսակներով նույնպես հայկական կողմը չէր զիջում քեմալական բանակին: Չմոռանանք, սակայն, ամենակարևորը. հայերի ձեռքում էր Կարսը՝ իր աշխարհով մեկ հայտնի ամրություններով ու պրակտիկորեն անսպառ զինապաշարով: Սակայն… *<<Կարսի անկումից մի շաբաթ առաջ պարզվեց, որ ամրութիւնների վերայ սպաներ չը կան, որ այդ հարիւր թնդանոթները ղեկաւարելու համար Կարսի բերդի տրամադրութեան տակ կան միայն մի քանի*

---

[215] Տե՛ս **Գ.Սիւրմէնեան**, նույն տեղում:
[216] Տե՛ս **Ռ.Գ.Հովհաննիսյան**, նշվ աշխ. նույն տեղում:
[217] Տե՛ս **Ա.Խատիսյան**, նշվ. աշխ. նույն տեղում:
[218] Տե՛ս **Լ.Խուրշուդյան**, նշվ աշխ. նույն տեղում:
[219] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 190:

*մասնագէտներ և պակասում է 40-50 սպայ... Այդ առիթով միայն այդ օրը ձեռք ու ոտք ընկած <<շտաբը>> հեղեղեց սպարապետին և գեներալ Միլիկովին հեռագրներով, բայց արդէն ուշ էր, իհարկէ, Կարսի ժամերը արդէն հաշված էին... Կարսի անկումից 5 օր առաջ բոլորի համար, հրապարակավ պարզվեց, որ Կարսի ամրութիւնները և խրամատները ոչ միայն էլէկտրական, կամ որևէ այլ լոյս չունեն, այլ չունեն և ջուր, չունեն հեռագրական և տելեֆօնի կապ ո՛չ իրար հետ և ո՛չ շտաբի հետ: Երկաթուղու գծերը, որոնցով փոխադրվում էին դիրքերը ռումբերը միանգամայն փչացել էին: Ոչ միայն ֆօրտերը, դիրքերը, այլ նոյնիսկ հրետանու հրամանատարը, բոլոր ամրութիւնների անմիջական մեծը, իր տրամադրութեան տակ աֆտօմօբիլ չունէր...>>*[220]*:*

Անցնենք այժմ կողմերի բանակների արդեն որակական, այն է՝ մարտունակության աստիճանների դիտարկմանը:

Քեմալական կողմը պատմության այդ ժամանակահատվածում լուծում էր թուրքական պետության և ազգային անկախ պետականության լինել-չլինելու խնդիրը և հանուն այդ խնդրի հաղթական լուծման վարում էր, առանց չափազանցության հայրենական պատերազմ: Այն էլ երկու ճակատով՝ հունական և հայկական: Արևելյան՝ հայկական ուղղությամբ, այդ գաղափարի պրակտիկ իրագործման պարտականությունները ստանձնել էր նրա ամենավառ կրողներից մեկը՝ գեներալ Քյազիմ Կարաբեքիրը: Թե ինչպես էր կարողացել Մուստաֆա Քեմալը Առաջին աշխարհամարտում պարտված ու ջաղջախված թուրքին համոզել ու կրկին մղել պայքարի, դա գիտի միայն ինքը, բայց իրողությունն այն է, որ Քեմալի գաղափարակիցներից մեկը՝ հիշատակված գեներալ Քյազիմ Կարաբեքիրը, իր հերթին կարողացավ, այսօրվա լեզվով ասած, այնպես մոտիվացնել իրենց պարտված բանակի կիսաթափառական, մերկ ու սոված նախկին զինվորներին, որ բոլշևիկյան Ռուսաստանից անհրաժեշտ օգնությունն ստանալուց հետո հնարավոր եղավ բանակային այդ բեկորներից կազմավորել կանոնավոր զորաբանակ և արշավել դեպի Հայաստան: Մեկ անգամ ևս վերհիշենք Մուստաֆա Քեմալի ծրագիրը. <<*մենք պետք է ոչնչացնենք հայկական պետությունը և հայկական բանակը*>>: Այսինքն, քեմալական զորախմբի առջև դրված խնդիրն ավելի քան հստակ էր և չնայած նրան, որ այդ բանակի Գերագույն գլխավոր հրամանատար Մուստաֆա Քեմալը հայտարարված էր պետական հանցագործ և հեռակա կարգով դատապարտված կախաղանի, բանակը նրան հավատում էր և գնում էր նրա հետևից: Նման խիստ <<դելիկատ>> քաղաքական ու ռազմական պայմաններում, որոնցում հայտնվել էր Քեմալը, դա հնարավոր էր միայն այն դեպքում, եթե զինվորն իր աչքի առաջ ուներ իր հրամանատարության՝ վերևից ներքև, անբասիր կեցվածքը: Եթե այս ամենին գումարենք նաև արշավանքի հաջող ընթացքի պարագայում նաև ակնկալվող թալանն ու ավարարությունը, ապա կարելի է ասել, որ թուրքական զորահրամանատարությունը կարողացել էր իր զինուժը տրամադրել պատերազմի

[220] **Նույն տեղում**, էջ 391, 392:

ընդդեմ Հայաստանի և որոշ պայմաններում կարող էր ունենալ հաղթանակի ակնկալիքներ:

Հայաստանը նույնպես լուծում էր հայկական պետության և ազգային անկախ պետականության, բայց՝ արդեն մնալ-չմնալու խնդիրը: Եվ հանուն դրան նույնպես մարտնչում էր երկու ճակատով՝ քեմալական և բոլշևիկյան: Եվ Հայաստանի վարած պատերազմն էլ, առանց մի վերապահումի, նույնպես հայրենական էր: Արևմտյան՝ քեմալական հատվածի գլխավոր՝ Կարսի ուղղությամբ այդ գաղափարի պրակտիկ իրագործման պարտականությունները դրված էին հայ գեներալներ Փիրումյանի և Հովսեփյանի ուսերին: Կրկնենք. Կարաբեքիրը պարտված, կիսասոված ու կիսաթափառական նախկին զինվորներից կազմավորեց կանոնավոր զորախումբ և արշավեց Հայաստանի վրա: Այսինքն զբաղվեց զինվորականի իր գործով: Իսկ ի՞նչ արեցին իրենց պետության ծրագրերի պրակտիկ իրականացման ուղղությամբ Քյազիմ Կարաբեքիրի դիմաց կանգնած հայկական բանակի այդ գեներալները, ինչո՞վ էին զբաղված նրանք նախորդ ամիսներին և այժմ, երբ թշնամին արդեն հատել էր երկրի սահմանը: Նախորդ շարադրանքում քանիցս նշվել է, որ այդ գեներալները Կարսում զբաղված էին ամեն ինչով, բացի իրենց ուղղակի և միակ պահանջվող գործից՝ զինվորականի պարտականություններից: Իսկ հատկապես և առաջին հերթին՝ իրենց ենթակա զորամիավորման միջոցով երկրամասը թալանելով: Այսինքն հայ զինվորը այդ զորախմբում նախ այդտեղի հրամանատարության հարստացումն ապահովող գործիք էր, սեփական բնակչությունը թալանող մի զոռբա և հետո նոր միայն, եթե, իհարկե, դրան բաժին մնար՝ պետությունն արտաքին թշնամուց պաշտպանող մարտիկ: Ուստիև, միանգամայն բնական է, որ <<*… շատ հասկանալի հոգեբանական առանցքում մեր զորաբանակը չէր կարող կռվել և յաղթել: Նա իր չորս կողմը տեսել էր միայն թալան, միայն ինտրիգ ու միայն ոճրալից խաղաղ ազգաբնակութիւնը թալանելու և կեղեքելու կազմակերպութիւնը…>>*[221]:

Ընդորում, հայ գեներալները թալանից չհրաժարվեցին ընդհուպ մինչև հնարավոր վերջին պահը. << *Կարսի անկումից 4 օր առաջ Կարսի ոստիկանապետ Քեասօեան զեկուցեց ինձ, որ տեղեկութիւն ստանալով, որ գիւղերից զինվորականները սայլերով թալան են բերում, նա պատվիրեց բռնել թալանչիներին և սայլերը: Բռնվեց 28 սայլ բուրդ և սայլերին ուղեկցող մի հայ սպեկուլեանտի մօտ գտնվեց գեներալ Փիրումօվի հետևեալ վկայեականը. <<Թոյլ եմ տալիս քաղաքագլուխ Նոհրատեանին <<քրդերի լքված վայրերից>> բուրդ կրել քաղաքի պէտերի համար>>*[222]: Ահա Կարսի անկումից մի քանի օր առաջ մեր մյուս գեներալի <<խիստ գեներալավայել>> գործողության վկայություն. << *Եւ այդ օրերում ես ստանում եմ գեն. Յովսէփեանից հետևեալ ռուսէրէն տելեֆօնագրումը, այն ճակատից, ուր նա յոկտեմբերի 15 այնպես խայտառակ կերպով փախաւ Կարաբեկիր փաշայի թնդանօթների առջևից: Արփաչայի մօտ, Կարս-*

[221] **Նույն տեղում**,էջ 159:
[222] **Նույն տեղում**, էջ 384:

*Աղէքսանդրապոլ խճուղու վերայ, ոստիկանութիւնը բռնել է իր եղբոր տաւարը, որ նա տանում էր Լոռի, առարկելով, որ այդ տաւարը գեներալինն է և այդ առիթով չար լեզուները իմ հասցէին տարածում են նենգ զրպարտութիւններ: Բարեհաճեցէք հրամայելու վերադարձնել բռնված տաւարը եղբորս, որովհետև ես մասնակից չեմ այդ տաւարին>>*[223]:

Իսկ այդ նույն օրերին. <<*Հայկական զօրաբանակը կրիտիկ մօմենտում մի աֆտոմօբիլ անգամ չունէր: Թէ ո՞ւր չքացան, այդ բազմաթիւ աֆտոմօբիլների հետ միասին և հազարաւոր ձիերը և եզները, որ զինվորական իշխանութիւնը անդադար բռնագրավում էր տարիուկէս ժամանակի ընթացքում Կարսի նահանգում իր <<ռազմական>> և պատերազմական պէտքերի համար, դա նոյնչափ հետաքրքիր որչափ և մութ պատմութիւն է…>>*[224]:

Թալանի հետ զուգահեռ երկու հայ գեներալները մինչև վերջին պահը չմոռացան նաև իրենց մյուս <<հիմնական գործը>>՝ անզիջում ու կատաղի պայքարը նահանգում հայկական պետականության պահպանման ու զարգացման գաղափարը կրողների և իրագործողների դեմ՝ ի դեմս Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստ.Ղորղանյանի և նրա շրջապատի. Կարսի անկումից բառացիորեն օրեր առաջ Կարս ժամանած երկրի խորհրդարանի անդամ Լևոն Թադևոսյանը այստեղից զեկուցում էր երկրի վարչապետին և Դաշնակցության Բյուրոյին, որ <<…*զորավարները փորձում են իրաղրությունից օգտվել և ռազմական դրություն հաստատել, որպեսզի ձերբազատվեն ընդհանուր նահանգապետ Ստեփան Ղորղանյանի քաղաքացիական վարչակազմից>>*[225]: Ավելորդ չէ այստեղ վերհիշել նաև, որ մայիսյան հակապետական խռովության օրերին նույնպես, երբ այդ երկու գեներալները <<լեզու էին գտել>> բոլշևիկների հետ, նրանք այդ իրավիճակում <<ափալ-թափալ>> հորդորել էին բոլշևիկյան հեղկոմին հնարավորինս շտապ ձերբակալել քաղաքացիական նահանգապետին:

Նախորդ ամբողջ շարադրանքից զուտ տրամաբանորեն միանգամայն հասկանալի է, որ նման հրամանատարության ձեռքում հայտնված և նման առօրյայով՝ առանց գաղափարական ու բարոյական առանցքի, առանց համապատասխան կարգապահական դրվածքի ու պարտականությունների զորախումբը չէր կարող հանդես գալ որպես մարտական միավոր[226]: Հայ գեներալների և սպայակազմի <<շնորհիվ>> Կարսի հայկական զորախումբը 1920 թ. ամռան վերջերին արդեն հասցված էր հակառակորդի համար ընդունելի <<անհրաժեշտ վիճակի>>. ներքուստ նա արդեն միանգամայն քայքայված ու բարոյալքված էր, միանգամայն անպատրաստ

---

[223] **Նույն տեղում**, էջ 163, 173:

[224] **Նույն տեղում**, էջ 201, 239:

[225] **Ռ.Գ.Հովհաննիսյան**, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 279:

[226] Հանրահայտ իրողություն է, որ ամեն ինչի հետ մեկտեղ Կարսի զորախմբում ահռելի չափերի էր հասնում նաև դասալքությունը, որն աճում էր օր առ օր; տե՛ս օրինակ, **Վ.Հարությունյան,** Կարսի նահանգը…, էջ 321-323, 334-337, 340,342, 360, 364-368:

ինչ-որ լուրջ ռազմական գործողությունների և իրենից ներկայացնում էր հրաշալի մի հումքանյութ արտաքին ազդեցության միջոցով տարբեր մանիպուլյացիաներ իրականացնելու համար, քանզի *<< …այդ բանակը արդէն թունաւորված էր և գնում էր հակաազգային ճանապարհով>>*[227]*:*

Այդ օրերին այդ մանիպուլյացիաները պետք է դրսևորվեին քեմալական զորքին դիմադրություն ցույց չտալու, Կարաբեքիր դեպի Կարս շարժվելուն չխոչընդոտելու միջոցով: Դրա իրականացումն էլ պետք է իրականացնեին հայ բոլշևիկները, որոնք ընդդեմ սեփական ազգային պետության ուղղված իրենց տերերի այդ առաջադրանքը, պետք է ասել, կատարեցին փայլուն ձևով:

Վերհիշենք 1920-ի մայիսը. զորախմբի երեք կարևորագույն կայազորների՝ Ալեքսանդրապոլի, Կարսի և Սարիղամիշի զգալի հատվածներ՝ հատկապես հրամանատարական կազմից, անցել էին խռովարարների կողմը: Հասկանալի է, որ խռովությունը ճնշվելուց հետո խիստ անտրամաբանական,- նաև <<ոչ մարդկային>> կլիներ, եթե հանկարծ կողմերն ուրանային ու մոռանային իրենց մայիսյան մտերմությունը: Դա չէր կարող տեղի ունենալ, քանզի հայ բոլշևիկները չէին կարող <<գործը կիսատ թողնել>> նրանք պետք է իրենց մասով ապահովեին Կարսը քեմալականներին հանձնելու ծրագիրը, ինչի ամենադյուրին ճանապարհը, ինչպես քանիցս նշել ենք, տեղի զորախմբի կողմից թուրքերին դիմադրություն չցուցաբերելն էր: Բացի <<կարմրած>> սպայակազմի հետ այդ ուղղությամբ համապատասխան պայմանավորվածություն ձեռք բերելը, դրան հասնելու ավելի արդյունավետ ճանապարհ գոյություն չուներ: Առավելևս, որ Ռուսաստանի շուտափույտ Կովկաս վերադառնալուն տենչացող այդ սպայակազմի համար Ռուսաստանի նոր տերերը միանգամայն ընդունելի էին, իսկ նրանց հաղթանակն էլ՝ անխուսափելի և, բնականաբար, խիստ ցանկալի: Իսկ որն էր լինելու այդ ամենի դիմաց վճարվող գինը: Այստեղ էլ, տրամաբանորեն ամեն ինչ հստակ է. անձեռմխելիություն նոր կարգերի օրոք, հրամանատարական պաշտոններ նոր իշխանության բանակում և ինչքի պահպանում: Հետագա զարգացումները հաստատում են այդ ամենը: Առաջինը քայլ պետք է կատարեր սպայակազմը: Եվ կատարեց. . *<< Մեր հրամանատարությունը ոչ մի հասկացողություն չունէր թշնամու ոչ միայն մոտալուտ անելիքների մասին, այլև նորա ոյժերի, նորա հրամանատար կազմի մասին…Երբ Վանանդի սարալանջերում առաջին անգամ որոտաց տաճկական թնդանոթը, հայ սպան փախաւ առաջինը և մեր ռուսական ու ռուսասեր բարձր հրամանատարութեան առաջ բացվեց մի անվիճելի ճշմարտություն՝մենք հրամանատար կազմ չունէինք... Հրամանատարությունը կանգնած էր երկրի առաջ իր բոլոր անկարող մերկութեամբ… Յոկտեմբերի 15, առաջի և վերջի կռվից յետոյ, մեր հրամանատարութեան կատարեալ սնանկությունը կասկածից դուրս էր… Մեզ խորթ և ապիկար հրամանատարությունը առաջ բերեց*

[227] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 558:

*ամօթալից մի սօդօմ միայն, զրկելով հայկական քաջութիւնը կռվելու և պատերազմի դաշտում ընկնելու մեծ պատվից>>*[228]*:*

Բերենք այդ դեպքերից ավելի կոնկրետ՝ առարկայական և անձնավորված մի տիպիկ օրինակ. *<<Քեազում Կարաբեկիր փաշայի արշաւի ժամանակ առաջի խուճապի անվիճելի հեղինակը ռուսախօս գնդապետ Միրիմանովն էր: Նա ուժգին թմբկահարեց նահանջ և ո՛չ թշնամի տեսնելով և ո՛չ էլ նորա հրացանի ձայնը լսելով, մի երկու-երեք ժամվայ խուճապային մթնոլորտում ոչ միայն մերկացրեց հայ-տաճկական սահմանը, այլև դատարկեց ազգաբնակութիւնից երկու մեծ գաւառակ՝ Խորասանը և Սարիղամիշը և ինքը, իհարկէ, առաջինը փախաւ… գնդապետ Միրիմանօվ առաջինը թողեց դիրքերը, փախաւ և գունդն*[229] *էլ, իհարկէ, յետևեց նորան… Այդ խուճապով բռնվեց միշտ դէպի թիկունք տրամադրված գեներալ Յովսէփեան և փախուստի <<ռազմական միտումները>> յաջորդում էին այնուհետև մէկը միուսին: Ո՛չ Կաղզման և ո՛չ Սարիղամիշ մենք թշնամի չը տեսանք, բայց և այնպէս գեներալ Փիրումօվ-Յովսէփեան, «առանձին սաղրական միտումներով» հարկաւոր էին համարում տենդոտ դատարկել այդ վայրերը, տնաւէր անել հայ ազգաբնակութիւնը և փախուստի տրամադրել այն զօրքը, որին նոքա տարի ու կէս ժամանակամիջոցի ընթացքում դաստիարակում էին միայն թալանի և միայն կեղեքումների վարժողութիւններում…երկրի քուրդ և թուրք ազգաբնակութիւնը միանգամայն ափշած է, թէ ինչու մեր գնդերը փախչում են, երբ մեր դիմացի թշնամին թէ դեռ շատ հեռու է և թէ շատ թոյլ>>*[230]*:*

Հայ բոլշևիկները <<սպայական խոսքին>> տեր կանգնած բանակակործան այդ սպաներին մենակ չթողեցին և քեմալականներին Կարսին տիրանալը առավել հաստատ ու դյուրին դարձնելու համար օգտագործեցին նաև զորքը վերջնականապես քայքայելու նոր հնարքներ:

Նախ, մայիսյան ճառերից հետո, հատկապես շարքային զորակազմի համար մշակվեց և սկսեց տարածվել հետևյալ <<մեթոդական ձեռնարկը>>.

*<<«Հույժ գաղտնի»*

*Հայաստանի կոմունիստների /բոլշևիկների/ կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի Գարնիզոն մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքույթներում, եթե հնարավոր է, ինչպես նաև թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝*

1. *Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:*

---

[228] **Նույն տեղում**, էջ 163, 581,454, 456:

[229] Խոսքը զորախմբի առավել համալրված (2000 սվին) 4-րդ գնդի մասին է:

[230] **Նույն տեղում**, էջ 202, 386:

*2. Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային ազատության համար ընդդեմ իմպերիալիզմի /Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի/:*

*3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև Արևելքի խորհրդայնացումը:*

*4. Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը. Այս նպատակի համար պետք է.*

*1. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, այն է.*

*ա/ կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին:*

*բ/ Ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք:*

*գ/ Չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:*

*2. Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից:*

*3. Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով՝ Հայաստանը ընդմիշտ կկապվի Ռուսաստանի հետ ընդմիշտ վերջ կտրվի պատերազմին և սովին ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին:*

*Ծանոթություն- Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել: Հայաստանի կոմ.կուս.կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ա. Նուրիջանյան, Շ. Ամիրխանյան, Ի. Դովլաթյան, Ա. Հովհաննիսյան*

*Նո. 218 Բաքու 1920 ՍԵՊ 20>>*[231]*:*

---

[231] Տե՛ս ՀԱԱ ֆ. 1022, ց.3, գ.275, թ.1 (տե՛ս նաև **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը Հայաստանի…էջ 21-22): Արխիվային այս փաստաթղթի կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ այն իրողությանը, որ հայրենի մամուլում պարբերաբար հայտնվում են կիսասիրողական՝ որոշ դեպքերում՝ անստորագիր հրապարակումներ, որոնցում կասկածի տակ է առնվում արխիվային սույն փաստաթղթի իսկությունը և հայտարարվում է, որ նա <<*կեղծ է*>>: Մենք ամենևին չենք բացառում նման տարբերակի հավանականությունը, բայց ցանկացած ենթադրություն, առավելևս պնդում, պետք է հիմնավորվի ինչ-ինչ ապացույցներով: Եվ ի վերջո, եթե սա իրոք կեղծ փաստաթուղթ է, ինչու է նա մինչ օրս պահվում Ազգային արխիվում և ոչ թե, համաձայն գործող կարգի, օտարվում այնտեղից: Մեր կողմից հավելենք, որ հայրենադարձներից մեկի դստեր՝ պատմաբան Անուշ Ամսեյանի ասելով, իրենց մեծերը հաճախակի պատմում էին, որ Կարսի զորախմբի զինվորներին ուղարկված ծխախոտի թղթի

Բնականաբար, մեթոդական ձեռնարկներ տարածելը դեռևս բավարար չէր: Կռվելուց հրաժարվելն ու դիրքերը թողնելն անհրաժեշտ էր ուսուցանել նաև կենդանի օրինակով. երբ ամբողջ Կովկասով տարածվեց Կարսի գլխին կախված վտանգի լուրը, տարածաշրջանի զգալի թվով հայ երիտասարդներ կամավորների անվան տակ ուղևորվեցին դեպի Կարսի ճակատ, իբր զորքին օգնելու[232], սակայն .*<<…<ռազմաբէմ> նետվեց մի բուռն հայ երիտասարդութիւն: Բայց այդ եկվորները գնում էին ոչ թէ մեռնելու, ապա սիրված լինելու երազներով, այլ որպէս ռուս լրտեսներ և ռուս պրոպագանդիստներ գնում էին լքելու հայկական թշվառ բանակը և ստեղծելու այն սօղոմը, ուր պէտք է խորտակվէր հայկական անիշխանութիւնը>>*[233]: Այդ <<հայրենասեր>> հայ երիտասարդները, հայտնվելով դիրքերում, վճռական պահին նախ սկսում էին գոռալ թե << *… մեր ընկեր բոլշևիկների դեմ մենք կռվել չենք ուզում, եկող թուրքերը մեր ընկերներն են*>>, հետո ցուցադրաբար գցում էին զենքը և դիմում փախուստի, հորդորելով մյուս զինվորներին հետևել իրենց օրինակին:[234] Եվ ինչն է հատկանշական. մարտական դիրքերը լքելուց հետո նրանք, որպես կանոն, ուղևորվում էին ոչ դեպի թիկունք, այլ վազում էին ուղիղ դեպի թուրքական բանակի դիրքերը:[235] Դեպի Կարս արշավող Կարաբեկիրի զորաջոկատի հետ իրենց հայրենիքը նվաճելու էին գալիս նաև հայ բոլշևիկներ[236]: Նրանց հետ էին, իհարկե, և այլազգի իրենց գաղափարակիցները. *<<Երբ թիւրք հորդաները ներս խուժեցին Կարս, փողոցում երևացին կասկածելի տիպի ռուսներ և Կովկասի թուրքեր... Պարզ էր, որ ազգերի ինքնորոշման այդ նախանձախնդիր արկածախնդիրները ուղեկցում էին Կարաբեկիրի բանակը՝ որպէս պրոպօգանդիստներ, բերելով իրանց հետ թոյնը, որ ճաշակել էր հայ զինվորը դեռ մայիսեան օրերում...>>*[237]: Բաքվում լույս տեսնող <<Կոմունիստ>> թերթը այդ օրերին գրում էր . *<<Հոկտ.30-ին տաճկական զորքերի առաջապահ մասերը չհանդիպելով ոչ մի դիմադրության հայկական զորամասերի կողմից գրավեցին Կարսը: Մինչև թուրքական զորքերի մտնելը, հայկական զորքերը խորը համոզված էին, որ Կարսի վրա հարձակվող զորքերը բոլշևիկներ են, որ*

---

փաթեթների մեջ շատ հաճախ հայտնաբերվում էին այդ բովանդակության բոլշևիկյան գրություններ: Այն, որ արխիվային այս փաստաթուղթը բնագիրը չէ, երկու կարծիք լինել չի կարող: Մեր ենթադրությամբ, այդ բնագիրն իրականում գոյություն ունեցել է, սակայն իր բովանդակության պատճառով խորհրդային տարիներին պահվել է չափազանց <<խորը և հեռու>> և հասել է քայքայման եզրին: Խորհրդային կարգերի փլուզմանը զուգահեռ որոշել են այն վերականգնել և ստացվել է այն, ինչը որ այժմ ունենք: Ի վերջո, իր բովանդակությամբ այդ փաստաթուղթը խիստ բնորոշ է այդօրվա հայ բոլշևիկների թե՛ մտածելակերպին, թե՛ նրանց գործելաոճին և միանգամայն համահունչ է այդ ամենը արտացոլող բոլշևիկյան բազմաթիվ այլ փաստաթղթերի հետ:

[232] Տե՛ս **Արսէն Ա. Քահ.Սիմէօնեանց**, Զօր. Նազարբեգեան, <<Ալիք>> օրաթերթ, 1954, 18 օգոստոսի, թիվ 182:

[233] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 581:

[234] Ի դեպ, նման իրավիճակում է ինքնասպանություն գործել 1-ին գնդի հրամանատար Մազմանյանը, երբ զինվորները հրաժարվել են կատարել գրոհի ելնելու նրա հրամանը: Տե՛ս **Յ.Ա.Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ <<Ալիք>> օրաթերթ, 1961, 6-7 մայիսի, թիվ 94,95:

[235] Տե՛ս **Յ.Ա.Ք. Հաճեան**, Կարսի վերջին օրերը. 1920 թիւ <<Ալիք>> օրաթերթ, 1961, 6,7 մայիսի թթ. 94,95,:

[236] Տե՛ս **Յ.Ա.Ք. Հաճեան**, նույն տեղում; **Հրայր Իկիլիկյան**, նշվ.աշխ., էջ193-195

[237] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 440:

*պատճառով և նրանք դիմադրություն ցույց չտվին տաճիկներին…*>>[238]:
Նույնաբովանդակ <<բացատրություն>> է բերում նաև հին բոլշևիկ, Իջևան-Ղազախում մայիսյան խռովության կազմակերպիչներից մեկը՝ Շավարշ Ամիրխանյանը, <<*Դեպքեր են եղել, երբ հայկական զորամասերը առանց կռվի անձնատուր են եղել Քեմալին՝ նրան ընդունելով բոլշևիկի տեղ*>>[239]:
Միակ ռեալ ուժը Կարսի զորախմբում, որ կարող էր ստեղծված իրավիճակում գոնե լոկալ մասշտաբներով իրական դիմադրություն ցույց տալ քեմալականներին, դա զորախմբում ընդգրկված թվով մոտ 2500 արևմտահայերն էին, որոնք ոչ միայն չէին ընդունում բոլշևկյան քարոզչությունը, այլ բավականին կոշտ պայքարում էին դրա դեմ: Զորախմբի բարձրագույն հրամանատարության հրահանգով այդ 2500 արևմտահայ զինվորները փոքրաքանակ խմբերով բաշխվեցին ամբողջ ռազմաճակատով մեկ[240]: Այսինքն այդ ուժը ոչ միայն չոգտագործվեց զորախմբի հրամանատարության կողմից, այլ նրա կողմից արվեցին քայլեր, որպեսզի բացառվի հանկարծ թուրքերին դիմադրելու նաև այդ հնարավոր օջախի ի հայտ գալը…

Բերենք ևս երկու չափազանց կասկածելի դրվագ այդ օրերի ռազմական գործողություններից: Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գլխավոր շտաբը, տեսնելով Կարսի զորախմբում տիրող իրավիճակը և հասկանալով, որ այդ զորախումբը որևիցե դիմադրություն չի ցուցաբերում թշնամուն, Կարաբեքիրի զորաջոկատը շրջապատելու և ոչնչացնելու համար մշակում է բավականին գեղեցիկ մի օպերացիա, կամ ինչպես այդ օրվա փաստաթղթերում է նշվում՝ <<դիզլոկացիա>>: Ընթերցենք այն. <<*Հոչակաւոր Բագարան, այնտեղ ուր Ախուրեան սրնթաց փախչում է դէպի Արաքս, ինչպէս և 77 թվին, թիւրք զօրաբանակի ամենացաւօտ թիկունքն էր: Հայկական գլխաւոր շտաբը, իր նշանաւոր դիզլոկացիան կազմելով, հաշվի էր առել ռազմաբէմի այդ խոցոտալից անկիւնը և այնտեղ ուղարկվեց իր ժամանակին փոխգնդապետ Կոնդախչեան: Այդ ըստերևոյթին քաջ փոխգնդապետը իր հրամանատարութեան տակ ունէր հազար սվին, հարիւրից աւել հեծելազօր, ութը թնդանօթ և գնդացիրներ: Բագրատունեաց ամառանոցի չքնաղ կիրճում այդ մեծ բռունցքն էլ բաւական էր զինվորական մեծ ցոյց թշնամու թիկունքում անելու համար: Բայց սուրբ Գէորգի սպայական խաչով զարդարված երիտասարդ հայ փոխգնդապետը երերվեց իւր անմատչելի դիրքում մի 2-3 հարիւր քուրդ ձիաւորներ տեսնելով, թողնում է իր տեղում իր թնդանօթները, ամբողջ ռազմապաշարը, իր զօրաբանակի բոլոր ծանրութիւնները և ամենաանամօթ կերպով իր գումարտակներով փախչում…*

*Այդ միջոցում վրա է հասնում այդ գաւառակում պատահմամբ եղած Կաղզմանի գաւառապետի օգնական Չիլինգարեան, որ ինքս ուղարկել էի դասալիք զինվորներին*

---

[238] **Ս.Վրացյան,** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 509-510:
[239] **Հրայր Իկիլիկյան**, նշվ.աշխ., էջ192:
[240] Տե՛ս **Գ.Միւրմէնեան**, Տաճկահայ զինուոր եւ զինուորականութիւնը, Պեյրութ, 1967, էջ 102:

*բռնելու: Նա իր մի 50 հեծեալ ոստիկաններով և գաւառակի մի բուռն կտրիճ հայերով հալածում է քուրդ հրոսակախումը և այդպիսով ցրում Կարաբեկիր փաշայի առաջամասը, որից գնդապետ Կոնդախչեան, իր հազար սվիներով, փախաւ որպէս խելակորոյս։>>*[241]:

Այս օպերացիան հայ սպաների կողմից ակնհայտորեն միտումնավոր կերպով ձախողելուց հետո հայկական Գլխավոր շտաբը, ինչպես ասում են, չի ցանկանում համակերպվել հնարավոր պարտության մտքի հետ՝ առավելևս որ ուժեր և հնարավորություններ դեռևս կար, և մշակում է մեկ այլ, նույնպես շատ գրագետ <<դիզլօկացիա>>: Ընթերցենք նաև այն. <<…*Եւ երբ Կարաբեկիր երևաց հռչակաւոր Վազինքոյի լեռնագոտում և սկսեց իջնել դէպի Կարսի տափարակը, Սպարապետ Նազարբէկով նպատակի է բռնում Կարաբեկիրի թոյլ թիկունքը: Այս անգամ նա ուղղում է դէպի պատմական Ալուջա մի լուրջ զօրամաս, գնդ. Հասան Փաշայեանի հրամանատարութեամբ:Ինչ-ինչ յիմունքներով, գնդ. Հասան-Փաշայեանը լաւ ու քաջ զինուորականի համարում ունէր: Այդ դիվերսիայի լուրը Կարսում առնելով, մենք շատ բարձր տրամադրվեցինք: Ծանօթ երկրի տեղեկագրութեանը, մենք տեսնում էինք, թէ ինչպէս գնդապետ Հասան Փաշայեան պէտք է խփեր դէպի Կարս իջնող Կարաբեկիրի թիկունքից և ինչպէս մեր միւս զօրամասերը, որ մեր բանակի թևերն էին, պէտք է փակէին այն ծուղակը, որտեղից փախչելու այլևս հնար չրպէտք է ունենար թիւրք հրամանատարը: Բայց մինչ մենք սրտատրոփ սպասում էինք Կարսում այդ հրավառ տեսիլին, մինչ գեներալ Կազարով, որ այդ օրը փոխարինեց գեն. Յովսէփեանին, շնչասպառ դիտում էր, թէ երբ Վազենքոյի բարձրունքներում կրտարածվի գնդ.Հասան Փաշայեանի հրետանու ծխալից մշուշը, գնդ.Հասան Փաշայեան հարկաւոր համարեց ոտը կարճ ձգել, դանդաղել իր մարշը, թողնելով դէպքերը իրանց բախտին ու իրանց ընթացքին…*

*Գնդ. Հասան Փաշայեան չերևաց Արփաչայի այդ խառնվածքում, Կարաբէկիրի թիկունքը միանգամայն (փաստաթուղթը վնասված է) … իջնում էր դէպի Կարս յաղթալից և թևաւորված: Նրա հեռաւոր թիկունքում եղած հայ զօրամասերը չէին յետապնդում նրան, իսկ առջևի հայ զինվորութիւնը ձգում էր զէնքը և փախչում:*

*Այդպէս էր այն եզակի անբախտ հայ զինվորական մթնոլորտը, ուր Կարաբեկիր այնչափ ուղեկից և այնչափ հեշտ դափնիք ձեռք բերեց։>>*[242]:

Արդյոք Կարսի ուղղությամբ մեր կողմից մի քիչ շատ ու չափից դուրս խիտ չդասավորվեցին <<պատահականությունները>>: Բայց իրականում որևիցե պատահականություն այստեղ չկա: Հակառակ, այս ամենը միանգամայն տեղավորվում է Կարսի նվաճման քեմալա-բոլշևիկյան ծրագրի հայ բոլշևիկների հատվածով մշակված պլանի տրամաբանության մեջ: Այն է, ինչպես քանիցս շեշտել

---

[241] **Վ.Հարությունյան**. Կարսի մարզը…էջ 383-385:
[242] **Նույն տեղում**, էջ 385-387:

ենք, հասնել նրան, որպեսզի հայկական բանակը դիմադրություն չցուցաբերի քեմալական զորքի դեպի Կարս շարժվելուն: Հակառակ անգամ թուրքական զորքը կանգնեցնելու և շրջապատելու ուղղությամբ հայկական Գլխավոր շտաբի ջանքերի և ձեռնարկած քայլերի: Այս ամենը պարզ ու ցուցադրական հայ բոլշևիկների պլանն էր <<գործողության>> մեջ. *<<…Հայկական զորքը գոյիութիւն չունէր: Երկու ամսվայ ընթացքում միայն նահանջելով և միայն լքելով Կարսի նահանգի իր ահռելի դիրքերը, մեր զօրաբանակը հալվել ու չքացել էր: Նրա ռուս և ռուսախոս հրամանատարութիւնը, անընդունակ, ապիկար և անցաւակից երկրի իդեալներին, միշտ խորթ և միշտ օտար էր մեզ համար: Նա չը կոփեց մեր զինվորների քաջալից շարքերը, նա թալանի ընտելացրեց նոցա… հայ զինվորը, և առիւծ և հլու երբէմն պարծանք ռուս գումարտակների, չը ստացաւ ազգային դաստիարակութիւն իր հայրենի զօրաշարքերում…>>*[243]:

Նույն պլանի տրամաբանության շրջանակներում լուծվեցին նաև մեր սպայության համապատասխան հատվածի նաև զուտ կենցաղային՝ ընտանեկան և ունեցվածքային հարցերը. <<*Ամենքից առաջ, լուսաբացին, գաղտագողի, պետական բեռնակիր աֆտոմոբիլներով և սայլերով, մեր հրամանատարութիւնը փոխադրեց դէպի Աղէքսանդրապոլ իր ընտանիքները, իր բոլոր ունեցվածքը, իրերը, պաշարը և վերջի ջարդված աթոռը*>>[244]:

Բայց նման ապահով ձևով Կարսից չկարողացավ հեռանալ գեներալ Դանիել-բեկ Փիրումյանը. *<<Յոկտեմբերի 28, գիշերը, ոստիկանապետը զեկուցեց ինձ, որ գեն. Փիրումով իր արբանեակներով, լուսաբացին, գաղտնագողի փախչում է դէպի Աղէքսանդրապոլ, նկատի առնելով, որ Կարսը միանգամայն վտանգված է: Հրամանատարի այդ խայտառակ փախուստի մասին ես անմիջապես տեղեկացրեցի մինիստր Բաբալեանին: Ի ծայր յուզված, մինիստր Բաբալեան անմիջապէս գնաց գեն. Փիրումովի մօտ:*

*Թէև դեռ ժամի 12 էլ չը կար, բայց թէ հրամանատար Փիրումով և թէ նորա <<շտաբը>> անոյշ քնած էին...*

*Երբ մինիստրը մտնում է գեներալի ննջարանը, հայկական <<գործող>> բանակի հրամանատարը, յօրանջելով ասաց դժգոհ,– Է՜հ, նոր էր աչքս կպել...*

*Մինիստրը, կոշտ կտրելով, ասաց,– գեներալ, ես եկել եմ պետական կարևորագոյն գործով, պահանջեցեք շտաբի պետին...*

*Շտաբի պետը, որ պառկած էր միուս սենեակում, խնդրում է մինիստրին իր ննջարանը, բայց Բաբալեան, յուզված, շատ բարձր գոռում է,– Ես կառավարութեան ներկայացուցիչն եմ բարեհաճեցէք ներկայանալ...*

*Երբ գալիս է <<շտաբի>> պետը, մինիստր Բաբալեան բացատրութիւն է պահանջում զօրքերի հրամանատարից, թէ ի՞նչ յիմունքներով, առանց նոյնիսկ իրան իրազէկ*

---

[243] Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 514, 526, 527:

[244] **Նույն տեղում**, էջ 202:

*անելու ու ամբողջ նահանգի հայ ազգաբնակութիւնը երեսի վրայ թողնելով նա իր արբանեակներով լուսաբացին փախչում է քաղաքից...*

*Գեներալը կմկմաց, իսկ շտաբի պետը փորձեց առարկել, որ այդ հրամանատարի իրաւունքն է և նա ղեկաւարվում է <<ռազմական>> միտումներով: Մինիստրի և այդ երկու զինվորականների միջև առաջ է գալիս շատ սուր ընդհարում և Բաբալեան, անվճռաբեկ առաջարկում է գեներալին տեղից չը շարժվել... Ընկճված և թակարդ ընկած, գեներալը ստիպվում է հնազանդվել: Հանգիստ քնել ժամի տասն և մէկին Կարսի անկման նախօրեակում և լուսաբացին գաղտնագողի փախչել Կարսից, <<ռազմական>> միտումներով: Այդ կարող էր անել միայն մեր օրերի հայկական հրամանատարը և նա փորձեց անելու այդ, պատմութեանը յանձնելու իր տիպարը և իր օրերի անհոգ ու ապիկար տրամադրութիւնը>>*[245]*:*

Իսկ մեկ օր անց, *<<Երբ Կարսի անկման առաւօտը Խնուսցի խմբապետ Փիլոս, շնչասպառ, քշում է ձին դէպի գեներալ Փիրումովի շտաբը և տեղեկութիւն է բերում, որ տաճկաց առաջաւոր մասերը արդէն տիրել են հռչակաւոր Կանլին, ..., որ Կարսից մի 2-3 վերստի վրայ է միայն, գեներալ Փիրումով և նորա <<շտաբը>> դեռ անուշ նիրհում էին անկողնում>>*[246]*:*

Երբ անդրադառնում ես Կարսի մեր զորախմբի 1920-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների գործողություններին՝ ներառյալ նաև հեկտեմբերի14-15-ի փախուստի վերածված մեր հակահարձակման միակ և անհաջող փորձը[247], ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ Կարաբեկիրի զորաջոկատի Հայաստանի սահմանը հատելու օրվանից, Կարսի հայկական զորախմբի հրամանատարական կազմը հետևողականորեն արել է ամեն ինչ, որպեսզի հայկական զորքը հանկարծ դիմադրություն չցուցաբերի հակառակորդին, և հետո էլ արդեն այդ փախչող զորքը հավաքել ու կեմտրոնացրել է <<ապահով>> մի տեղ, որպեսզի այն իր ամբողջ համակազմով՝ շարքայինից մինչև գեներալ, հնարավորություն ունենա <<ապահով>> կերպով գերի հանձնվել թուրքերին, վերջիններիս տալով այն ամենը, ինչ որ նրանք կամենում էին՝ Կարս բերդաքաղաքն ու ամբողջ Կարսի նահանգը:

1920 թ. հոկտեմբերի 30-ին՝ հայկական կողմից առանց որևիցե դիմադրության հանդիպելու Քյազիմ Կարաբեքիրն իր զորաբանակով մտավ Կարս: Կարսի քաղաքացիական նահանգապետ Ստեփան Ղորղանյանը մեզ ներկայացնում է վերջին տեսարանը Կարսից, որին ինքն ականատես է եղել Կարսի զորախմբի հրամանատարի շտաբում՝գեներալ Փիրումյանի և մի քանի այլ հայ երևելիների գերի հանձնվելուց բառացիորեն րոպեներ առաջ.*<<... յենարանների վերայ, որպէս մի ուրուական, կանգնած էր գունատ և անտարբեր դէմքով գեներալ Փիրումով: Այնտեղ*

---

[245] **Նույն տեղում**, էջ 164,178,180,181:

[246]**Նույն տեղում**, էջ 457:

[247] *<<Գործին և հանգամանքներին տեղեակ մարդիկ, ականատեսները, ասում էին, որ յաջողութիւնը մեր կողմն էր, թշնամին՝թոյլ և անվճռական, և մի ուժգին գրոհ մեր կողմից և նա կը փախչէր, թողնելով ոչ միայն Սելիմը, այլև Սարիղամիշը...>>,* տե՛ս **նույն տեղում**, էջ 395:

*էր մինիստր Բաբալեան, նախկին զինվորական մինիստր գեներալ Արարատով, անբախտ գեներալ Կազարով, Գարեգին եպիսկոպոսը, մի քանի գնդապետներ, Կարսի քաղաքագլուխ Նոհրատեան և ուրիշները: Բոլորը կորցրել էին իրանց, բոլորը լուռ էին և բոլորը ինչ-որ մի բանի էին սպասում...Առաջ եկաւ գեներալ Կազարով և շատ հան-գիստ ասաց ինձ,– ամէն բան վերջացած է, զօրքը միանգամայն հրաժարվում է կռվել և ես մնացի հրամանատար առանց զօրաբանակի...>>[248]:*

Պատկերն իրոք, ցնցող է: Բայց այն դառնում է միանգամայն օրինաչափ և միանգամայն սպասելի, եթե մի քիչ հետ գնանք և տեսնենք, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ ստրատեգիական ուղղության հայ զորահրամանատարի ռազմակայանը. *<<Առանց կապի զօրականների հետ, առանց սուրհանդակների, լրտեսների, տեղեկութիւնների, հերթապահ տելեֆոնիստների, հերթապահ աֆտոմոբիլների, առանձին յանձնարարութիւնների սպաների և առանց օկուրան տեղեկատու մարմնի, [այդ շտաբը] նման էր աւելի մի անկեալանոցի և ոչ երբէք ինքնակալ հրամանատարի կայանի…>>[249]:*

Չմոռանանք համենայնդեպս, որ եթե զորախմբի մի շարք սպաներ <<ռուսախոս ու ռուսամոլ>> էին, ապա հայկական զինուժում նման հանցավոր անտարբերություն ու անգործություն, եթե ոչ սերմանողներից, ապա հանդորժողներից մեկը, Կարսի բերդի շտաբի պետ Վահան Տեր-Առաքելյանը, ոնց որ թե տիպիկ ազգային կերպար էր՝ նա Կոմիտասի աշակերտներից էր, այդ օրերին էլ՝ դաշնակցական:

Մեր կողմից Կարսի կորստյան հետ առընչվող դեպքերի նման ընթացքի վերը բերված ամբողջ շարադրանքը հուշում և միաժամանակ հենց ինքն էլ ապացուցում է, որ իրոք, առանց կողմերի՝ այն է առանց Կարսի զորախմբի սպայակազմի որոշ <<ներկայացուցիչների>> և հայ բոլշևիկների նախնական պայմանավորվածության և վերջիններիս կողմից առանց ինչ-ինչ երաշխքների ներկայացման, իրադարձությունների նման ընթացքը պարզապես բացառվում էր: Իսկ նման երևույթներն ունեն իրենց բնութագրող համապատասխան անվանումը՝ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ: Հայ սպայության մի հատվածի և հայ բոլշևիկների համատեղ

---

[248] **Նույն տեղում**, էջ 164; Թուրքական գերությունից վերադառնալուց հետո գեներալ Դանիել-բեկ Փիրումյանը մահացել է 1922 թ. հոկտեմբերի 15-ին: Մահվան վերաբերյալ համապատասխան գրանցումը կատարվել է Երևանի սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու չափաբերական մատյանում (տե՛ս ՀԱԱ, Ֆ.47, ց.6, գ.365, թ.33 և շրջ.): Սակայն մատյանի այն թերթը, որտեղ նշվում են մահացածի մահվան պատճառն ու հուղարկավորության վայրը, փաստաթղթում բացակայում է: *<<Գեներալ Ղազարեան, քեամալիստների գերութիւնից ազատվելուց յետոյ, յետին չքաւորութեան մէջ, ապրում էր Թիֆլիզում: 23 թվին, Թիֆլիզի Միքայելեան կամուրջից, նա իրան Կուր գէտը նետեց ու խեխտվեց: Անկարող լինելով որևէ աշխատանք գտնելու, ի ծայր չքաւորութեան հետ մաքառելու մթնոլորտում նա կորցնում է հաւասարակշռութիւնը և վերջ տալիս իր կեանքին:>>*, -տե՛ս Կարսի նահանգապետ **Ստեփան Ղորղանեանի** յուշերը…, էջ 48: Գեներալ Ք.Արարատյանը գերությունից ազատվելուց հետո խորհրդային տարիներին ծառայել Կարմիր բանակում, գնդակահարվել է 1937-ին:

[249] **Նույն տեղում**, էջ 497:

ու միասնական իրագործած այս դավաճանությունը հիմնված էր այդ երկու կողմերի շահերի ընդհանրության վրա, ինչին վերը քանիցս ադրադարձել ենք: Ուստիև, նրանք գործեցին համատեղ և, ինչպես տեսանք, գործեցին բավականին <<հաջող և արդյունավետ>>. *<<… Նոքա երկու ամիս շարունակ եռանդալից նահանջում էին անտեսանելի թշնամու առջևից և իրանց այդ հանելուկային դերը պսակեցին Կարսի պարիսպների տակ: Նրանք առանց մի գնդակի յանձնեցին Կարսի անառիկ ամ-րութիւնները ռուս տաճկական դաշնակցութեանը...>>*[250]:
Չմոռանանք, որ հայ բոլշևիկներն էլ զորախմբի սպաներին իրենց խոստացած վճարը չմոռացան ու չուրացան և ինչպես արդեն նշել ենք.<<… *այդ բոլոր գեներալները և սպաները նախամեծար դարձան ռուս զօրաբանակում, նոցա հայրենիքի կործանումից յետոյ>>:* Երբ Հայաստանի խորհրդայնացումից օրեր անց սկսվեց հայ սպաների աքսորը դեպի Բաքու և Ռյազան, ապա *<<Բացառութիւն կազմեցին և մնացին իրանց տեղերում միայն մի քանի ընտրեալներ՝ գեներալ Յովսէփեան, գեներալ Լօմիզէ (հայ), գնդապետ Միրիմանով և մի քանի սպաներ>>*[251]:

…1920 թ. հոկտեմբերի 30-ի առավոտյան Կարսը ընկավ՝ իր հետևից պատմության վիհը տանելով նաև Հայաստանի առաջին հանրապետությունը՝ այն նորաստեղծ հայկական պետությունը, որը դեպքերի բերումով հարյուրամյակների ընդհատումից հետո վերստին տիրացել էր Կարսին, սակայն կարողացավ տիրել նրան ընդամենը 18 ամիս.*<<…Եւ այդպիսով մեր պետականութիւնը, երբ այդ պէտք էր, չունէր այն ոյժը, որ պէտք է պաշտպանէր երկրի պատիւը և մեր լինել կամ չը լինելու խնդիրը… Ազգային մթնոլորտում պետական անկախութիւն ստացած, Հայաստանը չունէր իր ազգային բանակը, նա բնականապէս պէտք է պարտվէր.. երկրի վերջի վեց ամսվայ հոգնարք*

---

[250] **Նույն տեղում**, էջ 452:

[251] **Նույն տեղում**, էջ 458: Գեներալ Հ.Հովսեփյանն ու գնդապետ Ա.Միրիմանյանը ակնթարթի ընթացքում հայտնվեցին հայկական բոլշևիկյան բանակի շարքերում: Միրիմանյանը և մայիսյան օրերին Սարիղամիշի իր ծառայակից, բոլշևիկ Լիպարիտ Մխչյանը ստանձնեցին հայկական Կարմիր բանակի 1-ին բրիգադի հրամանատարությունը (Ա.Միրիմանյանը՝ հրամանատար, Լ.Մխչյանը՝ կոմիսար): Հովսեփյանն ու Միրիմանյանը, որպես կարմիր հրամանատարներ, հայկական բոլշևիկյան զորաջոկատի գլուխն անցած մասնակցեցին Վրաստանի խորհրդայնացմանը, գրավեցին Թիֆլիսը: Դրանից հետո իրենց ենթակա կարմիր ջոկատներով մասնակցեցին Հայաստանում փետրվարյան ապստամբության ճնշմանը, <<դաշնակներից ազատագրեցին Երևանը>>: Վերջին գործողության համար երկուսն էլ պարգևատրվել են Խորհրդային Ռուսաստանի շքանշանով. *<<Ծաղր էր այդ, թէ բախտի քմահաճ պատկեր, գեներալը և գնդապետը ստացան այդ ռուս շքանշանները մի ինչ-որ վրացու ձեռքից...>>,* տե՛ս **նույն տեղում,** էջ 540:

Դրանից հետո շատ կարճ ժամանակահատված Հովսեփյանը զբաղեցրել է Լոռու զինկոմի պաշտոնը և մահացել է 1921 թ. հուլիսին, տես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին Աշխարհամարտի և Հայաստանի Առաջին Հանրապետության Տարիներին (1914-1920), Հատոր Բ (1917-1920), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին-2018, էջ 340: Կարապետ Հասան-Փաշայանը նույնպես 1921-ի հունվարին որևիցե բռնաճնշումների չի ենթարկվել, նույնպես շատ արագ անցել է հայկական բոլշևիկյան բանակի շարքերը՝ որպես գնդի հրամանատար: Հետագայում ծառայել է Խորհրդային բանակում: Գնդակահարվել է 1937-ին:

*ընթացքում, զինվորականները Հայոց աշխարհի տէր և տնօրենն էին…նոքա սկսեցին այն արիւնալից արհաւիրքը, որ դղրդալից լուծվեց Կարսի անկումով, ապա և Հայեաստանի Հանրապետութեան խորտակմամբ>>[252]:*

Հատկանշական փաստ. 1917-ին ռուսական բանակը, այդ թվում նաև կովկասյան ռազմաճակատում, ներքաշվեց քաղաքականության մեջ և մերկացրեց թուրքական ճակատը՝ մեր համար համապատասխան հետևանքներով: 1920 թ. արդեն հայկական բանակը ներքաշվեց քաղաքականության մեջ և նույնպես մերկացրեց թուրքական ճակատը՝ մեր համար կրկին աղետալի ու ավերիչ հետևանքներով:

## *9. Վերջաբան*

Նյութը շարադրելու ամբողջ ընթացքում օդում առկախվել և համառորեն չէր հեռանում հարցերի հարցը. <<իսկ կարող էր արդյոք ամեն ինչ այլ կերպ ընթանալ>>:

Ոչ, չէր կարող: Քանզի այդօրվա հայ հասարակությունը, անցյալից իր հետ բերելով հարյուրամյակների պետականություն չունենալու խիստ բացասական բեռը և այդ պահին էլ հայտնված լինելով դեռևս փաստորեն չավարտված ցեղասպանության ու հայրենազրկման մահահորում, այնպիսինը չէր, որ համախմբվեր անկախ պետականության գաղափարի շուրջ և կարողանար հենց պետականությունն ընդունել որպես իր հետագա գոյատևման միակ երաշխիկը: Այդօրվա Հայաստանի տարածքում միմյանց կողքի էին հայտնվել նույն ազգի զանգվածներ, որոնք, ոչ միայն, ինչպես ասում են,-լայն զանգվածներով, այլ նույիսկ առավել <<առաջավոր ջոկատների>>, -քաղաքական կուսակցությունների մակարդակով ունեին միանգամայն տարբեր մոտեցումներ ոչ միայն անկախ պետականության, կամ,

[252] **Նույն տեղում**, էջ 203, 437:

առհասարակ, անկախության հարցերի վերաբերյալ, այլ նույնիսկ անգամ քաղաքակրթական հարցերում, ինչը հենց դարերով պետականություն չունենալու և այդ տարբեր հատվածների՝ տարբեր իշխողների լծի տակ լինելու ուղղակի հետևանքն էր:
Պատմականորեն ստեղծված այն իրավիճակում, հայ ժողովրդի այդօրվա ունեցած պոտենցիալի պայմաններում Հայաստանի Հանրապետության կործանումը պատմականորեն անխուսափելի էր: Ամենը այլ ընթացք կունենար, եթե, առաջին հերթին, մենք լինեինք այլ: Այնպես որ այդօրվա սպայակազմի որոշակի հատվածի բանակակործան պահվածքը, հայ բոլշևիկների՝ ազգային պետականության դեմ տարած կատաղի պայքարը, ներսից պետությունը քանդողների առկայությունը և դրանց բոլորի դեմ խիստ անարդյունավետ պայքարը՝ այդ ամենը իրականում ոչ թե պատճառներն էին, այլ հետևանքն էին վերը նշված այդօրվա մեր ազգային բացասական <<հաշվեկշռի>>: Դրանք այդ հաշվեկշռով և արտաքին գործոններով պայմանավորված և ի հայտ եկող այն մեխանիզմներն էին, որոնցով արտաքին ուժերին այդ պահին առավել հեշտ էր ու հարմար վերջ տալ հայկական պետականությանը:

Հայերս մի ասացվածք ունենք, թե <<Ակոսի ծռությունը մեծ եզանից է…>>: Արդեն հարյուր տարի էլ խոսվում է, թե երկրի կառավարման ղեկը իր ձեռքը վերցրած Դաշնակցությունը <<…*չը կարողացաւ ընդգրկել պետական իդեալները և կարողութիւն չունեցաւ բարձրանալու դէպի պետականութեան անաչառ ու սկզբունքային աստիճանները …*[253]>>: Առարկելու բան չկա: Բայց այդ նույն Դաշնակցությունը հո այլ մոլորակից չէր եկել, նա նույնպես այս երկրի, այս ազգի ծնունդն էր, այդօրվա նրա ունակության ու քաղաքական ներուժի ցուցանիշներից ու դրսևորումներից մեկը: Պատմական այդ պահին էլ՝ փաստորեն միակն ու ամենահզորը: Բայց պարզվեց, որ անկախ պետություն ստեղծելու և այն պահպանելու համար այդքանը դեռևս շատ քիչ է:

Այնպես որ, այն հայ մարդիք, որոնք 1918-ի մայիսին փորձեցին վերականգնել անկախ հայկական պետականությունը, պատմական այն իրավիճակում այդ պետությունից պահպանեցին և սերունդներին փոխանցեցին այնքանը, որքանը որ կարողացան, որքանը որ հնարավոր եղավ՝ այդ օրվա մեր իրական ազգային պոտենցիալին համապատասխան: Գուցեն՝ մի բան էլ ավել…

Ինչ վերաբերում է Կարսին, ապա **<<ԿԱՐՍ>>**-ը մեզ ակնհայտ ձևով ցույց տվեց, որ այդ օրերին Կարսը իրոք որ մեր <<հագով>> չէր: Պատկերավոր ասած՝ շորը մեր համար շատ մեծ էր. մի որոշ ժամանակ թողեցին կրել, հետո մի թեթև թափ տվին և մենք միջից իսկույն ընկանք: Կարսին տիրանալու համար դեռ շատ պետք է աճենք: Իսկ այդ ճանապարհին ունենք հրաշալի մի փորձաշրջան. մեր ձեռքում պետք է պահենք

[253] **Նույն տեղում**, էջ 136:

նույնպես  բոլոր առումներով կարևոր բերդաքաղաք Շուշին և հարուստ ու կերակրող ազատագրած 12 հազար քառ. կիլոմետր տարածքը: Իսկ որպեսզի արյան գնով մեզ հասած <<շորը>> իրոք մեր հագով լինի, գոնե այսօր մեզանում պետք է վերջապես հստակ սահմանագիծ քաշել այլակարծության և պետական դավաճանության միջև և վերջապես բացառել մեզանում արդեն հարյուրամյակներ բույն դրած այն անթույլադրելի մտայնությանը, ըստ որի բացահայտ պետական դավաճանությունը ընդունվում և ներկայացվում է որպես այլ կարծիք ունենալու և այլ մոտեցում ցուցաբերելու իրավունք: Դա կարող է ընդունելի կամ հանդուրժելի լինել ցանկացած հարցում, բայց ոչ երբեք՝  անկախ պետականությունը պահել-չպահելու հարցում: Հակառակ պարագայում, ինչպես պատմությունն է ցույց տալիս, ամեն ինչ անխուսափելիորեն ավարտվում է <<ԿԱՐՍ>>-ով: